

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՄԱԿԱՐՅԱՆ ՍՈՆԱ ԱՅՎԱԶԻ

ՊԱՎԵԼ ԼԻՍԻՅՅԱՆԻ ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսություն

ԺԷ.00.02 - «Երաժշտական արվեստ» մասնագիտությամբ

արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

**Գիտական ղեկավար՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աննա ԱՍԱՏՐՅԱՆ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան.....	էջ 3
Գլուխ Ա	
Պավել Լիսիցյանի կենսագրությունը.....	էջ 10
Գլուխ Բ	
Պավել Լիսիցյանի գործունեությունը.....	էջ 60
Եզրակացություններ.....	էջ 110
Օգտագործված գրականության ցանկ.....	էջ 112
Հավելված	էջ 116

ԱՌԱՋԱԲԱՆ

«Թանկագին Հայրենակիցներ,
Հայաստանը մեկն է հին Արևելքի հզոր պետություններից, որը սակայն իր ամբողջ բազմադարեան պատմության տեղադրմանը ռազմավայր էր դարձել անվերջ մարտերի եւ օտարերկրեա զավթիչների ներխուժումներից: Մեկ ամայացուցիչ պատերազմին յաջորդում էր նորը եւ այսպիսով աւերակների էին վերածուում քաղաքներն ու գիւղերը, ոչնչացուում էր կուլտուրան, մեռնում էր աշխատունակ բնակչութիւնը:

Եւ սակայն աշխատասէր եւ հերոսական հայ ժողովուրդը յամառօրէն պաշտպանել է իր անկախութիւնը, ազգային ինքնուրոյնութիւնը եւ պահել-պահպանել է իր բազմադարեան կուլտուրան»:

Պ. ԼԻՄԻՅՅԱՆ¹

Հայ կատարողական արվեստի փայլուն ներկայացուցիչների գործունեության ուսումնասիրությունը հայրենական երաժշտագիտության կարևորագույն խնդիրներից է:

Դեռևս 1973 թվականին, բոլորելով իր հիմնադրման 15-ամյակը, ՀԽՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտը մշակում է իր հետագա զարգացման կարևորագույն փաստաթուղթը՝ «Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագիր»², որտեղ «մի կողմից՝ ամփոփվում է արվեստի տարբեր ասպարեզներում արվեստագիտական ուժերի կատարած աշխատանքը, մյուս կողմից՝ ըստ բնագավառների ուրվագծվում գիտական այն ճանապարհը, որով ընթանալու էր Արվեստի ինստիտուտն իր գործունեության հետագա քսանամյակում»³: Երաժշտագիտությանը նվիրված բաժնում կարդում ենք՝ «Նախատեսվում է գրել սովետահայ երաժշտական կատարողական արվեստի պատմությունը, այդ թվում՝ ներկայացնել դրա առանձին կողմերը՝ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի պատմությունը, հայ դիրիժորների արվեստը, նշանավոր երգիչներ Հայկանուշ Դանիելյանի, Շարա Տալանի, Գոհար Գասպարյանի, Տաթևիկ Սազանդարյանի, Ջարուհի Դոլուխանյանի և Պավել Լիսիցյանի երգարվեստը»⁴:

Եվ իսկապես՝ անուրանալի է աշխարհահռչակ հայ երգիչ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ (1956), Աշխատանքի կարմիր դրոշի և Ժողովուրդների բարեկամության շքանշանների ասպետ, Մեծ թատրոնի մեներգիչ Պավել (Պողոս) Գերասիմի Լիսիցյանի (1911-2004) կատարողական և մանկավարժական գործունեության նշանակությունը:

Պ.Լիսիցյանի բարձրակարգ արվեստը տասնամյակներ շարունակ գերել է

¹ Պավել Լիսիցյանի խօսքը իր Ամերիկահայ Հայրենակիցներուն, «Լրաբեր», Նյու-Յորք, 1960, N 3, էջ 3:

² Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:

³ **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, Երևան, 2010, էջ 70:

⁴ Նույն տեղում, էջ 72:

բազմաթիվ երկրների օպերային արվեստի սիրահարներին: Ունենալով բացառիկ գեղեցիկ, մեծ դիսպոզիցիոն ու ուժգնության ձայն, նա հավերժական հետք է թողել համաշխարհային օպերային մշակույթի պատմության մեջ: Աշխարհում ավելի քան երեսուն երկիր ծափահարել են նրան, և նրա վոկալ արվեստի փառքը տարածվել է ոչ միայն մեր հայրենիքում, այլև նրա սահմաններից դուրս:

ՄՍՀՄ ժողովրդական արտիստ, Սոցիալիստական աշխատանքի հերոս Իրինա Արխիպովայի դիպուկ գնահատմամբ. «Մեծ թատրոնի, խորհրդային վոկալ-կատարողական արվեստի պատմության մեջ հրաշալի էջ է գրել Խորհրդային Միության ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանը»⁵:

1940-1966 թվականներին լինելով Մեծ թատրոնի սոլիստ, տասնամյակներ շարունակ Պ.Լիսիցյանը եղել է «խորհրդային օպերային առաջատար երգիչներից մեկը»⁶:

Նրա օպերային լավագույն դերերգերից են Ժերմոնը՝ Վերդիի «Տրավիատա» օպերայից, Ամոնասարոն՝ Վերդիի «Աիդա» օպերայից, Էսկամիլիոն՝ Բիզեի «Կարմեն» օպերայից, Օնեգինը՝ Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայից, Մազեպան՝ Չայկովսկու «Մազեպա» օպերայից, Ելեցկին և Տոմսկին՝ Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայից, Ռոբերտը՝ Չայկովսկու «Իոլանտա» օպերայից, Գրյազնոյը՝ Ռիմսկի-Կորսակովի «Թագավորի հարսնացուն» օպերայից, կոմս դը Նևերը՝ Մեյերբերի «Հուգենոտներ» օպերայից, Կիագոն՝ Փալիաշվիլու «Դաիսի» օպերայից և այլն:

Մեծ է նրա ներդրումը հայկական օպերային արվեստում: Բավական է նշել նրա Արշակը՝ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայից, Թովմասը՝ Արտեմի Այվազյանի «Ատամնաբույժն արևելյան» օպերայից, Թաթուլը՝ Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայից, Գրիգորը՝ Հարո Ստեփանյանի «Լուսաբացին» օպերայից, Մոսին՝ Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերայից և այլն:

Պ.Լիսիցյանը հաջողությամբ է հանդես եկել նաև ժամանակակից սովետական կոմպոզիտորների օպերաներում: Մեծ թատրոնում նա Ա.Ն.Ալեքսանդրովի «Բելա» օպերայում Կազրիչի (29 նոյեմբերի, 1946), Ն.Գ.Ժիգանովի «Ջալիլ» օպերայում Անդրեի (19 հունիսի, 1959) և Ս.Ս.Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն» օպերայում Նապոլեոնի (15 դեկտեմբերի, 1959) դերերգերի առաջին կատարողն էր:

⁵ **Յակովենկո Ս.**, Պավել Լիսիցյան, դասեր մի կյանքից, Երևան, 2012, էջ 5:

⁶ **Зарубин В.** Лисициан Павел Герасимович, Музыкальная энциклопедия, том 3, Москва, 1976, стр. 283-284:

Աշխարհահռչակ տենոր Մարիո դել Մոնակոն դեռևս 1959 թվականին նշել է. «Պավել Լիսիցյանը գեղեցիկ ձայնի տեր երգիչ է: Նա նրբորեն, իսպանական ոճով է վրձնում ցլամարտիկի (Էսկամիլիոյի) կերպարը: Մեր ժամանակների օպերային բեմերում այսպիսի բարձրարվեստ երգչի դժվար է հանդիպել»⁷:

Որպես կամերային երգիչ Պ.Լիսիցյանը կատարել է ռուս կոմպոզիտորների՝ Արենսկու, Բալակիրևի, Բորոդինի, Գլազունովի, Գլինկայի, Դարգոմիժսկու, Կյուլիի, Մուսորգսկու, Ռիմսկի-Կորսակովի, Անտոն Ռուբինշտեյնի, Չայկովսկու, Ռախմանինովի երգերն ու ռոմանսները: Նրա երգացանկում են եղել նաև սովետական կոմպոզիտորների՝ Նիկոլայ Մյասկովսկու, Դմիտրի Կաբալևսկու, Դմիտրի Շոստակովիչի, Տիխոն Խրեննիկովի, Վանո Մուրադելիի և այլոց երգերն ու ռոմանսները:

Երգչի երգացանկում, բնականաբար, առանձնահատուկ տեղ է գրավել հայ երաժշտությունը. նա կատարել է Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Ռոմանոս Մելիքյանի, Ալեքսանդր Դոլուխանյանի, Կարո Զաքարյանի, Արամ Խաչատրյանի երգերն ու ռոմանսները:

Պ.Լիսիցյանը եղել է ժողովրդական երգերի անգուգական մեկնաբան: Նրա կատարմամբ հնչել են ինչպես հայկական, այնպես էլ ռուսական, հունական, բուլղարական, իրանական, չեխական, հունգարական, դանիական, ինդոնեզիական, իսլանդական, գերմանական, ֆիննական և ճապոնական ժողովրդական երգեր, որոնք կատարել է բնագրի լեզվով:

Պ.Լիսիցյանը հյուրախաղերով հանդես է եկել աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ Իրանում, Ֆինլանդիայում, Ավստրիայում, Հունգարիայում, Ռումինիայում, Բուլղարիայում, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում, Չեխոսլովակիայում, Դանիայում, Լեհաստանում, Հարավսլավիայում, Նիդեռլանդներում, Հնդկաստանում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, Հունաստանում, Բելգիայում, Ինդոնեզիայում, Իտալիայում, Իսլանդիայում:

Պ.Լիսիցյանը տիրապետել է «ձայնային լայն դիապազոնի, անբասիր ինտոնացիայի, կատարյալ առոգանության. նրա ճկուն ու գեղեցիկ ձայնը առանձնացել է

⁷ Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան – 100, Երևան, 2011, էջ 23:

հազվագյուտ թավշյա տեմբրով»⁸:

Ավելորդ չենք համարում նշել, որ 2011-ին տեղի է ունեցել Պավել Լիսիցյանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթ-փառատոնը: Իսկ վերջերս Երևանում, Մաշտոցի 46 հասցեում, տեղի է ունեցել Պ.Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի բացման արարողությունը:

Ատենախոսության գլխավոր նպատակն է Պ.Լիսիցյանի կատարողական և մանկավարժական գործունեության համակողմանի ուսումնասիրությունը: Կարևորվել են հետևյալ խնդիրները՝

- Ներկայացնել երգչի կյանքի ուղին:
- Ուսումնասիրել Պ.Լիսիցյանի գործունեությունն օպերային թատրոնում:
- Ներկայացնել հայկական օպերային դերերգերի լիսիցյանական մեկնաբանությունները:
- Ուսումնասիրել Պ.Լիսիցյանի կատարողական գործունեությունը որպես կամերային երգիչ:
- Ներկայացնել Պ.Լիսիցյանի համերգային գործունեության աշխարհագրությունը:
- Բացահայտել Պ.Լիսիցյանի մանկավարժական գործունեության առանձնահատկությունները:

Տարիներ շարունակ Պ.Լիսիցյանի գործունեությունը եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: 1973-ին լույս է տեսել Մարկ Պետրոսյանի «Պավել Լիսիցյան» աշխատությունը⁹: Նույն հեղինակի կողմից 2011-ին, երգչի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ հրատարակվել է «Պավել Լիսիցյան» երկլեզու՝ հայերեն և ռուսերեն, հուշալրամբ, որը ներկայացնում է քսաներորդ դարի մեծագույն երգիչ Պ.Լիսիցյանի կյանքն ու ստեղծագործական ուղին, ինչպես նաև ձայնագրված և տեսագրված լիսիցյանական վառ կատարումները¹⁰:

Լիսիցյանագիտության մեջ կարևոր հանգրվան է Սերգեյ Յակովենկոյի “Павел

⁸ Տեր-Միմոնյան Մ., Պավել Լիսիցյան, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 4, Երևան, 1978, էջ 624-625:

⁹ Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան, Երևան, 1973:

¹⁰ Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան – 100, Երևան, 2011, 40 էջ:

Герасимович Лисициан. Уроки одной жизни” գիրքը, որը հրատարակվել է Մոսկվայում, 1989-ին¹¹: Մասնագիտությամբ երգիչ Յակովենկոյին գրիչ վերցնելու իրավունք է տվել Պավել Գերասիմովիչի հետ բազմամյա ծանոթությունը, շաբաթներ և նույնիսկ ամիսներ տևող ամենօրյա հանդիպումները, շփումները նրա հետ և բարձր ստեղծագործական ու կենցաղային, կենսական հարցերի՝ կյանքի ու արվեստի բազում կողմերին վերաբերող քննարկումները, վստահությամբ լեցուն զրույցները, հուշ երեկոները:

Հայաստանի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Վլադիլեն Բայանի նախաձեռնությամբ և ՀՀ Մշակույթի նախարարության որոշմամբ 2012-ին լույս տեսավ Սերգեյ Յակովենկոյի՝ Պավել Լիսիցյանի մասին մենագրությունը հայերեն թարգմանությամբ՝ «Պավել Լիսիցյան. դասեր մի կյանքից»¹²:

2001-ին, երգչի ծննդյան 90-ամյակի կապակցությամբ Ռուսաստանի հայերի միությունը Մոսկվայում հրատարակել է Ռուսաստանի ժողովրդական արտիստ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Յակովենկոյի «Павел Герасимович Лисициан в искусстве и жизни. Факты, диалоги, размышления» գիրքը, որտեղ հեղինակն անկեղծ սիրով ուրվագծում է «հռչակավոր երգչի, վոկալ արվեստի դասականի, օպերային թատրոնի վարպետների մի քանի սերունդների ուսուցչի կերպարը, պատմում էրիտասարդ մենակատարների հետ նրա աշխատանքի մասին»¹³:

2008-ին Պավել Լիսիցյանի անվան բարեգործական հիմնադրամը Մոսկվայում հրատարակել է «Павел Лисициан» պատկերագիրքը՝ Ռուսաստանի ժողովրդական արտիստ, Պետական մրցանակի դափնեկիր Մարկ Էրմլերի “Выдающийся мастер” վերնագրով երկլեզու՝ ռուսերեն և անգլերեն, առաջաբանով¹⁴:

Երգչի համերգային գործունեությունը լուսաբանվել է հայկական և սփյուռքահայ, սովետական և արտասահմանյան բազմաթիվ թերթերում և հանդեսներում տարբեր լեզուներով լույս տեսած ռեցենզիաներում և համերգների բուկլետներում:

Ատենախոսության մեջ առաջին անգամ՝

➤ Գիտական շրջանառության մեջ են դրվել մի շարք արխիվային վավերագրեր, այդ թվում՝ արդեն ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ Մեծ թատրոնի մենակատար

¹¹ Яковенко С.Б. Павел Герасимович Лисициан. Уроки одной жизни, Москва, “Музыка”, 1989.

¹² Յակովենկո Ս., Պավել Լիսիցյան, դասեր մի կյանքից, Երևան, 2012:

¹³ Яковенко С.Б. Павел Герасимович Лисициан в искусстве и жизни. Факты, диалоги, размышления, Москва, Союз армян России, «Реалии», 2001, стр. 4.

¹⁴ Павел Лисициан, Москва, 2008, стр. 3-4.

Պավել Լիսիցյանի փաստաթղթերը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան էքստերն ավարտելու վերաբերյալ: Դրանք են՝ դիմումը՝ թվագրված 1960թ. նոյեմբերի 29-ով, քննական թերթիկը և պետական քննական հանձնաժողովի՝ 1960թ. դեկտեմբերի 6-ի արձանագրությունը (հանձնաժողովի նախագահ՝ Անուշավան Տեր-Ղևոնդյան) Պ.Լիսիցյանին «Օպերային երգչի» որակավորում շնորհելու մասին և այլն:

➤ Գիտական շրջանառության մեջ են դրվել ազգականներին և հարազատներին ուղղված մինչ օրս անտիպ նամակները:

➤ Գիտական շրջանառության մեջ է դրվել Պ.Լիսիցյանի զարմուհի Լիլիա Վարդանյանի անձնական արխիվում գտնվող «Star Deed EcoPlanet-Star Deed P.O Box 1491» փաստաթուղթը, որով 2001թ. դեկտեմբերի 28-ին Լիրա համաստեղության սահմաններում գտնվող նոր հայտնաբերված աստղը կոչվել է Պավել Լիսիցյանի անունով:

➤ Անդրադարձ է արվել երիտասարդ բարիտոնների միջազգային մրցույթների կազմակերպմանն ու դափնեկիրներին:

➤ Կատարվել են ճշգրտումներ Պ.Լիսիցյանի տոհմաճառի վերաբերյալ:

➤ Հայտնաբերվել են և ներկայացվել Պ.Լիսիցյանի դիմանկարները՝ կատարված հայտնի և անհայտ նկարիչների կողմից:

➤ Ճշգրտվել է և ներկայացվել Պ.Լիսիցյանի՝ որպես կամերային երգչի, ամբողջական երգացանկ:

➤ Անդրադարձ է արվել Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում հանդիսավոր պայմաններում նշված Պ.Լիսիցյանի ծննդյան 60-ամյա և գործունեության 40-ամյա հոբելյանական երեկոյին, երբ Պ.Լիսիցյանը գտնվում էր փառքի գագաթին, ինչպես նաև երգչի ծննդյան 70-ամյակի, 80-ամյակի, 85-ամյակի, 90-ամյակի և 100-ամյակի հետ կապված իրադարձություններին:

➤ Ներկայացվել է Պ.Լիսիցյանի հասարակական գործունեությունը:

Ուսումնասիրության համար *նյութ* են ծառայել Պ.Լիսիցյանի ձայնագրությունները, Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում գտնվող երգչի արխիվը (անմշակ), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի թանգարանում գտնվող երգչի արխիվը, Պ.Լիսիցյանի զարմուհիների՝ Կարինա Հախնազարովայի և

Լիլիա Ստեփանյանի անձնական արխիվը, հարցազրույցները Պ.Լիսիցյանի հարազատների, գործընկերների ու սաների հետ և այլն: Թերթել ենք նաև Պ.Լիսիցյանի համերգային և մանկավարժական գործունեության մասին մամուլի արձագանքները:

Ուսումնասիրության արդյունքները կարող են լուրջ ազդակ հանդիսանալ, որպեսզի երգչի ձայնագրություններն իրենց հաստատուն տեղը գտնեն Հայաստանի հեռուստատալիքների մշակութային ծրագրերում, ինչպես նաև ընդգրկվել հայկական կատարողական արվեստի պատմության բուհական դասընթացում: Հետազոտության արդյունքները հիմք կդառնան Պ.Լիսիցյանի մասին ֆիլմի սցենարի կազմման համար:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երկու գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, արխիվային վավերագրեր ու Պ.Լիսիցյանի դիմանկարների վերատպությունները պարունակող հավելվածից:

ԳԼՈՒԽ Ա

ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Պ.Լիսիցյանի գերդաստանի տոհմաձառը

Լիսիցյանների տոհմաձառի գրեթե բոլոր ճյուղերը տվել են նշանավոր դեմքեր: Պ.Գ. Լիսիցյանի անձնական արխիվի և Հ.Խաչատրյանի «Մի հին գերդաստան» հոդվածի¹⁵ ուսումնասիրության շնորհիվ, Ստեփան Լիսիցյանի թոռնուհի Լիլյա Վարդանյանի, Լիսիցյանների գերդաստանի ժառանգների հետ ունեցած անմիջական զրույցների ընթացքում ձեռք բերած տեղեկությունների հիման վրա փորձենք ներկայացնել Լիսիցյանների տոհմաձառը: Գրեթե բոլոր ճյուղերը տվել են նշանավոր դեմքեր:

Լիսիցյանները VIII դարավերջին Արևմտյան Հայաստանից տեղափոխվել են Մոզդոկ քաղաք և հաստատվել այնտեղ: Լիսիցյանների տոհմաձառի գրեթե բոլոր ճյուղերը տվել են նշանավոր դեմքեր: Պ.Գ. Լիսիցյանի անձնական արխիվի և Հ. Խաչատրյանի «Մի հին գերդաստան» հոդվածի ուսումնասիրության շնորհիվ, Ստեփան Լիսիցյանի թոռնուհի Լիլյա Վարդանյանի, Լիսիցյանների գերդաստանի ժառանգների հետ ունեցած անմիջական զրույցների ընթացքում ձեռք բերած տեղեկությունների հիման վրա փորձենք ներկայացնել Լիսիցյանների տոհմաձառը: Գրեթե բոլոր ճյուղերը տվել են նշանավոր դեմքեր:

Լիսիցյանները VIII դարավերջին Արևմտյան Հայաստանից տեղափոխվել են Մոզդոկ քաղաք և հաստատվել այնտեղ:

Տոհմանդամի գլխավոր ժառանգորդը՝ Քրիստափոր Լիսիցյանն ունեցել է ութ զավակ¹⁶՝ հինգ որդի՝ Դանիել¹⁷, Պողոս, Գրիգոր, Եգոր, Իվան (վաղամեռիկ, 14 տարեկան) և երեք դուստր՝ Մարգարիտ¹⁸, Շուշան¹⁹, Եղիսաբեթ:

¹⁵ Խաչատրյան Հ., Մի հին գերդաստան // «Հայրենիքի ձայն», 1967, փետրվարի, էջ 5:

¹⁶ Ըստ Հ.Խաչատրյանի՝ Քրիստափոր Լիսիցյանն ունեցել է յոթ զավակ՝ չորս որդի՝ Դանիել, Պողոս, Գրիգոր, Եգոր և երեք դուստր՝ Մարգարիտ, Շուշան, Եղիսաբեթ:

¹⁷ Դանիել Լիսիցյանն (1826-1893) ավարտել է Թիֆլիսի առաջին արական գիմնազիան, ապա Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը և վերադարձել Թիֆլիս: Ուներ գեներալի զինվորական կոչում: Նա առաջինն էր, որ Թիֆլիսում բացեց ձրի հիվանդանոց, ուր բուժվում էին աղքատները: Գեներալ Դ.Լիսիցյանը մեծ հարգանք ու հեղինակություն է վայելել ողջ Թիֆլիսում: Այդ է վկայում հետևյալը. մի անգամ քաղաքում լսում են, որ Դանիել Լիսիցյանը հիվանդ է: Թիֆլիսի քաղաքային վարչությունը խոտով ու հարդով ծածկում է Լիսիցյանի տան կողքի փողոցները, որպեսզի կառքերն անձայն երթնեկեն և իրենց աղմուկով չխանգարեն հիվանդի հանգիստը: Դ.Լիսիցյանը Գաբրիել Սունդուկյանի դասընկերն ու մտերիմն էր:

Դանիել Լիսիցյանն ունեցել է յոթ որդի՝ Քրիստափոր²⁰, Արգար, Տրդատ²¹, Իսահակ²², Ստեփան, Վարդան, Տիգրան²³ և դուստր՝ Սրբուհի²⁴ (վաղամեռիկ):

Աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (1941), Հայկական ՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1945) Ստեփան Լիսիցյանը (1865-1947) հայ մշակույթի նշանավոր դեմքերից է, մանկավարժ, բանասեր, մանկական գրող: Բարձրագույն կրթությունն ստացել է Վարշավայում: Դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Երևանի պետական համալսարանում նրա սաներն են եղել Կոմիտասը, Ավետիք Իսահակյանը, Լևոն Շանթը, Նիկողայոս Ադոնցը, Կարո Հալաբյանը, Անաստաս Միկոյանը, Հովսեփ և Լևոն Օրբելիները: Կնոջ²⁵ հետ խմբագրել է «Հասկեր» մանկական ամսագիրը (1905-1922), Հովհ.Թումանյանի և Շանթի հետ կազմել «Լուսաբեր» դասագիրքը (այբբենարան և հինգ դասարանի համար հայերեն ձեռնարկ): Ստ. Լիսիցյանը Երևանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի հիմնադիրներից է. թանգարանի ազգագրության բաժինն այժմ կոչվում է նրա անունով: Նրա անունն է կրում Երևանի թիվ 34 դպրոցը: Բանասիրական, պատմական, աշխարհագրական, ազգագրական մի շարք

¹⁸ Մարգարիտ Լիսիցյանը՝ Քրիստափորի ավագ դուստրը, ավարտել է Թիֆլիսի սուրբ Նունեի անվան միջնակարգ իգական դպրոցը: Ամուսնացել ու ապրել է Թիֆլիսում, ունեցել է վեց զավակ: Ապրել է 97 տարի:

¹⁹ Շուշան Լիսիցյանին 1835-ին առևանգել է Դաղստանի ապստամբ լեռնականների առաջնորդ Շամիլը: Սակայն գեղանի ու քաջ հայուհին չի ենթարկվել Շամիլին: Ազգականները կարողացել են ազատել Շուշանին: Ըստ Հ. Խաչատրյանի՝ Շամիլն առևանգել է Մարգարիտին: Տես Խաչատրյան Հ., նշված հոդվածը, էջ 5:

²⁰ Քրիստափոր Լիսիցյանը (1858-1881) սովորել է Պետերբուրգի բժշկական համալսարանի մինչև երրորդ կուրսը: Մահացել է երիտասարդ հասակում՝ թոքախտից:

²¹ Տրդատ Լիսիցյանն (1861-1885) օժտված էր նկարչի ու դերասանի արտակարգ ձիրքով: Նա բարեկամական կապեր է ունեցել դերասան Պետրոս Ադամյանի հետ, խաղացել է նրա հետ, նկարել նրան: Տրդատը Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայում սովորել է Գևորգ Բաշինջաղյանի հետ: Նրանք միասին եղել են սուրբ Ղազար կղզում, այցելել Ղևոնդ Ալիշանին:

²² Իսահակ Լիսիցյանն (1863-1934) ինժեներ էր, ԵՊՀ դասախոս, եղել է Վրաստան-Հայաստան բարեգործական ընդհանուր միության վարչական անդամ: Որպես ինժեներ եղել է ջրմուղի ամենախոշոր մասնագետը Անդրկովկասում: Նա է անցկացրել Թիֆլիսի, Բաքվի, Երևանի և Սուխումի ջրագծերը: Մահացել է 1934-ին, թաղված է Երևանում, Կոմիտասի ու Ավետիք Իսահակյանի կողքին: Ըստ Հ. Խաչատրյանի՝ Իսահակը մահացել է 1937- ին (տե՛ս Խաչատրյան Հ., նշվ. հոդվածը, էջ 5):

²³ Տիգրան Լիսիցյանը (1869-1890) սովորել է Օդեսայի կոնսերվատորիայի կոմպոզիտորական բաժնում, իր երեք եղբայրների պես մահացել է թոքախտից:

²⁴ Սրբուհի Լիսիցյանը (1870-1884)՝ Քրիստափորի միակ վաղամեռիկ դուստրը, մահացել է թոքախտից:

²⁵ Ստ.Լիսիցյանի կինը՝ Եկատերինա Ախաշյան-Լիսիցյանը Թիֆլիսի առաջին հայկական գիմնազիայի հիմնադիրն էր և «Հասկեր» ամսագրի պաշտոնական խմբագրուհին:

աշխատությունների հեղինակ է²⁶:

Ստեփան Լիսիցյանն ունեցել է չորս զավակ՝ Աբգար (վաղամեռիկ), Լևոն, Սրբուհի և Նազելի:

Լևոն Լիսիցյանն (1892-1921) ավարտել է Վիեննայի համալսարանը (1914), սովորել Թիֆլիսի սպայական դպրոցում (1917): Վիեննայում աշակերտել է Յոզեֆ Ստրոժիգովսկուն (1911-1914), աշխատակցել նրա «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր աշխատությանը (1918): 1914-16-ին եղել է Փախստականների օգնության կոմիտեի լիազոր ներկայացուցիչ՝ ռուս-թուրքական սահմանամերձ գոտում: Պետրոգրադում աշխատակցել է պրոֆեսոր Ն.Մառին (1916-1917), եղել Հ.Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժնի քարտուղար (1918-1920): 1920թ. դեկտեմբերից դասախոսել է ԵՊՀ-ում, նշանակվել Ս.Էջմիածնի վանքի մշակութապատմական արժեքների ազգայնացման կոմիսար, ձեռնամուխ եղել Մատենադարանի, Պատմության թանգարանի, Կուլտուր-պատմական ինստիտուտի ստեղծմանը: Զոհվել է 1921-ի փետրվարյան հակախորհրդային ապստամբության ժամանակ²⁷, փետրվարի 18-ին: Թաղվել է Էջմիածնում, 15 կոմունարների եղբայրական գերեզմանոցում:

Պատմական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, բանասեր, թարգմանչուհի, երաժշտագետ, ասմունքի վարպետ, պարերի դասատու և տեսաբան Սրբուհի Լիսիցյանը (1893-1979) վիթխարի աշխատանք է կատարել Մոսկվայի, Թիֆլիսի և Երևանի արվեստի օջախներում: Հայերենից ռուսերեն է թարգմանել Լևոն Շանթի «Հին աստվածները» որը 1915 թվականին տպագրվել է «Ռուսկայա միսլ» հանդեսում և Մ. Գորկու խմբագրությամբ լույս տեսնող «Հայ գրականության ժողովածու»-ում (1916) և Բաֆֆու «Ոսկե աքաղաղը»: 1917-ին դեկավարել է Թիֆլիսում իր հիմնած «Ասմունքի և պարի ստուդիան», ապա «Ռիթմի և պլաստիկայի ինստիտուտը»: Պարի իր անսամբլով համերգներով հանդես է եկել ԽՍՀՄ տարբեր քաղաքներում և արտասահմանում: 1930-ին Երևանում նա հիմնադրել է

²⁶ Որպես հրատարակիչ, Ստեփան Լիսիցյանը Թիֆլիսում լույս է ընծայել մոտ 200 գիրք, այդ թվում Հենրիկ Մենկևիչի «Յո երթաս»-ը՝ իր թարգմանությամբ, Վոյնիչի «Բոռը» (Լևոն Շանթի թարգմանությամբ), Կ.Մարքսի «Վարձու աշխատանքը և կապիտալը» (Ստեփան Շահումյանի թարգմանությամբ):

²⁷ Տե՛ս **Էվոյան Վ.**, Փաստաթղթեր Լևոն Լիսիցյանի մասին, ԲՀԱ, 1972, թիվ 1, էջ 183-196:

պարարվեստի դպրոց, ուր դասավանդում էր պար, ռիթմիկա, հայկական պարեր, պարարվեստի պատմություն և պարերի շարժումների գրանցման իր ստեղծած համակարգը: 1940-ին շարժումների գրանցում է պարապել Մոսկվայի Մեծ թատրոնի քալետի դերասանների հետ, 20 տարի բեմական շարժում, ռիթմիկա և հայկական պարեր դասավանդել Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտում, աշխատել Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի արվեստի, ապա՝ հնագիտության և ազգագրության ինստիտուտներ՝ որպես ավագ գիտական աշխատող: Հայաստանի և Անդրկովկասի շատ շրջաններում գրանցել է 1250 հայկական ժողովրդական պար, հավաքել ազգագրական շատ նյութեր: Ս.Լիսիցյանը հայկական պարերի մեծ գիտակ ու տեսաբան է:

Տնտեսագիտության դոկտոր Նազելի Լիսիցյանը ծնվել է 1906-ին, Թիֆլիսում: Ավարտել է Սրբուհի Լիսիցյանի ղեկավարած ռիթմի և պլաստիկայի ինստիտուտը: Երկար տարիներ եղել է պարուհի և պարի ու ռիթմիկայի դասատու: 1923-1924-ին Երևանում հիմնել է պլաստիկայի ստուդիան, ապա ավարտել Երևանի պետական համալսարանի հասարակական գիտությունների ֆակուլտետը: Մի քանի տարի աշխատել է Երևանի պետական բանկում, ապա փոխադրվել Լենինգրադ և ավարտել տեղի տնտեսագիտության ինստիտուտը: Ապրել է Մոսկվայում և աշխատել ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Նրա առանձին աշխատություններ թարմանված են օտար լեզուներով: Նազելիի ամուսինը՝ Մարտին Վարդանյանը քիմիկոս-ինժեներ էր, Մոսկվայի մոտ գտնվող Կուսկովոյի պլաստմասայի հումքի խոշոր գործարանի տնօրեն: Նազելին ու Մարտինն ունեցել են երեք զավակ՝ Արթուր, Լիլիա և Լևոն: Արթուրը ՍՍՀՄ արտաքին առևտրի իրավաբան է, Լիլիան ավարտել է Մոսկվայի համալսարանի ազգագրության բաժինը, աշխատել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում, իսկ Լևոնը սովորել է Մոսկվայի Մենդելեևի անվան ինստիտուտում:

Դանիել Լիսիցյանի մյուս որդին՝ Վարդան Լիսիցյանն (1866-1921) ունեցել է քիմիական գործարան, Թիֆլիսում զբաղվել է կոմերցիոն գործունեությամբ: Վարդանի դուստրերը՝ Թամարան (1903-1984) ու Մարին (1908-1993), Թիֆլիսում ավարտել են Սրբուհի Լիսիցյանի ղեկավարած ռիթմի և պլաստիկայի ինստիտուտը, ապա երկար ժամանակ աշխատել են որպես պարի և ռիթմի դասատուներ: Վարդան Լիսիցյանի

որդիներից մեկը՝ պրոֆեսոր Միհրանն (1913-1998) աշխատել է Մոսկվայի ճարտարապետության ինստիտուտում, եղել ինստիտուտի պրոռեկտորը: Վարդանի մյուս որդին՝ Դանիելը (1905-1944) մաթեմատիկական փայլուն ունակությունների տեր էր, հնչյունային կինոսարքերի ինժեներ, զոհվել է Հայրենական Մեծ պատերազմում:

Պողոս Լիսիցյանի՝ Քրիստափոր Լիսիցյանի որդու, զավակներից էր Գերասիմ Լիսիցյանը՝ աշխարհահռչակ երգիչ, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ (1956), ՌՍՖՍՀ ժողովրդական արտիստ (1951), Աշխատանքի կարմիր դրոշի շքանշանի ասպետ (1951), Մեծ թատրոնի մենեջերից Պավել (Պողոս) Լիսիցյանի (1911-2004) հայրը:

Պավել Լիսիցյանն ուներ չորս զավակ՝ Գերասիմ, Կարինե, Ռուզան և Ռուբեն: Գերասիմն աշխատել է Վորոնեժում որպես պետական դրամատիկական թատրոնի դերասան, Կարինեն ավարտել է Մոսկվայի կոնսերվատորիայի դաշնամուրի և երգի դասարանը (երգչուհի), Ռուզանը սովորել է Գնեսինների անվան երաժշտական ինստիտուտում (երգչուհի և տաղվահարուհի), Ռուբենը սովորել է նույն ինստիտուտում (երգիչ և թավջութակահար):

Լիսիցյանական տոհմաձառը այսօր էլ դեռևս շարունակում է իր արմատները զցել:

Կարինա Լիսիցյան (1938) երգիչուհի (մեցցո-սոպրանո), վոկալ մանկավարժ, Ռուսաստանի վաստակավոր արտիստուհի, պրոֆեսոր: Ունի մեկ դուստր՝ Եկատերինա Շարապովա²⁸:

Գերասիմ Լիսիցյան (1943) - թատրոնի և կինոյի դերասան, բանաստեղծ և ընթերցող: Ունի մեկ դուստր՝ Լենա Լիսիցյան և մեկ որդի՝ Պավել Լիսիցյան²⁹:

Ռուբեն Լիսիցյան (1945) - երգիչ (տենոր), վոկալ մանկավարժ, Ռուսաստանի վաստակավոր արտիստ, պրոֆեսոր, Քյոլնի՝ Գերմանո - ռուսական մշակութային-կրթական ակադեմիայի նախագահ: Ունի մեկ դուստր՝ Բարբարա Լիսիցյան³⁰:

Ռուզաննա Լիսիցյան (1945) - երգիչուհի (սոպրանո), վոկալ մանկավարժ, Ռուսաստանի վաստակավոր արտիստուհի, պրոֆեսոր (Եկատերինա Շարապովայի դասարան): Ունի մեկ որդի՝ Պավել Ալեքսանդրի Վլադիսլավլև, վերջինս նույնպես ունի

²⁸ Կարինե Լիսիցյանի մասին տես ինտերնետային հղում http://ru.hayazg.info/Лисициан_Карина_Павловна

²⁹ Գերասիմ Լիսիցյանի մասին տես ինտերնետային հղում <http://www.kino-teatr.ru/kino/acter/m/sov/21180/bio/>

³⁰ Ռուբեն Լիսիցյանի մասին տես ինտերնետային հղում http://ru.hayazg.info/Лисициан_Рубен_Павлович

մեկ որդի՝ Ալեքսանդր Պավելի Վլադիսլավլև³¹:

Իզաբելլա Լիսիցյանը՝ Գերասիմի եղբոր՝ Նիկիտայի դուստրը, ավարտել է Լենինգրադի կոնսերվատորիան, երեւել Կիրովի անվան օպերային թատրոնում: Հրավիրվել է Երևան: «Ալմաստ» օպերայում Ալմաստի դերերգի առաջին կատարողն է: Մահացել է 1941-ին:

Թամար Լիսիցյանը (1896-1956) - Քրիստափոր Լիսիցյանի որդու՝ Գրիգորի դուստրը, երգչուհի էր և դաշնակահարուհի: Երգել է Երևանի օպերայի և բալետի թատրոնում, ապա դասավանդել երգեցողություն և դաշնամուր:

Թամար Լիսիցյանը Նիկիտայի և Գերասիմի եղբոր՝ Նիկոլայի դուստրն է: Իտալիայի կոմունիստական կուսակցության ղեկավար Լուիջի Լոնգոյի որդու կինն էր: Հայրենական պատերազմի ժամանակ ընկել է ֆաշիստական ճամբար, փախել այնտեղից, միացել պարտիզաններին և կռվել գերմանացիների դեմ: Դիպուկահարի նրա համբավը տարածվել էր պարտիզանական ջոկատներում: Պատերազմի ավարտից հետո Թամարն ավարտել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտը, աշխատել «Մոսֆիլմում որպես կինոռեժիսոր: Հաճախ է այցելել Հայաստան:

Հին գերդաստանի ավանդները պահպանվում են սերնդե-սերունդ: Լիսիցյանների բոլոր տոհմանդամներն իրենց բաժինն են բերում հայ մշակույթին:

Դեռևս 1973-ին Մարկ Պետրոսյանը Պավել Լիսիցյանին նվիրված գրքում հիշատակում է Պ.Լիսիցյան անհատի, նրա բացառիկ տեսակի, տաղանդի, սովորությունների, անցած ուղու, կենսակերպի ու ապրելակերպի մասին: Հեղինակը կարևորել է այն հանգամանքը, որ Պավել Լիսիցյանի հայրը՝ Գերասիմ Լիսիցյանը, հայրենասիրական մղումներից դրդված, որդուն դեռևս երիտասարդ տարիքում ուղարկում է Վլադիկավկազից ոչ հեռու գտնվող Մադոնյան հանքերում հանքափոր աշխատելու: Այդ տարիներին՝ 1920-30-ականներին, նոր-նոր ձևավորվող սովետական կարգերը, բանվորա-գյուղացիական դասակարգը, սոցիալ-տնտեսական իրավիճակը հանրությանը նոր մտածելակերպ, նոր պահանջներ ու կենսակերպ էին թելադրում, հետևաբար Պավելի հայրը փորձում էր որդուն այս կերպ չմեկուսացնել այդ հասարակարգից:

³¹ Ռուզաննա Լիսիցյանի մասին տես ինտերնետային հղում <http://ru.hayazg.info/Лисициан> _Рузанна_ Павловна

Վերջերս Պավել Լիսիցյանի զարմուհու՝ Կարինե Հախնազարովայի հետ ունեցած անձնական հանդիպման ընթացքում նա ինձ հանձնեց տարիներ շարունակ խնամքով փայփայած մի նամակ, որտեղ հառնում է Պ.Լիսիցյանի մարդասիրական, բարոյական նկարագիրը: Ասել է թե, անգամ տարիների հեռվից նյութական դառնություններ ու զրկանքներ տեսած, սակայն այդ ամենը հոգում չկուտակած Պ.Լիսիցյանը բարեգործությունն ու մերձավորին սիրելու և անսակարկ նվիրաբերվելու զգացումն իր համար դարձրել է սկզբունք:

Ներկայացնում եմ նամակի բովանդակությունը հայերեն թարգմանությամբ³²:

«Իմ սիրելի, թանկագին քույրիկ, վաղուց քեզ նամակներ չէի գրում և սահմանափակվում էի զանգերով: Ապրիլի 10-ին իմ աշակերտներից երկուսը՝ Հայկը և Տիգրանը³³, գալիս են Երևան, և ես խնդրել եմ նրանց, որ 1000 ռուբլին, որը փոքրիկ կապոցի մեջ է, օգտագործես անձնական ծախսերի համար: Ես գիտեմ, թե ինչ դժվար էք ապրում Երևանում: Այս եղբայրները հրաշալի ձայնի տեր են և Հայաստանից ստանում են իմ անվամբ՝ 200 ռուբլի կրթաթոշակ: Նրանք սովորում են Մոսկվայում, պրոֆեսոր Արթուր Էյզենի դասարանում, ևս աշխատում եմ նրանց կատարելագործելու ուղղությամբ: Հոյակապ ընտանիքից են և ես ուրախ եմ, որ կարող եմ նրանց օգնել: Փառք Աստծո, Մարոչկան արդեն իրեն լավ է զգում, սակայն հոդերն իրենց զգացնել են տալիս, հատկապես՝ առավոտյան: Ես հունիսին պատրաստվում եմ գնալ Շվեյցարիա: Պետք է ժննդում տեղեկանամ, արդյո՞ք ռուս-շվեյցարական բանկում մեր անվամբ ներդրված ավանդը պահպանվել է: Ինձ այնտեղ Աբգարը և Տրդատն են սպասում, ովքեր 80 տարեկան են և նրանք հնարավոր է կարողանան օգնել գտնել այն բանկը, որը որձեղ է Վլադիկովկասում դեռևս 1912թ.-ից մինչև 1918թ.-ը: Եթե իրավաբանների օգնությամբ ինձ հաջողվի գտնել այդ ավանդները, ուրեմն իմ ճանապարհորդությունը զուր չի անցել: Այստեղ, Մոսկվայում, իմ ընկերները փորձում էին տեղեկություններ ստանալ այդ ավանդների վերաբերյալ, սակայն ապարդյուն, և ես ստիպված եմ գնալ Ժնև, որտեղ իմ զարմիկներն են ապրում: Հիմա մի փոքր պատմեմ իմ ընտանիքի մասին: Իմ սիրելի Գարիկը շատ գոհ է, որ աշխատում է նկարիչ-դիզայների արվեստանոցում, ինչպես նաև ռուսական թերթերից մեկում հոդվածներ է գրում: Ռուբիկը սպասում է Գերմանիա

³²Հախնազարովա Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհին), անձնական արխիվ, նամակը գիտական շրջանառության մեջ է դրվում առաջին անգամ: Տե՛ս հավելված [3] (№1,№2):

³³Խոսքն ամենայն հավանականությամբ երգիչներ Տիգրան և Հայկ Մարտիրոսյանների մասին է:

մեկնելու փաստաթղթերին: Ռուզաննան և Կարինան գնում են Աստրախան՝ համերգների: Երեկ Գոհարիկը հյուրնկալվել է Ռուբիկի մոտ: Բոլորին բարևներս ու համբույրներս: Մարոչկան քեզ ամուր համբուրում է: Գրկում և համբուրում եմ, քո եղբայր»³⁴:

1.2. Պ.Լիսիցյանի կյանքի ուղին

Պավել (Պողոս) Գերասիմի Լիսիցյան ծնվել է 1911 թվականի նոյեմբերի 6-ին, Հյուսիսային Կովկասի Վլադիկավկազ (Օրջոնիկիձե) քաղաքում:

Պավել Լիսիցյանի ծնողները Արևմտյան Հայաստանից Վլադիկավկազ էին եկել սուլթան Համիդի սանձազերծած հայահալած քաղաքականության հետևանքով մագապուրծ առաջին կոտորածներից³⁵:

Հայրը՝ Գերասիմ Պողոսի Լիսիցյանը, հորատող վարպետ էր, մայրը՝ Սրբուհի Մանուկի Գազազյանը, իր ամուսնու՝ Գերասիմի հետ միասին երգում էին սուրբ Գրիգոր Լուսավորիչ³⁶ հայկական եկեղեցու երգչախմբում:

Պ.Լիսիցյանի ծնողները մշտապես իրենց տանը կազմակերպում էին երաժշտական, թատերական երեկոներ և հյուրընկալում հաճախակի ելույթ ունեցող արվեստագետների, ովքեր հյուրախաղերով գալիս էին Վլադիկավկազ: Փոքրիկ Պողոս Լիսիցյանը նվագում էր թավջութակ, դաշնամուր և շատ էր սիրում ժամերով երգել ու երգել:

Սակայն Պ.Լիսիցյանի ծնողները չէին էլ կարող պատկերացնել, որ իրենց որդին, որը ծնողների կարծիքով նման չէր հրաշամանուկի, մի գեղեցիկ օր կդառնա աշխարհահռչակ, սիրված ու ճանաչված օպերային երգիչ:

Պ.Լիսիցյանի առաջին հանրային ելույթը տեղի է ունեցել 1920 թվականին, ինը տարեկանում, Վլադիկովկասյան դրամատիկական թատրոնի բեմում. հայկական հրապարակային համերգում նա երգում էր կոմպոզիտոր Ա.Մանուկյանի «Ջրկիր» երգը:

Տասնհինգ տարին լրանալուն պես՝ իննամյա դպրոցը ավարտելուց հետո, Պ.Լիսիցյանը թողնում է ծնողական տունը և 1927 թվականին Վլադիկավկազի մերձակա Մադոնյան հանքերում սկսում բանվորական որակավորման աշխատանքները:

1928-ին Բաթումում Լիսիցյանը Ալմաստա-հորատողական վարպետի օգնական է:

³⁴ Հախնազարյան Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհին), անձնական արխիվ, 1973 թ., անտիպ:

³⁵ Տե՛ս Մի ամբողջ օր Լիսիցյանի հետ, «Ավանգարդ», Երևան, 28 հոկտեմբերի, 2011, էջ 3:

³⁶ <http://www.noev-kovcheg.ru/mag/2013-10/3859.html>

1929 թվականին մեկնում է Ախալքալաք՝ Թափառավան շէկ-ի շինարարությունում արդեն հորատող վարպետ և միաժամանակ ժողովրդական երգչախմբի մենակատար:

Տասնութամյա Պ.Լիսիցյանի յուրահատուկ ձայնը չէր կարող աննկատ մնալ, և Թիֆլիսի երկրաբանական վարչության ղեկավարը նրան է հանձնում Լենինգրադի կոնսերվատորիայի բանֆակի ուղեգիրը:

«Պավել Լիսիցյանը առաջին անգամ Լենինգրադը տեսել է 30-ականներին: Հորատման վարպետ Պավել Լիսիցյանը եկել էր Կովկասից Նևայի ափ, կոնսերվատորիայի բանֆակի ուղեգրով: Լեռնային վայրից եկած երիտասարդին քաղաքը հմայեց ազատ հրապարակներով և պողոտաներով, կենսախինդ փողոցներով, հոյակերտ հուշարձաններով և պալատներով»³⁷:

Հերթափոխից հետո եթե ոմանք շտապում էին տուն՝ ծանր աշխատանքից հանգստանալու, ուժերը վերականգնելու, ապա Պ.Լիսիցյանը շտապում էր կոնսերվատորիա՝ պարապունքներին մասնակցելու: Ավելին, նա անգամ ժամանակ էր գտնում թատրոններ հաճախելու:

Սերը դեպի բեմական արվեստը նրան տարավ Մեծ դրամատիկական թատրոն: Երիտասարդին ընդունեցին որպես ստատիստ՝ նրա համար դա մեծ երջանկություն էր: Իրավունք էր ստացել ներկա գտնվելու բոլոր ներկայացումներին, հիանալ Սոֆրանովի, Պոլիցեյմանկոյի, Օ.Կազիկոյի և ամենասիրելի Ա.Մոնախովի վարպետությամբ: Ապշեցնում էր այդ դերասանի վերափոխման արվեստը, ով միննույն համոզությամբ խաղում էր հնարամիտ Տրուֆալդինոյին «Երկու տերերի ծառայում» և ազնվազարմ դոն Կարլոսին: Ընդ որում, նա հրաշալի երգում էր կիթառի նվագակցությամբ: Այդ ներկայացումները Պ.Լիսիցյանի համար դասեր էին: Այստեղ ապագա երգիչը հասավ այն իրողությանը, որին հավատարիմ մնաց ողջ կյանքում. կարևոր է ոչ միայն լավ երգել օպերային դերերգը, այլև հերոսի արտահայտիչ կերպար ստեղծել: Պ.Լիսիցյանը հպարտությամբ էր հիշում այն օրը, երբ իրեն՝ շարքային ստատիստին, հանձնարարեցին երգել Ա.Պուշկինի «Գիշերային զեփյուռ» բանաստեղծության հիման վրա Յու.Շապորինի գրած ռոմանսը:

Բանֆակից հետո Պ.Լիսիցյանն ընդունվեց երաժշտական տեխնիկում, իսկ 1932-

³⁷ Сагир Т. Концерт семьи певцов, “Вечерний Ленинград”, 16 февраля, 1972, стр. 3.

ին, երբ կանոնավոր կերպով վերսկսում է իր երգեցողության պարապմունքները մանկավարժ Մարիա Միխայիլի Լևիցկայայի, հետագայում ուրիշ մանկավարժի՝ Ջոյա Ստանիսլավի Դոլսկայայի մոտ, դառնում է Լենինգրադյան Երիտասարդական օպերային թատրոնի առաջին մենակատարը:

Օպերային թատրոնում նրա առաջին ելույթը Ջ.Ռոսինիի «Սևիլյան սափրիչ» օպերայում կոմս Ալմավիվի ծառա Ֆիորելլոյի փոքրիկ դերերգն էր: Մեծ էր երգչի ուրախությունը, երբ նա կարդաց «1933թ. մարտի 22-ին տպագիր գրախոսականը՝ Լենինգրադյան երիտասարդական «Смена» թերթի քննադատի գրված կարծիքում, «Ականջներիդ չես հավատում, երբ լսում ես Ֆիորելլոյի էպիզոդիկ դերերգի թարմ, երիտասարդ, հիշվող ձայնով հստակ կատարումը»³⁸:

Լենինգրադի ակադեմիական Փոքր օպերային թատրոնում աշխատանքի տարիները, որոնք կոչվում էին «սովետական օպերայի լաբորատորիա»³⁹, հիանալի դպրոց դարձան արտիստի համար: Այնուհետև հրավեր եղավ հարազատ Հայաստան, հաջողություն Մոսկվայում, հայկական մշակույթի և գրականության տասնօրյակում, այնուհետև հրավեր Մեծ թատրոն, որի հետ կապվեց նրա ստեղծագործական ճակատագիրը:

Կոնսերվատորիայում իր ուսումը Պ.Լիսիցյանը համատեղում է Մեծ դրամատիկ թատրոնի աշխատանքի հետ, որտեղ նա հանդես է գալիս որպես երգիչ և կարճ դերերի կատարող: Միաժամանակ նա ստանում է դերասանական վարպետության առաջին դասերը: Եվ հենց այստեղ էլ ձևավորվում է Պ.Լիսիցիանի մշակութային կյանքը:

Երիտասարդ արտիստի արտասովոր վոկալ տվյալները գրավում են Լենինգրադի երիտասարդական օպերային թատրոնի ուշադրությունը:

1935 թվականին Լենինգրադյան փոքր օպերային թատրոնի թատերախմբի բաց մրցույթում Պ.Լիսիցիանը դառնում է թատրոնի մենակատար: 1937 թվականին Լիսիցյանին հրավիրում են Երևան՝ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում գլխավոր դերերգեր կատարելու: Դասական և ժամանակակից ներկայացումներում Պ.Լիսիցյանը հանդես է գալիս տասնհինգ դերերգերով: Նրա յուրահատուկ ձայնի, երգեցողության, բեմական հիանալի արտիստիկ կեցվածքի, բարձր

³⁸ **Յակավենկո Ս.**, Պավել Լիսիցյան, էջ 17:

³⁹ **Сагир Т.** Концерт семьи певцов, “Вечерний Ленинград”, 16 февраля, 1972, стр. 3.

և հասուն վարպետության մասին համբավը տարածվեց ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Անդրկովկասում:

1937 թիվը նոր փոփոխություններ բերեց Լիսիցյանի արտիստական ճակատագրում:

«Սակայն երգչին առանձնահատուկ հաջողություն բաժին հասավ 1939թ. հոկտեմբերին Մոսկվայում կայացած Հայկական արվեստի տասնօրյակի օրերին, որի կազմակերպիչները հոգ էին տանելու այն մասին, որ տաղանդավոր ժողովրդի առավել շնորհալի որդիներն ու դուստրերը փայլեն իրեց վարպետությամբ: Երգիչը գլխավոր պարտիաների հրավեր է ստանում Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերային և բալետի թատրոնից: Հայաստանում նա տասնհինգ պարտիաներ կատարեց դասական և ժամանակակից ներկայացումներում. Եվգենի Օնեգինի, Վալենտինի, Տոմսկու և Ելեցկու, Ռոբերտի, Տոնիոյի և Սիլվիոյի, Մորալեսի և Էսկամիլիոյի, ինչպես նաև Միտկայի և Լեսնիցկու՝ Ջերմինսկու «Խաղաղ Դոնում», Թաթուլի՝ Սպենդիարյանի «Ալմաստում», Մոսիի՝ Ա.Տիգրանյանի «Անուշում», Թովմասի՝ Ա.Այվազյանի «Ատամնաբույժն արևելյանում», Գրիգորի՝ Հ.Ստեփանյանի «Լուսաբացին» օպերաններում»⁴⁰:

Երգարվեստի ասպարեզում լինում են բացառիկ դեպքեր, երբ անհատին տրվում է աստեղային ժամը վայելելու պարզև: Առավելապես, երբ այդ շնորհը ճանապարհ է հարթում դեպի «մեծ դռներ»:

1940-ը հաջողության տարի էր Պ.Լիսիցյանի համար: Եթե Խորհրդային Միության մայրաքաղաք Մոսկվան աշխարհին իր մշակութային արժեքները ներկայացնելու համար որպես չափանիշ ուներ Մեծ թատրոնը, ապա այդ նույն թատրոնը իր լայն դռներն էր բացել արդեն իսկ 1939-ին ՀԽՍՀ վաստակավոր արտիստի կոչմանն արժանացած, ճանաչված ու սիրված բարիտոն՝ Պավել Լիսիցյանի առջև:

1940 թվականի դեկտեմբերին նա դառնում է ԽՍՀՄ Մեծ թատրոնի օպերային մենակատար, որտեղ նա առաջին անգամ հանդես է գալիս Պ.Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում Օնեգինի դերերգով: Խորհրդային Միության այդ տարիների պատերազմական վիճակն անգամ նրա հաջողությունների, առաջընթացի և ձեռքբերումների գործում նույնիսկ խոչընդոտ չհանդիսացավ: Հաջողությունները մշտապես ուղեկցում էին Պ.Լիսիցյանին:

⁴⁰ **Յակավենկո Ս.**, Պավել Լիսիցյան, էջ 19-20:

«Իմ ստեղծագործական գործունեությունը արդեն 36 տարեկան է, որը սկսվել է Լենինգրադի Փոքր օպերային թատրոնում, այնուհետև Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնում, և վերջապես 1940 թվականին Մեծ թատրոնում,»⁴¹, - ասում էր Պավել Գերասիմովիչը:

Պատահական չէ, որ Մեծ թատրոնը Պ.Լիսիցյանի համար համարվել է երկրորդ տուն, և նա իր ստեղծագործական կյանքի կեսդարյա պատմությունը կերտել է իր համար հարազատ թատրոնում:

Ի դեպ, Պավել Լիսիցյանի համար մեծ հպարտություն է եղել աշխատել այնպիսի դիրիժորների հետ, ինչպիսիք են Մեծ թատրոնի գլխավոր դիրիժոր Ս.Սամոսուդը (1936-1943), Կ.Կոնդրաշինը (1943-1956), Բ.Խայկինը (1954-1967), Մ.Էրմլերը (1956-2001), Ա.Ժյուրայտիսը (1960-1984), Ա.Կոպիլով (1962-1988), Ֆ.Մանսուրով (1969-1989), Օ.Դմիտրիադի՝ (1965-1973), Ա.Լազարևը (1987-1995), Յու.Սիմոնովը (1970-1985), որոնք լուրջ հեղինակություն են եղել Մեծ թատրոնի համար:

ԽՍՀՄ Պետական ակադեմիական Մեծ թատրոնը համարվում է ռուսական մշակույթի հպարտությունը: Իր գործունեության ընթացքում այն ռուսական օպերային և բալետի արվեստի կենտրոնն է եղել: Հանդիսատեսից շատերի համար Մեծ թատրոնի յուրաքանչյուր ներկայացում մշտապես տոն, հիացմունքի առարկա է եղել: Մեծ թատրոնի համբավը վաղուց արդեն դուրս էր եկել Ռուսաստանի սահմաններից:

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո հեղափոխական գաղափարներով հագեցած Մեծ թատրոնը մտավ թարմացումների և իրական ծաղկունքի ժամանակաշրջան: Երաժշտության և պարի դասական արվեստը հասանելի դարձավ միլիոնավոր աշխատավորների: Հանրահայտ բեմում ստեղծվեցին հեղափոխական պատմությունները՝ ռուս ժողովրդի, ժամանակակից հերոսների վառ կերպարները... «Մերոնդները միշտ էլ սիրել և սիրում են հաճախել Մեծ թատրոն, շփվել մշակույթի բարձրագույն արժեքների, տեղական և արտասահմանյան երաժշտության գանձերի հետ: Նրանք իրական հաճույք են զգում Մեծ թատրոնի տաղանդաշատ դերասանների հրաշալի արվեստից: Մեծ թատրոնը հանդիսանում է բարձր մասնագիտական դպրոց Միության բոլոր երկրների դերասանական կազմի համար: Պատահական չէ, որ Ձեր

⁴¹ **Забиякин Е.** Декада русской культуры в Таджикистане. “Таджикистан”, 14 апреля, 1967, стр. 3.

թատրոնն անվանում են Հանրային երաժշտական մշակույթի ակադեմիա»⁴²:

«Մեծ թատրոնի համբավը համընդհանուր ճանաչում ունի: Ազգերի, հումանիզմի, առաջընթացի գաղափարները, որոնք կրում են դրա արվեստը, երախտագիտության արձագանք են գտնում ողջ աշխարհի հանդիսատեսի և ունկնդիրների սրտերում», - այսպիսի բառերով է բնութագրել Մեծ թատրոնի դերը ռուսական և սովետական արվեստում Լ.Ի.Բրեժնևը: Մեծ թատրոնի շենքը դասվում է աշխարհի տեսարժան վայրերի թվին: Բացառիկ է նրա քաղաքաշինական նշանակությունը մեր մայրաքաղաքում:

Ճարտարապետի համար, ով կառուցում է թատրոնը, ոչ պակաս կարևոր խնդիր է նաև շինության գեղարվեստական հատկությունների համապատասխանեցումը որոշակի ճարտարապետական լուծումների հետ: Այսպիսով, Մոսկովյան գեղարվեստական ակադեմիական թատրոնի գուսպ, «կամերային» ոճին ներդաշնակ, հանդիսատեսի համար գունային ճիշտ ընտրությամբ կատարված դահլիճի ճարտարապետությունը և դրա ոչ մեծ չափերը լավագույնս համապատասխանում են հոգեբանական դրամատիկական ներկայացման ժանրին: Մեծ թատրոնի վեր խոյացող ճարտարապետությունը շատ անգամ նպաստում է օպերային և բալետի պատկերավոր տեսանելիությանը:

Մեծ թատրոնի դահլիճում կարող է տեղավորվել ավելի քան 2 հազար հանդիսատես, ինչը բավարար քանակ է օպերային թատրոնի համար: Տարողունակության մեծացումը բերում է ձայնի հնչողության բարձրացման:

Մեծ թատրոնի շենքը ոչ միայն ռուսական երաժշտական մշակույթի օրրանն է, այլև հայտնի մշակութային շինություն, որը կապված է Սովետական Միության կարևորագույն իրադարձությունների հետ: Այստեղ բազմիցս ելույթ է ունեցել Լենինը, իսկ 1922-ին Մեծ թատրոնում տեղի է ունեցել պրոլետարական հեղափոխության առաջնորդի վերջին ելույթը:

«Մեծ թատրոնի շինարարության պատմությունը «սպիտակ բիծ» չի հանդիսանում ռուսական ճարտարապետության պատմության մեջ: Այս թեման մասնակի լուսաբանում է ստացել Օ.Չայանովայի, Վ.Գերնգրոսս-Վսեվոլոդսկիի, Վ.Կալլաշի, Վ.Սմիրնովի և մշակութային այլ պատմաբանների աշխատանքներում: 1955 թվականին

⁴² Либсон В., Кузнецова А. Большой театр СССР, Москва, 1982, стр. 6.

լույս է տեսել Յու.Դ.Խրիպունովի «Մեծ թատրոնի ճարտարապետությունը» աշխատությունը, որը ամփոփել է հեղինակի հետազոտությունները, սակայն թատրոնի կյանքի վերջին տասնամյակները, երբ մի շարք աշխատանքներ են տարվել շինության վերակառուցման և վերանորոգման հարցում, դեռ տպագրական արտացոլում չեն ստացել»⁴³:

Հայրենական մեծ պատերազմից հետո Մեծ թատրոնի գործունեության ծավալները զգալիորեն մեծացել են: 1961 թվականից ներկայացումները տեղի են ունենում միաժամանակ աշխարհի երկու ամենամեծ բեմերում՝ Մեծ թատրոնում և Կրեմլյան պալատում:

Ավելի քան երկու դարյա պատմություն ունեցող Մեծ թատրոնի շենքն այսօր էլ դեռ համարվում է երիտասարդ և հիասքանչ: Այն դերասանների, երաժիշտների, գեղարվեստական ղեկավարների մի քանի սերնդի աշխատանքի արդյունքն է: Նրանց գործունեությունը լայնածավալ լուսաբանվում էր: Սակայն սա նաև հազարավոր աշխատակիցների, ճարտարագետների, տեխնիկական և այլ աշխատողների հոգատար վերաբերմունքի և նվիրվածության արդյունքն է, այն մարդկանց, որոնց մասին գրեթե չեն գրում և չեն լուսաբանում:

1941 թվականի ապրիլի 15-ին Մեծ թատրոնը դադարեցրեց իր գործունեությունը՝ վերանորոգման աշխատանքների պատճառով: Անգամ երկու ամիս անց սկսված Հայրենական Մեծ պատերազմը չի խոչնդոտել այդ աշխատանքները:

Հոկտեմբերին Մեծ թատրոնի աշխատակազմը տեղափոխվել է Կույբիշև: Մոսկվայում մնացած դերասանական խմբի մի մասը շարունակում էր աշխատել մասնաճյուղում: Ներկայացումները տեղի էին ունենում ցերեկվա ժամերին և ժամանակ առ ժամանակ ընդհատվում էին օդային հարձակման տագնապներով: Սակայն թատրոնը մշտապես մարդաշատ է եղել: Հանդիսատեսը մեծ ոգևորությամբ էր ընդունում դասական օպերաներն ու բալետները:

Հոկտեմբերի 28-ին, ժամը 16-ին, Մեծ թատրոնի շենքի վրա ֆաշիստական ինքնաթիռից ռումբ է ընկնում, որը վնասում է ճակատային պատը և պայթում ընդունարանում: Պայթյունի պիքը քանդում է ճակատային ողջ դեկորատիվ կառուցվածքը: Վնասվում է նաև դահլիճը:

⁴³ Նույն տեղում, էջ 7:

1941 թվականի աշնանը, չնայած դժվար իրավիճակին, մարտերը շարունակվում են Մոսկվայում, սակայն Մեծ թատրոնի շենքում ակտիվ վերակառուցողական աշխատանքներ են սկսում:

Մեծ թատրոնում լարված ստեղծագործական աշխատանք է գնում, վերսկսվում են ներկայացումները, որտեղ ընդգրկվում են նոր երիտասարդ կատարողներ: 1919 թվականից թատրոնը կոչվում է ակադեմիական:

«Բեմը միշտ արդիական է հանդիսատեսի համար և մշտապես արտացոլում է կյանքի այնպիսի իմաստ, որը ուզում է տեսնել հանդիսատեսը»⁴⁴, -նշում է Ա.Գերցենը: Մեծ գրող-դեմոկրատը նկատի ուներ հանրային ընկալումն ու զգացողությունը թատրոնի հանդեպ, նրա արձագանքն ու պահանջները թատրոնից:

Ն.Գոգոլը գտնում էր, որ «թատրոնը որպես արվեստի ճյուղ, որպես հզոր բաժին, որով կարելի է աշխարհին բարին ավետել, մարդկանց մեջ սերմանել անաղարտ սեր»⁴⁵, բոլոր հանրահայտ ռուս գործիչները՝ Վ.Բելինսկուց մինչև Կ.Ստանիսլավսկի և Մ.Գորկի, նույնպես բարձր էին գնահատում թատրոնը:

Մոսկովյան Մեծ թատրոնին է պատկանում ժողովրդական երաժշտական-բեմական մշակույթի կերտման հիմնադրի կոչումը: Որպես պետրովյան նոր Ռուսաստանի հզոր արձագանք, Ա.Ռադիշևի և Ս.Պուգաչովի, Մ.Լոմոնոսովի և Ի.Նովիկովի, Դ.Ֆոնվիզինի և Ի.Կոռնիլովի դարաշրջանում, ռուսական թատրոնը սկսեց ծառայել իր ժամանակի գաղափարներին: Դա նրան թույլ տվեց զբաղեցնել կարևոր տեղ ժողովրդի ազգային կյանքում, սերմանելով հայրենասիրական զգացմունքներ և առաջացնելով ատելություն բռնության հանդեպ:

Դրանում է օպերային թատրոնի գաղտնիքն ու արտառոց գրավչությունը հայրենական կոմպոզիտորների համար: Կարելի է վստահաբար ասել, որ օպերային բեմը միշտ եղել է նրանց ուշադրության կենտրոնում, ստեղծագործելու, իմաստավորելու բազմաթիվ գաղափարական, գեղարվեստական արժեքներ իրագործելու առումով: Օպերային թատրոնի համար ստեղծվել են ռուսական դասական երաժշտության առաջին գլուխգործոցները՝ Մ.Գլինկայի «Իվան Մուսանին» և «Ռուսլան և Լյուդմիլա» օպերաները, երաժշտական-դրամատիկ ժանրերին է նվիրվել Պ.Չայկովսկու (տասը

⁴⁴ Նույն տեղում, էջ 81:

⁴⁵ **Грошева Е.** Большой театр Союза СССР, Москва, 1978, стр. 6.

օպերա և երեք բալետ), Ա.Բորոդինի, Ա.Սերովի, Յ.Կյուի, Ա.Ռուբինշտեյնի և այլ հեղինակների ստեղծագործական ժառանգության գերակշիռ մասը:

«Ժողովրդի սերը երաժշտական թատրոնի հանդեպ ոգեշնչում էր նաև խոշորագույն ռուս երգիչներին, ովքեր ձգտում էին «զրուցել հանդիսատեսի հոգու հետ»⁴⁶, - ասել է Բ.Սոբինովը:

Օպերային բեմի գեղարվեստական նկարիչները մշտապես պայքարել են հայրենական կոմպոզիտորների հետ միասին ազգային մշակույթի ձևավորման հարցում, որի հետ սերտորեն կապված են ռուսական վոկալի և պարային բեմականացումների գաղափարական մոտեցումներն ու հեռանկարները: Ռուսական երաժշտության իրական նորարարությունը, դրա ազդեցության ուժը ողջ աշխարհին ստիպեցին զուլիս խոնարհել Ֆեոդոր Շալյապինի և Աննա Պավլովայի, Պավել Լիսիցյանի, Նադեժդա Օբուխովայի, Մերգել Լեմեշևի և այլոց առջև:

ԽՍՀՄ Մեծ թատրոնի միջազգային ճանաչումն այսօր ավելի մեծ է, քան երբևէ: Սակայն Մեծ թատրոնի գլխավոր ձեռքբերումն այսօր էլ հանդիսանում է սովետական, այնուհետև՝ ռուսական, բալետի և օպերային մշակույթի զարգացմանը ցուցաբերած ակտիվ մասնակցությունը: ԽՍՀՄ Մեծ թատրոնի նշանակությունը ժողովրդի կյանքում թույլ է տալիս այն կոչել սովետական երաժշտա-բեմական արվեստի իրական ակադեմիա:

«Մեծ թատրոն... Նրա երկդարյա գործունեության մեջ իրենց ավանդն են ներդրել հայրենական մշակույթի տասնյակ կառկառուն գործիչներ: Մեծ թատրոնի գործունեության 200-ամյա պատմության մեջ 60 տարին անցկացվել է Սովետական Միության ժամանակ: Այդ տասնամյակները հայտնի են դարձել աշխատախմբի նոր առաջադիմությամբ»⁴⁷: Նրանց անուններն են՝ Ֆ.Շալյապին, Լ.Սոբինով, Ա.Նեժդանովա, Ե.Ստեպանովա, Ե.Կատուլսկայա, Ն.Օբուխովա, Ի.Կոզլովսկի, Մ.Ռեյզեն, Ս.Լեմեշև, Մ.Միխայլով, Ա.Իվանով, Յու.Գուլյան, Բ.Ռուդենկո, ովքեր համաշխարհային ճանաչման արժանացան:

Ամեն առիթով Պ.Լիսիցյանը շեշտել է, որ մեծ սիրով և հաճույքով է բեմ բարձրացել, դերեր խաղացել, կերպարներ ստեղծել իր խաղընկերների հետ, որոնք

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ **Яковлев М.** Мастера Большого театра, народные артисты СССР, Москва, 1976, стр. 3.

նույնպես ծանրակշիռ դերակատարում են ունեցել Մեծ թատրոնում:

Խորհրդային ժամանակաշրջանում Մեծ թատրոնը ոչ միայն ռուսական մշակույթի, այլև ողջ բազմազգ Սովետական Միության մշակութային կենտրոնն էր: Մեծ թատրոնի բեմին ելույթ են ունեցել ոչ միայն ողջ Սովետական Միության լավագույն արտիստները, այլև մինչ օրս ելույթ են ունենում Ռուսաստանի և աշխարհի տարբեր երկրների լավագույն և հանրաճանաչ արտիստները: Այդ կապակցությամբ արժե հիշել, որ 2016 թվականին կլրանա ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչմանն արժանացած երախտավորների 80-ամյակը, որը տրվում էր մշակույթի ամենակարկառուն դեմքերին: Այդ կոչումը հատկապես շատ են ստացել Մեծ թատրոնում:

Բնական է, որ Մեծ թատրոնի հետ իրենց գործունեության տարբեր փուլերում, այսպես թե այնպես, շփվել են նրանք, ովքեր արժանացել են ԽՍՀՄ ժողովրդական արտիստի պատվավոր կոչմանը: Այնպես որ, հավաքածուն ամբողջացնում է միայն դիրիժորների, ռեժիսորների, օպերայի և բալետի արտիստների աշխատանքը, ովքեր երկար տարիներ համագործակցել են թատրոնի հետ:

Մեր պրպտումների արդյունքում Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի թանգարանում հայտնաբերեցինք Պավել Լիսիցյանի փաստաթղթերը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան էքստերն ավարտելու վերաբերյալ: Դրանք են՝ դիմումը՝ թվագրված 1960թ. նոյեմբերի 29-ով, քննական թերթիկը և պետական քննական հանձնաժողովի՝ 1960թ. դեկտեմբերի 6-ի արձանագրությունը (հանձնաժողովի նախագահ՝ Անուշավան Տեր-Ղևոնդյան) Պ.Լիսիցյանին «Օպերային երգչի» որակավորում շնորհելու մասին: Այդ փաստաթղթերը

Մեր ձեռքի տակ է Պավել Լիսիցյանի ձեռագրով գրված 1960 թվականի նոյեմբերի 28-ին գրված նրա դիմումը՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան էքստերն (դրսեկություն) ճանապարհով ավարտելու վերաբերյալ:

Դիմումն ուղղված էր Խորհրդային Հայաստանի Մինիստրների սովետին առընթեր բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության կոմիտեի նախագահի տեղակալ Լեոնիդ Մանասերյանին:

Ստորև թարգմանաբար (բնագիրը ռուսերեն է) ներկայացնում ենք դիմումի տեքստը:

«Քանի որ Մոսկվայում հայկական արվեստի առաջին տասնօրյակից (1939թ.)

հետո ես ներգրավվեցի ստեղծագործական-կատարողական և երաժշտական-հասարակական ինտենսիվ գործունեության մեջ, ինձ չհաջողվեց ընդունվել կոնսերվատորիա և ստանալ բարձրագույն երաժշտական կրթություն: Ինձ համար երաժշտական բարձրագույն դպրոց դարձավ օպերային և կամերային երգչի իմ երկարատև (30-ամյա) պրակտիկան:

Խնդրում եմ ինձ թույլ տալ էքստերն հանձնել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մեներգեցողության ֆակուլտետի լիակատար դասընթացի քննությունները՝ բարձրագույն երաժշտական կրթության վերաբերյալ դիպլոմ ստանալու համար»⁴⁸:

Փաստորեն, 30 տարվա փորձառություն ունեցող և համաշխարհային փառքի արժանացած Պավել Լիսիցյանն իր առջև նպատակ էր դրել անպայման ստանալ բարձրագույն երաժշտական կրթություն և դրա համար ընտրել էր հենց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:

Պողոս Լիսիցյանը «գերազանց» հանձնում է քննությունները հետևյալ առարկաներից՝ «ՍՄԿԿ պատմություն», «Քաղաքատնտեսություն», «Դիալեկտիկական մատերիալիզմ», «Պատմական մատերիալիզմ», «Գեղագիտություն», «Հարմոնիա», «Սոլֆեջիո», «Կամերային երգեցողություն», «Արտասահմանյան երաժշտության պատմություն», «Ռուսական երաժշտության պատմություն» և «ՍՍՀՄ ժողովուրդների պատմություն», «Սովետական երաժշտության պատմություն», «Օտար լեզու», իսկ «Դաշնամուրից» ստանում է «լավ» գնահատական⁴⁹:

Հատկանշականն այն է, որ Պավել Լիսիցյանը գերազանցությամբ հանձնելով քննությունները, վոկալ ասպարեզում ընտրել էր բավական բարդ համերգային ծրագիր: Համերգ-քննությունը, որն անցնում էր ոչ միայն հանձնաժողովի, այլև հանդիսատեսի ներկայությամբ, բաղկացած էր երկու բաժնից:

Առաջին բաժին

- Գ. Հենդել՝ Քսերքսի արիան «Քսերքս» օպերայից:
- Վ. Մոցարտ՝ «Դոն Ժուանի սերենադը»:

⁴⁸Տե՛ս Պ.Լիսիցյանի դիմումը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ավարտելու համար, ԵՊԿ, Պավել Լիսիցյանի անձնական գործերի դիվան № 376 (անտիպ):

⁴⁹ Տե՛ս Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի քննական առարկաների և գնահատականների թերթիկը, ԵՊԿ, Պավել Լիսիցյանի անձնական գործերի դիվան № 376 (անտիպ):

- Ռ. Շուման՝ «Ես չեմ բարկանում» և «Դուք չար եք, չար երգեր»:
- Ֆ. Շուբերտ՝ «Մոտ երաժշտության», «Ատլաս»:
- Մ. Ռավել՝ «Ռոմանտիկ երգ» և «Բաքոսյան երգ» Դոն-Կիխոտ և Դուլցինե օպերայից:

Երկրորդ բաժին

- Դ. Կաբալևսկի՝ «Շեքսպիրի 2 սունետ», թարգմանությունը Մարշակի:
- Յ. Շապորին՝ «Կախարդանք»:
- Ռ. Մելիքյան՝ «Ես վարդի և սիրո երգիչ»:
- Ս. Ռախմանինով՝ «Երագ», Ալեկոյի կավատինան:
- Պ. Չայկովսկի՝ «Ոչ, միայն նա, ով գիտեր» Դոն Ժուանի սերենադը:
- Ա. Խաչատրյան՝ «Խնջույքի երգ»:
- Պ. Կարդիլիո՝ «Անշնորհակալ սիրտը» նեոպոլիտանական երգ⁵⁰:

Քննական հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին արվեստի այնպիսի երախտավորներ, ինչպիսիք են պրոֆեսոր Անուշավան Տեր-Ղևոնդյանը (հանձնաժողովի նախագահ), ավագ դասախոս Լազար Սարյանը, ավագ դասախոս Կոնստանտին Մելիք-Վրթանեսյանը, պրոֆեսորի պաշտոնակատար Թամար Շահնազարյանը, ավագ դասախոսներ Ա.Ա.Քարամյանը և Ն.Մ.Հովհաննիսյանը:

Եվ ահա՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Մեներգեցողության ֆակուլտետի Պետական քննական հանձնաժողովի բոլոր անդամները մասնագիտությունից պետական քննությունը գնահատում են գերազանց: Հանձնաժողովի 1960թ. դեկտեմբերի 6-ի որոշմամբ Պողոս Կարապետի Լիսիցյանին շնորհվում է «Օպերային երգչի» որակավորում⁵¹:

Պ.Լիսիցյանի անունը վաղուց ընդգրկվել է խորհրդային նշանավոր երգիչների շարքում, իսկ երգչի ստեղծագործության անբաժան մասն է դարձել ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային օպերային երգարվեստը:

Պ.Լիսիցյանը դասավանդել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում (1969 թվականից՝ ամբիոնի վարիչ, 1970 թվականից՝ պրոֆեսոր), և

⁵⁰ Տե՛ս նույն տեղում:

⁵¹ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Մեներգեցողության ֆակուլտետի Պետական քննական հանձնաժողովի արձանագրությունը, ԵՊԿ, Պավել Լիսիցյանի անձնական գործերի դիվան № 376 (անտիպ):

մինչ իր կյանքի վերջին ժամանակները եղել մանկավարժ-խորհրդատու, Ռուսաստանի և արտասահմանյան վոկալ մրցույթներում աշխատել որպես մրցանակաբաշխության հանձնաժողովի անդամ:

«Բավել Լիսիցեանի կյանքի ուղին ցույց կուտայ, որ Դերասանի իսկական կոչումն եղած է օբերային բեմը: Իր ստեղծած կերպարներու գեղարվեստական համոզականությունը մեկնաբանման մակարդակը կապացուցեն, որ դերասան-մեներգիչն օբերային ներկայացման մեջ կարող է ունենալ առաջատար դեր»⁵²:

Ստեղծագործական նոր աստիճանի բարձրանալու, արվեստի նոր հորիզոններ բացահայտելու իր ձգտումով և իր արվեստը բոլորին անմնացորդ տալու, փոխանցելու մարդ տեսակով նա առանձնահատուկ է: Չանտեսենք նաև այն հանգամանքը, որ նրա բազմաթիվ կոչումների շարքում առկա են նաև Հայաստանի ժողովրդական արտիստի, Չեչեն-Ինգուշական Ինքնավար Հանրապետության և Յակուտիայի ժողովրդական արտիստի կոչումները:

Լայնածավալ հյուրախաղերի մասնակցող երգիչ, հասարակական գործիչ, համաշխարհային անուն ունեցող մանկավարժ, հանրային գործիչ, ահա այսպիսի ձեռքբերումներ ունի հռչակավոր հայ երգիչ և արտիստ Պավել Լիսիցիանը:

Հատկապես անմոռանալի են այն պահերը, երբ Մոսկվայի կոնսերվատորիայի Մեծ դահլիճում հանդիսավոր պայմաններում նշվում էր Պավել Լիսիցիանի ծննդյան 60-ամյա և գործունեության 40-ամյա հոբելյանը: Տոնական երեկոյի ժամանակ, երբ Պ.Լիսիցյանը գտնվում էր իր փառքի գագաթին, նա հանդիսատեսի առջև բացեց երաժշտության այնպիսի տեսարան, որը կբավականացներ մեկից ավելի համերգների համար: Այո, սա կրկին խոսում է երգիչ և դերասան անբաժանելի միասնության մասին: Բ.Ա.Պոկրովսկին ողջունելով հոբելյարին արտասանում է իր հայտնի արտահայտությունը՝ «Պավել Լիսիցյանի ստեղծագործական գործունեությունը Մեծ թատրոնում՝ աշխատախմբի մի ամբողջ պատմություն է»⁵³: Սա չափազանցություն չէ: Սակայն մեզ համար Լիսիցյանի գործունեությունը ոչ միայն պատմություն է, այլ նաև մեր մշակութային ներկան:

⁵² Բավել Լիսիցյանի Յիշատակին, «Նոր Աշխարհ» թերթ, Աթենք, երկուշաբթի, 2 օգոստոսի, 2004, էջ 6:

⁵³ Яковлев М. Мастера Большого театра народные артисты СССР, Москва, 1976, стр. 395.

1.3. Պ.Լիսիցյանի ծննդյան 70-ամյակին նվիրված համերգը

«Իմ սիրելի քույրիկ:

Ուղարկում եմ քեզ մի հոդված, որը տպագրվել է Մեծ Թատրոնի «Սովետական արտիստ» թերթում: Թերևս, քեզ մոտ են իմ արխիվային նյութերը, որոնք գնալով ավելանում են, և հուսով եմ, դեռ կշատանան: Մեր տանը ամեն ինչ կարգին է, բոլորը առողջ են, երեխաներս հաճախ մեկնում են հյուրախաղերի Խորհրդային Միության տարբեր քաղաքներ:

Դատելով ամեն ինչից, մարտի 1-ից մինչև 6-ը, կլինենք Երևանում, որտեղ կտոնենք իմ ծննդյան 70-ամյա հոբելյանը: Թե ինչպես այն կկազմակերպվի՝ դժվար է ասել, դրա համար չափազանց կարևոր է ռեժիսորական հետաքրքիր մոտեցումը:

Հավանաբար, Երևանից հետո, անմիջապես կտոնենք Թբիլիսիում: Շատ եմ աշխատում Մոսկվայի ֆիլարմոնիայում և Մեծ թատրոնում:

Ինձ շատ լավ եմ զգում: Երբեմն գրիր եղբորդ: Ողջույններ մեր բոլորից: Ջերմորեն համբուրում եմ, քո եղբայր՝ Պավել Լիսիցյան»⁵⁴:

Որքան էլ մեծանուն և փառքի բազում դափնիներ նվաճած երգիչը սիրելի քույրիկին՝ Ռուզաննային ուղարկած նամակում հայտնում էր իր անհանգստությունը հոբելյանական երեկոյի առիթով, միևնույն է՝ նա իր երկրի ու ժողովրդի սիրելի զավակն է: Հետևաբար պետությունը այս պարագայում պարտավորվում է իր ուսերին ծանրացնել նման փառքի տեր անհատի՝ Լիսիցյանի մեծարման ու գնահատման այդ հաճելի բեռը:

Նոյեմբերի 18-ին «Пиковая дама» ներկայացումը, որն ընթանում էր ԽՍՀՄ Մեծ թատրոնի բեմին, նվիրված էր Պ.Լիսիցյանի ծննդյան յոթանասունամյակին:

Ռուսաստանի ժողովրդական արտիստուհի Կ.Լեոնովան «Սովետական արտիստ» թերթում «Վոկալ արվեստի ականավոր վարպետը. նվիրվում է ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պ.Լիսիցյանի 70-ամյակին» հոդվածում գրել էր Պ.Լիսիցյանի մասին իր վառ հիշողությունների, անմոռանալի տպավորությունների և հանդիպումների մասին⁵⁵: Ներկայացնում ենք հոդվածի թարգմանությունը:

«Ավելի քան տասը տարի է, ինչ հանրահայտ երգիչը հանդես չի եկել իրեն հարազատ դարձած հանրահայտ բեմից: Այսօր Պ.Գ.Լիսիցյանը զբաղվում է վոկալ

⁵⁴ Հախնազարովա Կարինա (Պ. Լիսիցյանի զարմուհու) անձնական արխիվից, անտիպ:

⁵⁵ **Леонова К.** Выдающийся мастер вокального искусства, “Советский артист”, Москва, 1981, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

մանկավարժությամբ՝ երիտասարդներին փոխանցելով իր փորձն ու գիտելիքները: Երաժշտական հանրությունը երախտագիտությամբ է նշում նրա այդ ջանքերի հաջող արդյունքները:

Պ.Գ.Լիսիցյանի կատարողական արվեստը թողել է շատ վառ ու նշանակալից հետք: Նրա կողմից ստեղծվել է Մեծ թատրոնի կերպարների մի ամբողջ ցուցահանդես: Պավել Գերասիմովիչը հրավիրվել է Մեծ թատրոն 1939 թվականին՝ հայկական արվեստի տասնօրյակում հիանալի հանդես գալուց հետո:

Ճերմոն («Տրավիատա»), Ամոնսարո («Աիդա»), Վալենտին («Ֆաուստ»), Եվգենի Օնեգին, Ելեցկի, Էսկամիլո («Կարմեն»), Մեծ թատրոնի բեմում Պ. Լիսիցյանի կողմից ստեղծված այս վոկալ-բեմական կերպարներից յուրաքանչյուրը հանդիսանում է ստեղծագործական երաժշտական հատույթի, ժամանակաշրջանի ոճի, բեմադրողի մտահղացման վառ օրինակ:

Սովետական կոմպոզիտորների օպերաներից առաջին հերթին անհրաժեշտ է նշել Ռիլենին (Յու.Շոպարինի «Դեկաբրիստներ»), որի դերը Պավել Գերասիմովիչի համար ամենասիրելիների թվին էր պատկանում, ինչպես նաև Նապոլեոնը (Ս.Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն»), և երգչի կատարմամբ անմոռանալի Ռեքվիեմը՝ նվիրված պատերազմում ընկածների հիշատակին (Ի.Ջերժինսկի՝ «Մարդու ճակատագիրը»):

Օպերային երգիչների արտիստական դարաշրջանը շատ կարճ է, սակայն այդ տարիների ընթացքում ով տիրապետում էր արտասովոր վոկալ տվյալների՝ երաժշտության, արտիստիզմի, կարող է արվեստում «շատ բան ասել»:

Շատ բարի, լավ, անմոռանալի բաներ է հասցրել «ասել» իմ կողմից խորապես հարգված Պավել Լիսիցյանն իր ստեղծագործական գործունեության երեսունհինգ տարիների ընթացքում (իսկ սա երգիչների մեջ արդեն «երկարակեցություն» է համարվում): Շատ բան ասվեց ոչ միայն վոկալիստի իր ակնառու տաղանդով, ով տիրապետում էր բարիտոնի հիանալի, «թավշյա» տեմբրի, ոչ միայն բարձր պրոֆեսիոնալիզմով և կատարողական արվեստով, այլև քաղաքացիական պարտքի խորին գիտակցմամբ և «Մեծ թատրոնի երգիչ» կոչմամբ:

Յուրաքանչյուր արտիստի ստեղծագործական կյանքում լինում են վերելքներ և անկումներ, լինում են ավելի փոքր կամ քիչ հաջող ներկայացումներ: Դա բնական է:

Սակայն ես չեմ կարողանում Պ.Լիսիցյանի ներկայացումներից հիշել խամրած, թույլ, անհաջող ներկայացումներ բոլոր այն ժամանակահատվածում, երբ ես բախտ ունեցա լսել նրան կամ ներկայացումներում հանդես գալ նրա հետ: Նա միշտ իրեն լավ էր զգում, գեղեցիկ էր, ձգված և մի տեսակ՝ արևաշող: Վստահ եմ, որ դա այդպես էր, քանի որ Պավել Լիսիցյանը, լինելով Մեծ թատրոնի դերակատար, իր ողջ կյանքը ենթարկել է թատրոնին ծառայելուն: Նա իր գործի հանդեպ միշտ ցուցաբերել է մեծ նվիրում, սեր և պատասխանատվության լավագույն օրինակ:

Փորձելով գուշակել Պ.Գ.Լիսիցյանի հաջողության «գաղտնիքը»՝ դա նրա նկատմամբ հանդիսատեսի մեծ սերն էր: Կարծում եմ, որ այն հանդիսանում էր ոչ միայն երգչի ձայնի անկրկնելի գեղեցկությունը (ինչն ինքնին արժեքավոր է և հմայիչ), այլ այն, որ նա ռուսական, սովետական երգիչ լինելով կատարյալ տիրապետում էր բել կանտոյի արվեստին (ինչը նշում էր նաև հանրահայտ Մարիո դել Մոնակոն՝ 1959 թվականին Մեծ թատրոնում հանդես գալով «Կարմեն» օպերայում, որտեղ Պ.Լիսիցյանը կատարում էր Էսկամիլիոյի դերը), այլ նաև իր հերոսների զգացմունքների շատ անկեղծ և նուրբ արտահայտման մեջ: Կարծում եմ, որ արտիստի մոտ հատկապես լավ էր ստացվում անկեղծ, ազնվագարմ, բարուն հավատացող և անարդարության դեմ պայքարող կերպարների դերերը: Կյանքում էլ Պավել Գերասիմովիչը բարի, օրինավոր մարդ է, նրբազգաց, ուշադիր և կարեկից:

Շիշում եմ, երբ դեռ երիտասարդ երգչուհի էի, ինձ հայտնեցին, որ երեկոյան պետք է հանդես գամ Ամներիսի դերերգում, ինչը ես մինչ այդ չէի երգել, այլ միայն փորձ էի կատարել դիրիժորին ցույց տալուց հետո (ինչն այդ ժամանակ պարտադիր էր): Կարո՞ղ եք արդյոք պատկերացնել, թե ինչ զգացմունքներ էին տիրել ինձ՝ և՛ ուրախություն, և՛ հպարտություն վստահության համար, և՛ մեծ հուզմունք, և՛ վախ...

Ներկայացմանը մասնակցում էին մեր հանրահայտ երգիչները՝ Պ.Գ.Լիսիցյանը, Զ.Բ.Անջապարիձեն: Դիրիժորն անմոռանալի Ա.Շ.Մելիք-Փաշանն էր, ով առանձնանում էր մեծ պահանջկոտությամբ: Բոլորը փորձում էին աջակցել ինձ: Իսկ երբ առաջին անգամ բեմ դուրս գալուց հետո մտա իմ արտիստական հանդերձարան, ապա իմ սեղանին տեսա մանուշակների փունջ (գարուն էր), «երգեցողություն հիանալի արվեստում» հաջողությունների մաղթանքներով Պավել Գերասիմովիչի և իր կնոջ՝ Դագմարա Ալեքսանդրովնայի կողմից: Այդ գրությունը ես պահում եմ որպես

թանկարժեք իր: Վստահ եմ, որ իմ գործընկերներից շատերը կարող են հիշել Պավել Գերասիմովիչի կողմից ուշադրության և ջերմության նման դրսևորումների բազմաթիվ դեպքեր:

Ուզում եմ նշել նաև, որ Պավել Գերասիմովիչը երբեք չէր սահմանափակում իր կյանքը նեղ մասնագիտական հետաքրքրություններով: Նա միշտ գտնվում էր մշակութային և հանրային կյանքի անցուղարձում: Մեծ թատրոնի աշխատակազմում նա մեծ հարգանք էր վայելում: Բազմիցս ընտրվել է թատրոնի կուսկումի անդամ, աշխատել է «Սովետական արտիստ» թերթի խմբագրությունում: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Պավել Գերասիմի Լիսիցյանը ռազմաճակատում հանդես է եկել ավելի քան հինգ հարյուր համերգով:

Այսօր Մեծ թատրոնը նշում է Սովետական Միության ժողովրդական արտիստ Պավել Գերասիմի Լիսիցյանի ծննդյան 70-ամյակը, ում կյանքի կարևորագույն նպատակը և առաջադրանքն էր իր ազգին անձնվեր ծառայելը:

Այսօր ես ի սրտե շնորհավորում եմ թանկագին Պավել Գերասիմովիչին այս նշանակալի տարեդարձի առթիվ, մաղթում եմ նրան քաջ առողջություն և բարեկեցություն:

Շնորհավորում եմ մեր աշխատակիցներին այս հանդիսավոր օրվա կապակցությամբ և մաղթում եմ, որ հիանալի մասնագիտական և մարդկային հատկանիշները, որոնք հատուկ են մեր թանկագին հոբելյարին, արտահայտվեն նաև ԽՍՀՄ Մեծ թատրոնի դերակատարների ստեղծագործական և առօրյա կյանքում⁵⁶:

Պ.Լիսիցյանի և՛ արվեստը, և՛ հետաքրքիր ու անմոռանալի հանդիպումներն անջնջելի հետք են թողել Ռուսաստանի վաստակավոր արտիստ Ա.Օրֆեոնովի հիշողություններում: Վերջինս իր գեղեցիկ ելույթով հանդես եկավ Պ.Լիսիցյանի 70-ամյա հոբելյանական երեկոյին: Ներկայացնում եմ ելույթը ամբողջությամբ, որը ինձ տրամադրել է Պ.Լիսիցյանի զարմուհի՝ Կ. Հախնազարովան:

«Այսօր Մեծ թատրոնը նշում է հիանալի արտիստ Պավել Լիսիցյանի ծննդյան յոթանասունամյակը: Պրոֆեսոր Պ.Գ.Լիսիցյանի անունը դասվում է նույն շարքում, ինչ հանրահայտ երաժիշտ-կատարողներինը, ովքեր սովետական օպերային թատրոնի

⁵⁶ **Леонова К.** Выдающийся мастер вокального искусства, “Советский артист”, Москва, 1981, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

հպարտությունն են:

Առաջին անգամ ես Լիսիցյանին լսեցի, ում արդեն համարյա կես դար է ինչ ճանաչում եմ, Լենինգրադում, 1936 թվականին, Լենինգրադի Փոքր օպերային թատրոնի և Կ.Ս.Ստանիսլավսկու անվան օպերային թատրոնի ստեղծագործական հանդիպման ժամանակ, որտեղ ես այդ ժամանակ աշխատում էի: Երգիչն ուղղակի հիացրեց մեզ լիրիկական բարիտոնի իր հրաշալի, հաճելի տեմբրով, ինչը հիշեցնում է հանրահայտ իտալական մաեստրոների ձայները:

Այնուհետև մենք նրան լսեցինք Մոսկվայում հայկական արվեստի տասնօրյակին՝ արդեն որպես Երևանյան օպերային թատրոնի մենակատարի: 1940 թվականից Լիսիցյանը դառնում է Մեծ թատրոնի մենակատար: Մոսկվայում սկսվեց մեր ստեղծագործական ընկերությունը: 1942 թվականին ես անցա Մեծ թատրոն և Պ.Գ.Լիսիցյանի հետ հանդես եկա բազմաթիվ ներկայացումներում՝ «Եվգենի Օնեգինում», «Տրավիատայում», «Սաղկոյում» և այլն:

Ունենալով բնատուր փափուկ լիրիկական բարիտոն, Լիսիցյանն իր ձայնը զարգացրեց մինչ կատարելության մակարդակի: Նա հնարավորություն ստացավ կատարելու դրամատիկական բարիտոնի դերերգեր, ընդ որում այդ դերերգերը հնչում էին ձայնի լիրիկականության առանց որոշակի զիջումներով: Նրա Ամոնասարոն «Աիդա» օպերայում մեծ հաջողություն ունեցավ ոչ միայն մոսկովյան հանդիսատեսների առջև: Լիսիցյանն առաջին սովետական երգիչն էր, ով այդ դերերգով հանդես եկավ Նյու-Յորքի «Մետրոպոլիտեն - օպերայի» բեմում:

Դժվար է թվել բոլոր դերերգերը, որոնցով հանդես է եկել այս հրաշալի արտիստը: Դրանք բազմաթիվ են: Սակայն բոլորն էլ կատարվել են մեծ վարպետությամբ, դրանցում ամբողջությամբ դրվել է նրա հոգին ու խանդավառությունը: Հանդիսատեսը ջերմորեն էր ընդունում նրա Ռոբերտին «Իռլանտաում», Մազեպային, Էսկամիլիոյին «Կարմենում»: Հանրահայտ Ժերմոնի արիան «Տրավիատայից» արդեն առաջին իսկ արտահայտությունից հանդիպում էր բուռն ծափահարությունների:

Մեծ թատրոնի բեմին Պ.Լիսիցյանը Յու.Շապորինի «Դեկաբրիստներ» օպերայում Ռիլենի դերերգի, Ս.Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն» օպերայում Նապոլեոնի, Ա.Ալեքսանդրովի «Բելա» օպերայում Կազբիչի, Ն.Ժիգանովի «Մուսա Ջալիլ» օպերայում Անդրեի առաջին կատարողն էր:

Հնարավոր է արդյոք նկարագրել Լիսիցյանի ելույթներից ստացված բոլոր տպավորությունները: 1964 թվականին Իտալիայում Մեծ թատրոնի հյուրախաղերի ժամանակ Լա Սկալա հանրահայտ թատրոնի բեմին Պ.Գ.Լիսիցյանը «Пиковая дама» ներկայացման մեջ կատարեց Ելեցկու դերը: Եվ «Ես ձեզ սիրում եմ...» արիայից հետո կատարողի հասցեին հնչեցին երկար, չլռող ծափահարություններ:

Հնարավոր չէ կարճ հոդվածով պատմել երգչի լայնածավալ համերգային գործունեության, կատարված բազմաթիվ ձայնագրությունների մասին: Ես հաճախ եմ հանդես եկել Պավել Լիսիցյանի հետ միասին, բազմաթիվ անգամներ մենք մասնակցել ենք պատասխանատու միջոցառումների: Նա Պ.Չայկովսկու և Ս.Ռախմանինովի սիրերգերի հրաշալի մեկնաբան է: Նա հրաշալի գործընկեր է, նրբազգաց և արձագանքող ընկեր:

Կոմունիստ Պ.Լիսիցյանն ունի հրաշալի ու հետաքրքիր կյանք՝ հազեցած ստեղծագործական կատարելագործումներով, մեծ հասարակական գործունեությամբ: Նման մարդու կյանքով կարելի է հպարտանալ:

Մաղթենք Պավել Գերասիմի Լիսիցյանին առողջություն, շատ ուժ, որպեսզի իր գիտելիքները փոխանցի երիտասարդներին, որ շարունակվի աշխատանքային առաջընթացն օպերային երգեցողության արվեստում»⁵⁷:

1.4. Պավել Լիսիցյանի 85-ամյա հոբելյանը

Առհասարակ, օպերային դերերգերի փայլուն մեկնաբան, bel canto-ի (գեղեցիկ երգեցողություն) մեծ վարպետ և աշխարհահռչակ բարիտոն Պ.Լիսիցյանին նվիրված հոբելյանական երեկոները անցել են մեծ շուքով և հանդիսությամբ: Յուրօրինակ շքեղությամբ և մեծարանքի բարձր գնահատականներով է նշվել նաև 85-ամյա հոբելյանը, որը տեղի է ունեցել Մոսկվայի օպերային Մեծ թատրոնի դահլիճում:

1996 թվականի նոյեմբերի 26-ին Մեծ թատրոնի գլխավոր և պաշտոնական հովանավոր «Ռաֆաելլո» ընկերության հովանավորությամբ, ի պատիվ Պավել Լիսիցյանի, բեմադրվեց Պ.Բ.Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերան:

«Պավել Գերասիմի Լիսիցյան.

Ինչպիսի ջերմությամբ ու գովասանքի խոսքերով են հիշում Մոսկվայի Մեծ թատրոնի տարեցները նրա փայլուն երգեցողական ասպարեզի մասին, որքան

⁵⁷ Կ.Հախնազարովայի (Պ. Լիսիցյանի զարմուհու) անձնական արխիվից:

հարգանքով ու ակնածանքով է վերաբերվում երիտասարդությունը, որոնք այժմ օպերային թատերախմբի աշխատողներ են: Նրա ձայնը յուրահատուկ հմայք ուներ, նրա կատարողական բարձրագույն արվեստը և արտիստիզմը արժանացել են միջազգային քննադատների գովասանքին:

Այսօր Մեծ թատրոնի «Պիկովայա դամա» օպերային ներկայացումը նվիրում է իր հանրաճանաչ վետերանին, որը հենց այս նույն բեմից իր անգուգական կատարումով հնչեցրել է Ելեցկու արիան: Մաղթում ենք նրան և իր ծաղկող ընտանիքին առողջություն, ուրախություն և հաջողություն»⁵⁸:

Ռուսաստանի Դաշնության մշակույթի նախարարության, Հանրապետական և Միջազգային մրցույթների տնօրինության, Մոսկվայի պետական ակադեմիական ֆիլիարմոնիայի հովանավորությամբ տեղի ունեցավ «Լեգենդարների Բենեֆիսը»: «Մշակույթի նախարարության ազգային և միջազգային մրցույթների տնօրինությունը այդպիսի խորագրով էր անվանակոչել երաժիշտների և բալետային արվեստի ներկայացուցիչների մեծարման հանդիսավոր արարողական նախաձեռնությունը՝ բարձր գնահատելով նրանց նշանավոր ներդրումը մշակույթի զարգացման գործում: Մեծությունների անունները հայտնի են մեր երկրի բոլոր անկյուններում և նրա սահմաններից դուրս՝ Օլգա Լեպեշինսկայա, Տիխոն Խրեննիկով, Նատալյա Դուդինսկայա, Մարիա Մեմենովա, Իգոր Մոխսեն, Սոֆյա Գոլովկինա, Նինա Օլսենտյան, Իյա Մուսին, Բորիս Պոկրովսկի, Վերա Դուլովա, Իվան Պետրով, Պավել Լիսիցյան, Զառա Դոլուխանովա, Տատյանա Ուստինովա, Նինա Մեշկո, Միխաիլ Շիշկով, Նիկիտա Բոգոսլովսկի, Օլեգ Լուինդստրեմ...»

«Կենդանի Լեգենդների Բենեֆիսի» բացման արարողությունից հետո տեղի ունեցավ հանդիսավոր տոնակատարություն և մեծ արվեստագետների պատվավոր պարգևատրումը «Ոսկե Ապոլոն» հուշամեդալով: Երաժշտական ողջույններով հանդես եկան իրենց իսկ տաղանդավոր ուսանողները:

Պատահական չէ, որ այս ամենը տեղի ունեցավ Հայրենական Մեծ Պատերազմի Հաղթանակի տոնակատարության օրը:

Արվեստագետներից շատերը պատերազմի ժամանակ եղել են եվրոպական շատ երկրներում, հանդես եկել համերգային կատարումներով հիվանդանոցներում և ռազմի

⁵⁸ Լ.Ստեփանյանի (Պ. Լիսիցյանի զարմուհու) անձնական արխիվից:

դաշտում՝ մարտական դադարների ժամանակ:

1998 թվականին Մոսկվայում տեղի ունեցած «Քայլող Լեզենդների բենեֆիսը» արժևորում էր Պ.Լիսիցյանի ապրած ուղու, նրա բացառիկ տաղանդի, նախասպիրությունների, կենսակերպի ու մարդկային կերպարի բարոյական նկարագիրը:

Պ.Լիսիցյանը համալրել է ռուսական օպերային արվեստի փառավոր պատմության էջերը: Տարիներ շարունակ արտիստի հիասքանչ երգեցողությունը ջերմացրել է միլիոնավոր երաժշտասերների սրտերը: Պ.Լիսիցյանը ստեղծել է ռուս և արտասահմանյան օպերային արվեստի հերոսական կերպարների վառ ցուցադրություն՝ Ելեցկի, Մազեպա, Գրյազնոյ, Էսկամիլիո, Ամոնասրո, Վալենտին:

Պ.Լիսիցյանի արվեստի հեղինակությունը չափազանց բարձր է: Փայլուն երգիչը՝ նուրբ, մտածկոտ կամերային երաժշտության մեկնաբանը, տաղանդավոր մանկավարժը փոխանցել է վարպետության գաղտնիքներն իր աշակերտներին և կոլեգաներին: Արդեն երկար տարիներ ծավալում է լայն մանկավարժական գործունեություն և հրավիրվում խոշորագույն միջազգային մրցույթների»⁵⁹:

1. 5. Պավել Լիսիցյանի 90-ամյա հոբելյանը

Ռուսաստանի Դաշնության Մշակույթի նախարարությունը, Մոսկվայի պետական ակադեմիական ֆիլհարմոնիան, Ռուսաստանի Պետական ակադեմիական Մեծ Թատրոնը, Միջազգային բարեգործական հիմնադրամը, Մոսկվայում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը՝ Ռուսաստանի հայերի միության աջակցությամբ կազմակերպել է մեծարման երեկո, որի խորհուրդը ներառում է արժևորման ու գնահատման իրական հանդիսություն:

Պատիվ ունենք հրավիրելու Ձեզ ականավոր մշակութային գործիչ, մեր հայրենակից Պավել Լիսիցյանի Հոբելյանական համերգին⁶⁰:

Համերգը տեղի կունենա 2001թ. նոյեմբերի 6-ին, Չայկովսկու անվան համերգասրահում:

Այս գեղեցիկ տոները զարդարում էին հրավիրատոմսի գունազարդ էջերը, ազդարարելով անգուգական մեծության՝ Պավել Լիսիցյանի անմիջական մասնակցությամբ, հյուրերի հրավերքը հոբելյանական երեկոյին:

⁵⁹ **Соколов Ю.** “Известия” газета, Москва, 1998, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ), անտիպ:

⁶⁰ ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ), անտիպ:

Այդ օրը Մոսկվայում անասելի փնտրտուքային իրավիճակ էր, ամենուր, անգամ Մոսկվայի մետրոյի կայարաններում, անցորդները հարցնում էին միմյանց. - «Հնարավո՞ր է արդյոք ավելորդ տոմսեր ունենաք»⁶¹:

Այո, սա է իրական ու անկեղծ այն մեծ գնահատականը, որով պարզևատրվում է արվեստասեր հասարակայնության արժանավայել զավակը, անգամ այս պարագայում Պավել Լիսիցյանի 90 գարուններ բոլորած տարիքը չէր խամրեցրել Լիսիցյան մեծության մշտապես շողացող աստղը: Լեփ-լեցուն դահլիճները, ժամանակից շուտ սպառված տոմսերը նորություն չէին նրա համերգների ժամանակ: Ահա և մատուցվող բարձրաճաշակ ու բարձրարվեստ մշակույթ, որի գերին ակամայից դառնում է ժողովուրդը:

2001թ. նոյեմբերի 6-ին լրացավ Պավել Լիսիցյանի 90-ամյակը ով, ըստ Ամերիկայի երաժշտական ակադեմիայի, XX դարի լավագույն բարիտոններից էր:

Հորեյանական համերգի բացումը սկսվեց համաշխարհային արվեստի փառահեղ երգիչ Պավել Լիսիցյանի ոսկյա ձայնով: Նրա հզոր և կախարդիչ ձայնի հնչյունները հիացրել էին դահլիճում գտնվող հանդիսատեսին, երբ ցուցադրվեցին Ռուբինշտեյնի պատմական «Ներոն» օպերայից հատվածներ, որտեղ օրվա հերոսը մարմնավորել էր «Էպիտալամա Վինդեքսուն»:

Ամբողջ դահլիճը լցվում է բուռն ծափողջույններով...

Եվ ահա հայտնվում է ինքը՝ հորեյարը, Մոսկվայի Մեծ թատրոնի առասպելական բարիտոն Պավել Լիսիցյանը:

Սկսվում է շնորհավորանքների, ջերմագին մաղթանքների ու գովասանքի, մեծարման երեկոն: Ծաղկեփնջեր, անդադար ծափողջույններ, շնորհավորական բացիկներ, հեռագրեր աշխարհի տարբեր անկյուններից, անսահման ջերմ խոսքեր ու ժպիտներ: Այդ օրը շնորհավորանքներ հնչեցին ոչ միայն տարբեր երկրների ղեկավարների կողմից, այլև հանդիսատեսից, լրագրողներից, հեռավոր երկրների իր բարեկամներից ու ընկերներից:

Շատ ջերմ էին հատկապես շնորհավորանքները Մեծ թատրոնի ողջ նվագախմբի, դիրիժորների և ղեկավար անձնակազմի կողմից. «Շատ հեշտ է աշխատել նրա հետ, մենք շատ ենք սիրում և հարգում Պավել Լիսիցյանին», - այսպիսի գեղեցիկ խոսքերով

⁶¹ «Труд» газета, Москва, 2001, стр. 1, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ), անսիպ:

Էին բարձրաձայնում բոլորը⁶²:

Նրան ողջունում է Մոսկվայի Մեծ թատրոնի բարիտոնների «հավաքականը»՝ Վլադիսլավ Վերեստնիկովը, Վլադիմիր Բուկինը և Միխայիլ Դյակովը: Այնուհետև ՌԴ մշակույթի նախարար Շվիդկոյն ընթերցեց Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի շնորհավորական ուղերձը, որին հաջորդեց Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի շնորհավորական խոսքը:

Հանդիսավոր երեկոյին հատուկ Հայաստանից և Հյուսիսային Օսեթիայից ժամանել էին հյուրեր, որոնք իրենց շնորհավորանքներն էին հղում հոբելյարին: Հատուկ շնորհավորական հեռագիր էր ուղարկել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, իսկ Հայաստանի ներկայացուցիչները ոչ միայն մատուցեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Բոչարյանի շնորհավորանքները, այլև Պ.Լիսիցյանին հանձնեցին Հայաստանի Մայր եկեղեցու կողմից տրված բարձր պարգևը՝ «Սուրբ Սահակի և Մեսրոպ Մաշտոցի շքանշանը»:

Հոբելյարին շնորհավորեցին նաև Մոսկվայի երաժշտական և թատերական հասարակության ներկայացուցիչները, այդ թվում՝ Վլադիմիր Սպիվակովը, Վալերի Գերգինը, Եվգենի Կոլոբովը, Վլադիմիր Կրայնը, Գենադի Խազանովը, Իոսիֆ Կոբզոնը, Ալեքսանդր Վորոշիլոն և այլք:

Շատ հուզիչ ու ջերմագին էին շնորհավորանքները հատկապես հարազատ Մեծ թատրոնի բազմամյա կոլեգաների՝ Իվան Պետրովի, Ռաիսա Ստրուչկովայի, Գալինա Օլեինիչենկոյի, Մարգարիտա Միզլայի, Վալենտինա Լևկոյի, Թամարա Սորոկինայի, Ալեքսանդր Վորոշիլոյի, Իրինա Ժուրինայի, Ալեքսանդր Լոմոնոսովի կողմից: Նրանք սիրով ու հիացմունքով, հարգանքով ու խոնարհումով էին հիշում այն տարիները, երբ օրվա հոբելյարի՝ Պավել Լիսիցյանի հետ միասին բազում ելույթներ են ունեցել հենց այդ նույն բեմահարթակից:

Համերգի եզրափակիչ մասն իրենց գեղեցիկ ու հետաքրքիր ձայնով լրացրեցին հոբելյարի զավակները՝ Կարինան, Ռուզանան, Ռուբենն ու Գերասիմը, իրենց սիրելի հայրիկին մի հիանալի երաժշտական համար մատուցելով, ներկայացնելով Գլինկայի «Попутная песня» (Ճանապարհի երգ) երգը:

Իսկ համերգի ավարտին դառնալից նստած հանդիսատեսին մեծ անակնկալ

⁶² “Большой театр” газета, №8, Москва, 2001, стр. 4, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ), անտիպ:

մատուցեց հենց օրվա հերոսը՝ Պավել Լիսիցյանը, երբ հնչեց Ա.Տիգրանյանի «Անուշ» օպերայից մի հատված:

Դահլիճը ցնցված էր, երբ այն ողողվեց լիսիցյանական գունեղ ու անկրկնելի ձայնի հնչողությամբ: Եվ ինչպես հետո բարձրաձայնեց հորբեյարը. «Ես այս երգը առաջին անգամ երգել եմ 80 տարի առաջ Երևանյան թատրոնի ներկայացմանը, երբ տասը տարեկան տղա էի»:

90-ամյակը Պավել Լիսիցյանի համար առանձնահատուկ էր հատկապես իր խորհրդավոր բնույթով: Աշխարհահռչակ երգչի մի խումբ ուսանողների մատուցած հաճելի ու արտասովոր անակնկալը դարձավ նրա երկնային ուղեկիցը: Ծաղկեփնջերով Պ.Լիսիցյանն իջավ դահլիճի առաջին շարք: Այստեղ նրա պատվին հնչեցին երաժշտական հիանալի շնորհավորանքներ՝ Սպիվակովի, Կրացնևի և Ստանիսլավսկու երաժշտական թատրոնի կողմից:

Շատ հետաքրքիր, անկաշկանդ ու հուզումնալից էին Պ.Լիսիցյանի տիկնոջ՝ Դագմարա Ալեքսանդրովնայի գեղեցիկ ու ժպտադեմ խոսքերն անմիջապես հորբեյանական երեկոյից հետո.

«Որքա՛ն, չափազանց շատ ենք ցանկանում ապրել: Ես ութսունհինգ տարեկան եմ, իսկ Պավլուշան՝ իննսուն: Եվ մենք դեռ ողջ ենք: Պատկերացնու՞մ եք, ի՛նչ երջանկություն է... »:

Շնորհավորանքները չեզրափակվեցին միայն նոյեմբերի 6-ին Պավել Լիսիցյանի տարեդարձի օրվա կապակցությամբ. այն անմոռանալի անակնկալի տեսքով շարունակվեց նաև նոյեմբերի 9-ին, երբ Մոսկվայի Մեծ թատրոնում բեմադրվեց Ջ.Վերդիի «Աիդա» օպերան, որն այս անգամ նվիրվում էր Պ.Լիսիցյանի 90-ամյակին:

Հորբեյարը ընտանյոք հանդերձ դահլիճում է, և նորից բուռն ծափողջույններ ու ծաղկեփնջեր, ողջույններ ու շնորհավորանքներ են մատուցվում աշխարհահռչակ ոսկյա բարիտոն Պավել Լիսիցյանին:

Պ.Լիսիցյանն այն եզակի երջանիկներից է, ով հպարտությամբ և հիացմունքով կարող էր ազդարարել, որ իր անունով երկնքում ճառագող աստղը ոչ միայն փայլատակում է իր, այլև համայն մարդկության համար:

Այդ է վկայում ստորև ներկայացված «Աստեղային փաստաթղթի» հավաստագիրը:

28 դեկտեմբերի 2001 թ.

Հարգարժան հոբելյար.

Այսպիսով, մենք հավաստում ենք, որ Լիրա համաստեղության սահմաններում գտնվող նոր հայտնաբերված աստղը կոչվել է Ձեր պատվին՝ կրելով Պավել Լիսիցյան անունը:

Փաստը պաշտոնապես գրանցվել է Հազարամյակի քրոնիկոնում (ժամանակագրություն), որը միջազգայնորեն ճանաչված աստղային մատենագրություն (регистр) է և վավերացված է Քեմբրիջի Սմիթսոնյան աստրաֆիզիկական աստղադիտարանի կողմից:

Աստղը գրանցվել է այն մարդկանց խնդրանքով, ովքեր շատ են սիրում Ձեզ և ցանկանում էին դրանով ցույց տալ, թե ի՛նչ առանձնահատուկ մարդ եք դուք՝ Ձեր երկրային բացառիկ տաղանդով:

Այս յուրահատուկ և խորհմաստ նվերը մի հավերժական լույս է, որը կփայլի երկնքում, և թող այդ լույսի ջերմությամբ լցվի Ձեր բարի սիրտը գալիք երկար-երկար տարիների ընթացքում:

Հազարամյակի քրոնիկոնը գրանցող

Թանկագին մեր ուսուցիչ.

«Լինեք միշտ մեզ հետ, և թող լույսը Ձեր աստղի, ինչպես և Ձեր ձայնը, մարդկության համար նոր ճանապարհի հարթի դեպի երջանկություն»:

Միբով, հիացմունքով և խոնարհումով՝ ուսանողների կողմից:

Պ.Լիսիցյան,- «Հիմա ես կերգեմ»:
«Վառվի՜ր, վառվի՜ր իմ աստղ»:

Ահա այսպիսի անկեղծ, գեղեցիկ ու անմիջական բառերով է ավարտել Պավել Լիսիցյանն իրեն մատուցած «Աստեղային փաստաթուղթը»:

Կորուստ, որը դարձավ հոգու պորթկուում: Հաճախ, մեր գիտակցության մեջ

⁶³Վարդանյան Լ., Աստեղային փաստաթուղթ (Պ. Լիսիցյանի զարմուհի՝ Լիլիա Վարդանյանի անձնական արխիվից, անտիպ): Տե՛ս հավելված[2]:

սևեռվում են նախախնամության և կանխատեսման այնպիսի չբացահայտված երևույթներ, որոնք իրատեսական ու որոշիչ են դառնում իրադարձությունների հետագա զարգացման առիթով, բնությունն իր դրական և բացասական իմպուլսներով մարդուն հաղորդակից է դարձնում կանխագագումների բացահայտմանը, իսկ Պ.Լիսիցյանի զարմուհի՝ Կարինա Հախնազարովայի համար այդ նախախնամությունը բոթաբեր էր:

«Հուլիսի 6-ին, իմ սենյակ մտավ մի սև ծիծեռնակ, և թռչելով երկու սենյակներով՝ կախվեց վարագույրից չարաբաստիկ «M» տառի տեսքով:

Կեսօրին հեռուստատեսությամբ հաղորդեցին Պավել Լիսիցյանի մահվան մասին:

Ի՞նչ էր սա. նշան՝ թե՞ կանխատեսում, չեմ կարող բացատրել, իսկ ինչպե՞ս բացատրել անբացատրելին: Քանի որ նման բացատրությունները նշանակում է արտահայտվել, խոսել, իսկ այստեղ խոսքեր պետք չեն...

Ֆրանսիական այսպիսի մի արտահայտություն կա՝ «douleur secree» - սուրբ ցավ: Ցավ, որի մասին չեն խոսում, որի մասին ավելի լավ է լռել»⁶⁴:

Պավել Լիսիցյանի մահը ցնցեց ողջ աշխարհը, զանգվածային լրատվամիջոցները՝ մամուլը («Труд», «Культура», «Голос Армении»), ռադիոն ու հեռուստատեսությունը չէր դադարում շարունակ տեղեկություն հաղորդել նրա մահվան մասին: Աշխարհահռչակ բարիտոնի մահը սգում էր ոչ միայն արվեստասեր հասարակությունը, այլև ժողովուրդը, որովհետև նա ժողովրդի սիրելի և արժանավոր զավակն էր:

Համաշխարհային մամուլն իր էջերում մի առանձնահատուկ գնահատանքի և ցավակցության անրադարձ էր կատարել Պ. Լիսիցյանի մահվան առիթով:

«Մոսկվայեն տխուր լուր ստացվեցավ. մահացավ 20-րդ դարու մեծագույն երգիչ, ՄՍՀՄ ժողովրդական դերասան՝ Բավել Լիսիցեանը: Շուրջ քառորդ դար փայլատակելով ԽՍՀՄ Մեծ թատրոնի բեմին մեջ, ելույթներով հանդես գալով «Լա Սկալայ»-ի մեջ, «Մեթրոպոլիդան օբերա»-ի մեջ և աշխարհի միուս խոշոր թատրոններու մեջ՝ Լիսիցեանը կարողացավ նաև իր ծանրակշիռ ավանդը ներդնել հայրենի ձայնամարզութեան արվեստի զարգացման գործէն ներս թէ որպէս մանկավարժ, թէ որպէս մեներգիչ: Սպենդարյանի անվան օպերային թատրոնի բեմահարթակին մեջ դերասանը հանդես եկավ մինչև 1940 թվականը, ապա հրավիրվեցավ Մեծ թատրոն հրավիրվել է առաջ 1940-էն հետո, արդեն որպէս երկրի լավագույն օպերային թատրոնի մեներգիչ իր Արշակ

⁶⁴ Հախնազարյան Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհին), անձնական արխիվ, անտիպ:

Երկրորդը և Թաթուլ իշխանը այդպեսալ մնացին անգերագանցելի»⁶⁵:

Բազմաթիվ մահախոսականներ, որոնք ծնվել էին անկեղծ սիրուց, հարզանքից և հոգու պոռթկումից՝ նվիրվում էին երջանկահիշատակ Պավել Լիսիցյանին:

Պ.Լիսիցյանի զարմուհի Լիլիա Ստեփանյանի անձնական արխիվում էր գտնվում վերջինիս մայրիկի՝ Նազելի Լիսիցյանի ձեռքով գրված մահախոսականը նվիրված իր արյունակից ազգական եղբայր Պավել Լիսիցյանի հիշատակին: Ներկայացնում եմ առաջին անգամ մահախոսականը ամբողջությամբ:

«Պավել Գերասիմի Լիսիցյանի, որպես արտիստ նրա տաղանդի, նրա հիանալի ձայնի մասին շատ բան է ասվել և դեռ շատ էլ կասվի:

Սակայն ես ուզում եմ նրա բարեկամների և հարազատների անունից մի քանի խոսք ասել նրա մասին՝ որպես մարդ: Նրան բնորոշում էր բացառիկ հատկություն՝ շատ մեծ բարյացակամություն և մարդկանց հանդեպ ուշադիր վերաբերմունք: «Լուրեր» («Известия») ամսագրում ասվում է, որ նա, ով գոնե մեկ անգամ լսել է նրա երգեցողությունը, երբեք չի մոռանա նրա հոյակապ ձայնը: Դրան պետք է ավելացնել նաև այն, որ նա, ով գոնե մեկ անգամ հանդիպել է նրան, երբեք չի մոռանա նրա բարի ժպիտն ու զրուցակցի հանդեպ ուշադիր վերաբերմունքը:

Նա հիանալի որդի, ամուսին, հայր և պապիկ է եղել: Նրա մեծ ընտանիքում, ուր մեծանում էին նրա չորս զավակները, միշտ տիրում էր երջանիկ, խաղաղ, հոգատար մթնոլորտ: Այս հարցում, իհարկե նպաստում էր նրա կինը՝ Դազմարա Ալեքսանդրովնան, ում նա խենթի պես սիրում էր:

Պավել Լիսիցյանի գերող ձայնում արտահայտվել են այդ բացառիկ անձնական հատկությունները:

Վերջին ժամանակները, երբ նա շատ թույլ էր ու տանից դուրս չէր գալիս, երբեմն նա հեռախոսով երգում էր ինձ՝ իր զարմուհու, համարյա 100-ամյա Նազելի Ստեփանի Լիսիցյանի համար, ինչ-որ հայկական ժողովրդական երգ:

Զարմուհու և քեռի Պավլիկի բարի հիշատակը ընդմիշտ պահպանվել են մեր՝ նրա բարեկամների և մերձավորների սրտերում:

Ննջիր խաղաղությամբ, թանկագին քեռի Պավլիկ:

⁶⁵ Բավել Լիսիցեանի հիշատակին, «Նոր աշխարհ» թերթ, Աթենք, երկուշաբթի, 2 օգոստոսի, 2004, էջ 6:

Ժողովուրդը հպարտանում է իր ազգի մեծություններով, երբ ազգը աշխարհին ճանաչելի է դառնում իր գավակների նվաճումներով և վերջիններս կոչվում են մեծահամբավ, առավելապես նման մեծության համար արդարացում է դառնում եղած արժանիքներն ըստ արժանվույն գնահատելը, իսկ երբ այն արդեն դարձել է «հավերժություն» և եթե դու կորցնում ես համաշխարհային նման մեծությանը, անգամ եթե նա քո ծնողն է, այս պարագայում անհնար է զսպել հոգու պոռթկումն ու ճիչը, քանի որ այն պարտադիր կերպով վերածվում է անլռելի խոսքի:

Իր անմատանալի և անջնջելի հիշողությունների մասին, ահա այսպիսի հետաքրքիր տողերով է բարձրաձայնում Պ. Լիսիցյանի որդի՝ Ռուբեն Լիսիցյանը:

–«Ինչքան մարդ է նշել հարյուրամյա տարեդարձը: Դա գրեթե միշտ է: Նշանակում է, որ նրանք այլևս չկան: Կային, իսկ հիմա չկան և այլևս չեն լինի: Իսկ մենք ուրախանում ենք, հիշում նրանց անցած կյանքը և այլևս չենք լացում, որ չենք տեսնելու նրանց, քանի որ հարյուր տարին՝ դա արդեն շատ է:

Ես իմ հայրիկին ու մայրիկին դեռ երիտասարդ և գեղեցիկ եմ հիշում: Նրանց նայում են, ճանաչում: Այն ժամանակ ճանաչում էին առանց հեռուստատեսության և կինոյի: Այն ժամանակ շատ էին սիրում արվեստը, սովետական արվեստը: Ուրիշը չկար: Անգամ երեխաներին էին ճանաչում. «Տե՛ս, Լիսիցյանի որդին է»: Ես ամաչում եմ, թաքցնում աչքերս ու ցանկանում արագ գնալ:

Մեծ թատրոն: Երազանքների, հանգստության աշխարհ, երբեմնի իմ մանկության տունը: Մինչև հիմա հիշում եմ ետնաբեմի (կուլիսի) հոտը: Կանգնած է Սերյոժա Լեմեշովը իր դստեր՝ Մաշկայի հետ: Վազում եմ պարտերի մոտ, նստում մայրիկիս հետ, խվռտում, ինչպես բոլոր երեխաներն են անում: «Եթե դու շարունակես խանգարել, ես կասեմ Վասիլի Վասիլևիչին, և նա կվռնդի քեզ թատրոնից»: Ահով նայում եմ դիրիժորին: Կարծես վտանգն անցավ: Լուռ նստած եմ: Հնչում է Պ.Չայկովսկու երաժշտությունը՝ նա մահացել է ընդամենը 60 տարի առաջ: Վարագույրը բացվում է: Մուրաբա են եփում: Գեղեցիկ դեկորացիաներ են: Երգում են: Հանկարծ ներս են մտնում հայրիկը և քեռի Սերյոժան: Դահլիճը պայթում է բարձր ծափահարություններից և «բրավո»-ի ճիչերից: Ես

⁶⁶ Լիսիցյան Ն., Նվիրիված Պ.Լիսիցյանի հիշատակին, Լիլիա Ստեփանյանի անձնական արխիվ, անտիպ [4]:

նստած, վախենում եմ Ներոլսինից. նրա մոտ այնքան սուր փայտիկ կա, սակայն լուռ հպարտանում եմ: Դեկորացիաները փոփոխվում են: Դուել՝ (մենամարտ): Հայրիկը հաղթում է, և ես երջանիկ եմ: Քեռի Սերյոժայի դաժան ճակատագրի համար ես չեի էլ մտածում. ինքն է մեղավոր: Ինչու՞ ես մենամարտի կանչում, եթե կրակել չգիտես: Ես հույս ունեի, որ դեռ կհասցնեմ խաղալ տանը, սակայն իզուր: Մի ողջ ժամ ինչ-որ կին բեմի վրա չէր կարողանում նամակ գրել: Կարճ ասած, այդ երեկո խաղը չստացվեց: Գալիս է հայրիկը, նրա դեմքը գրիմից հետո այնքան փափուկ է, բարի: «Դու կարծում ես, որ այսօր թավջութակ բավականաչափ պարապե՞լ ես»: Մի՞թե չի կարելի այլ արտահայտություն մտածել: Ինչու՞ է միշտ անհրաժեշտ այդ անիծված թավջութակի մասին հարցնել: Քիչ է այն, որ ես ատում եմ թավջութակը, ես դեռ պարտավոր եմ այն ողջ ծառուղով հետս քարշ տալ դպրոց: Իսկ ինքն անձամբ ոչինչ չի տանում: Այ ես էլ կուզեի երգել: Այս ամենում քեռի Սլավա Ռոստրոպովիչն է մեղավոր. որդիդ թավջութակ նվագողի ձեռքեր ունի, ես նրա հետ կպարապեմ: Իսկ ինձ հարցրե՞լ եք:

60-ականների վերջ: Մենք հայրիկի հետ ԳԴՀ-ում մրցույթի ենք: Այսօր երրորդ խաղաշրջանն է: Ես չեմ կարողանում քնել: Հայրիկը մի փոքր մրսել է և խռացնում է: Հայրիկ, մի՛ խռացրու, ես պարտադիր պետք է քնեմ, ձայնս չի հնչի: Նա վեր է կենում, նստում սեղանի շուրջ: Առավոտյան արթնանում եմ՝ հայրիկը նստած է սեղանի մոտ և ինձ է նայում: Դու իմ պատճառով չես քնել: Այսօր քո օրն է: Դու պետք է հաղթես: Հագնվիր, քեզ կարգի բեր, նախաճաշենք ու գնանք ձայնավարժություն երգելու: Երեկո է, սպասում ենք արդյունքներին: Ներս է մտնում մաեստրո Խրիստո Բրիմբարովը՝ Բուլղարիայից: Անցնում է մեր կողքով և մատը հպելով իր շուրթերին, «ս՛,ս՛,ս՛»,- ցույց տալիս, խոսել դեռ չի կարելի: Հայրիկի աչքերին արցունքներ են. մենք հաղթել ենք:

2004 թվական: Ես ամառանոցում եմ: Նստած է հայրիկը՝ գլուխը ձեռքերով բռնած: Արի նարդի խաղանք: Չեմ ուզում: Արի քո սիրելի պասյանսը խաղանք: Չեմ ուզում: Իսկ ի՞նչ ես ուզում: Ոչինչ: Ժամանակն է: Ոչ, դեռ ժամանակը չէ, ժամանակը չէ: Ես համբուրում եմ նրա ձեռքը: Այն տաք է:

Մենք կանգնած ենք հայկական եկեղեցում, այստեղ են նրա չորս երեխաները: Ոչ ոք չկա, մեզ միայնակ են թողել՝ որպեսզի չխանգարեն: Ես համբուրում եմ նրա ձեռքը: Այն սառն է: Արցունքները հոսում են մեր՝ նրա երեխաների աչքերից: Մենք դեռ շատ անգամ «հայրիկ» կասենք: Պատասխան էլ երբեք չի լինի: Նա գնաց, աստղը մարեց: 100

տարի ... որքան քիչ է դա⁶⁷:

Ահա այսպիսի և նման շատ այլ խոսքեր ընթերցվեցին հուղարկավորության ժամանակ:

Պավել Լիսիցյանի ավագ որդի՝ Գերասիմ Լիսիցյանը, իր մտքի թանկարժեք գոհարները, խոհերն ու հուշերը՝ նվիրված իր թանկագին և մեծապատիվ հորը արտահայտել է բանաստեղծությունների միջոցով:

Հեղինակն իր երեք բանաստեղծություններում էլ ապրել է այն հոգեվիճակը, որտեղ հայրը ներկայանում է անգնահատելի, անհամեմատելի, բացառիկ անհատականություն՝ մոտեցնելով նրան և՛ Աստծուն, և՛ Արեգակին, և՛ Լուսին:

Հետևաբար, քանի դեռ ապրում է որդին, հայրը նույնպես կհավերժանա, կապրի նրա հոգում և սրտում:

Երեք բանաստեղծություն նվիրված հայրիկիս

I

Ինչպիսի բուրգերից, ինչպիսի կանխագիտակցված երազներից ենք

Մենք սովորել վճարել այն կորուստները, որոնք պետք է փոխհատուցվեն:

Հեռացողների նուրբ հետքը անմեղորեն դաժան է ու խիստ,

Իսկ ո՞վ կարող էր թույլ տալ, որ դատարկ մնան այն տեղերը, որոնք անհրաժեշտ են:

Անհագուրդ Արարիչ, Դու հագեցա՞ր արդյոք նրանց հոգիների նեկտարով:

-Ոչ: Հողից-հող, ծաղկունքից-աղբ, միննույն է:

Ապա ինչու՞ է մեզ բնորոշ կյանքի այս տոնավաճառային կանչը:

Իսկ ինչի՞ համար է այս ակնթարթը: Եթե այդպես է՝ թող իշխեր անդեմությունը:

Օ՛, ինչպիսի Արեգակ, Դու հավերժ փակեցիր խավարում:

Ի՞նչ է Քեզ համար մեր գիշերը, անողոք, քմահաճ Արարիչ:

Չարաճճի երեխան անգամ ջարդում է իր սիրած տիկնիկները,

Ինքն իր տերն է, չափսոսալով վատագույն կորստի համար:

Ուրանալ, չտեսնել, չիմանալ, չուզենալ, չսիրել,

⁶⁷ Лисициан Р. Воспоминание, из архива Степанян Л., անտիպ:

Լոկ մեկ մետրոնումով իր գոյությունը սահմանափակել:
Տեր Աստված, ինչու՞ է այդքան բարակ Քո նուրբ թելը,
Որի վրա Դու մեզ պտտում ես զարմանալի ուղեծրով:

II

Դարավոր խառնակության կարմիր ծուխը
Հուշամատյաններին փորագրեց Շեքսպիրը:
Ջուլիետի հանդեպ Ռոմեոյի հավերժական զգացմունքով է
Ապրել, ապրում ու հենց պտտվում աշխարհը:

Ինչու՞ լոկ ամպրոպներն ու դժբախտությունները
Տազնապալից աղմկեն այս կյանքում:
Ինչու՞ վավելի վատը կլիներ Ջուլիետը,
Եթե նա ստիպված չլիներ մահանալ:

Եթե հիասքանչ ծերությունը
Չթողներ Ռոմեոյից ձեռքերը բաժանել,
Եթե փառավոր կյանքը շարունակվեր,
Որքա՞ն այն կտներ:

Եթե այն ամենը, ինչն արժանավոր է այս աշխարհում,
Այդ բոլորը ծերունիները տանեին միասին,
Որպեսզի երջանիկ երեխաները կարդային
Բանաստեղծություններ նրանց ադամանդե հարսանիքին:

III

ՀԱՄԼԵՏ

Հոր ստվերը՝ լոկ ստվեր է, չես փարվի
Քո սիրելի ձեռքերին դու չես հավի
Սա պատրանքների ջրաղաց է,

Եվ կցնդի, եթե աչքդ դու թարթես:

Հոր ստվերը... Սակայն ինչպես եմ ցանկանում ոռնալ,
Որ կենդանության օրոք, ինչպիսի կորուստ,
Այն բառերը, որոնք պետք էին, քեզ չասացի
Իսկ հիմա դրանք արդեն հետ չես բերի:

Որքան բան է կոպիտ, համառ ու դատարկ,
Տաքացած կամ պարզապես հիմարաբար
Դուրս թռչել դաժանաբար, ինչպես փամփուշտը.
Հիշում ես՝ խեղդվում ես դրանցից:

Հոր ստվերը... Դու ինձ համար ամեն ինչ էիր:
Ես, քո որդին եմ, տնքալով խելացնոր:
Չեմ ընդունի օրենքը երկրային
Եվ չեմ հավատում Դատաստանի Օրվան:

Քեզ կենդանության օրոք այնպես էի մեծարում,
Որ մարդու համար, այդ մեծարանքը անհավանական էր թվում,
Իսկ բոլոր ժամանակների առանցքում,
Որպես փայլատակող, ինձ համար դու միակն ես:

Դու հեռացար, որպեսզի հառնես ինչպես Աստված,
Ես աղոթում եմ քեզ համար մոլագարության չափ.
Հայր իմ՝ Աստված, ներում եմ հայցում,
Որպեսզի ես ինքս ինձ ներել կարողանամ»⁶⁸:

1. 6. Պ.Լիսիցյանի 100-ամյա հոբելյանը

Այն, որ մեր պետական այրերը փորձում են դեմքով շրջվել դեպի մշակութային արժեքներն ու գնահատանքի և հարգանքի տուրք մատուցել արվեստի

⁶⁸ Лисициан Г., Чужая роль, Три стихотворения папе, Москва, 2005, стр. 3, 49, 51.

երախտավորներին, ակնհայտ է: Հետևաբար, երբ նորովի են գնահատվում այդ արժեքները, հոգևոր գենոֆոնդի պահպանման հարցը դառնում է առաջնային: Մաշտոցի պողոտայի շինությունները զարդարող հուշաքարերի սիմֆոնիան համալրվեց ևս մեկով: 2011 թվականին, Մաշտոցի 48 հասցեում Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի առաջարկությամբ Երևանի ավագանու որոշմամբ տեղադրվեց Պավել Լիսիցյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը, որի տեղադրման գործում Լիսիցյանի դուստրերի հետ մեկտեղ պետական լուրջ աջակցություն է ցուցաբերել նաև ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը. սա խոսուն վկայությունն է այն բանի, որ Լիսիցյանի՝ իր ազգին կտակած ժառանգությունն անգնահատելի է: Ճանաչողությունը, տաղանդներին գնահատելու կարողությունը նաև այս կերպ է արմատավորվում սերունդների գիտակցության մեջ: Ի դեպ, արժե կարևորել այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրային հեռուստատեսությունն իր լրատվական հաղորդումներից մեկում հատուկ անդրադարձ է կատարել այս թեմային, ցուցադրելով հատկապես հուշատախտակի բացմանն առնչվող միջոցառումից որոշ դրվագներ: Հուշաքարի բացմանն իրենց մասնակցությունն էին բերել մշակութային ոլորտի մի շարք ճանաչված արվեստագետներ, մասնավորապես անվանի կոմպոզիտորներ Էդվարդ Միրզոյանն ու Վլադիլեն Բայանը, պրոֆեսորներ Ռաֆայել Հակոբյանցն ու Դավիթ Ղազարյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Յուրի Դավթյանը, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Օլգա Գաբայանը, ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Վալերի Հարությունյանը, պրոֆեսորներ Սվետլանա Կոլոսարյանը, Ռուբեն Տերտերյանը, Լիլիա Վարդանյանը, Սերգեյ, Էրա և Գևորգ Սարաջևները, Սուսաննա Մարտիրոսյանը, Կարինա Հախնազարովան և այլք, ինչպես նաև Լիսիցյանների ընտանիքի մտերիմներ, բարեկամներ, ընկերներ: Կարևորելով Պ.Լիսիցյանի թողած ավանդը արվեստի ոլորտում, օրվա բանախոսները ջերմագին հիշողություններով, գնահատանքի ու արժևորման սրտաբուխ խոսքերով զարդարեցին օրվա մտերմիկ ու ջերմ մթնոլորտը:

Մարդկային պարզ ու մեծ հոգու, մեծ տաղանդի տեր անհատականություն, մեծ ընկեր, մեծ քաղաքացի, մեծ արվեստագետ: Մեր ազգի պարծանք՝ Պավել Լիսիցյան: Ինչպես ճապոնացիներն են ասում՝ մարդը ազգային գանձ է: Ամեն մարդ չէ, որ կարող է համարվել ազգային գանձ: Պավել Լիսիցյանի անունն իր պատվավոր տեղն է գրավում մեր աստղաբույլում: Պավել Լիսիցյանը մեր ժողովրդի ազգային գանձն է,- այս խոսքերով

արժևորեց իր մտերիմ ընկերոջ հիշատակը Վլադիլեն Բայանը⁶⁹:

Միջոցառման ընթացքում Դավիթ Ղազարյանն իր հիշողությունները շաղախել էր մեծարանքի ու գովասանքի խոսքերով:

-Փառավոր մարդ, բարեհամբույր, անգուգական երևույթ: Մարդ, ով բարձր ինտելեկտի ու ազնվական կերպարի տեր անձնավորություն էր: Թավշյա բարիտոն, մեծ երգիչ՝ ում հաստուկ էր արքայական կեցվածքը: Խոսելիս կարծես նա երգում էր⁷⁰:

Ինքնաբուխ ելույթները շատ էին:

Առավել ուշագրավ էր Ռաֆայել Հակոբյանցի մեծարանքի խոսքը իր լավագույն բարեկամի, մտերիմ ընկերոջ, տաղանդաշատ հայի՝ Պավել Լիսիցյանի մասին:

-Անկեղծ ասած, նա ճանաչվել է 20-րդ դարի «Ռսկե» ձայնը: Նրա ձայնը համարվել է ամենագեղեցիկը, իսկ կատարումը՝ ամենագագամունքայինը: Այս գեղեցիկ կոչումը հաճախ է տրվում շատ հանրաճանաչ վոկալիստների, սակայն անգամ ամենամեծ ձայնային աստղաբույլում, ականավոր երգիչների մեջ կա ձայն, որը դժվար է համեմատել որևէ մեկի հետ: Այս ամենը վերաբերում է մեր մեծահամբավ հայրենակից Պավել Լիսիցյանին: «Ռսկե» ձայն, ադամանդյա նրբերանգով, որը գալիս էր վերնից⁷¹:

Իր խոսքում էդվարդ Միրզոյանը ընդգծեց Լիսիցյան երգչի այն հատկանիշներն ու առավելությունները, որը հաստուկ է բարձրակարգ ու նվիրյալ արվեստագետին:

-Ինչպե՞ս կարելի է մոռանալ Պավել Լիսիցյանին՝ Թաթուլի դերում, ի՛նչ հմայիչ էր իշխանը, աշխարհում իր նմանը չունեցող, ազնվական, գեղեցիկ ու թավշյա հնչողությամբ բարիտոնը: Այդպիսի բարիտոն չի եղել և այսօր էլ դեռևս չկա⁷²:

Մեծ շուքով և հանդիսավորությամբ կազմակերպված հուշատախտակի բացման արարողակարգի նպատակն արդարացված է. Ճանաչողությունը, տաղանդներին գնահատելու կարողությունը նաև այս կերպ է արմատավորվում սերունդների գիտակցության մեջ:

Օրվա խորհուրդն, անկասկած, ներառեց նաև Պավել Լիսիցյանի 100-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն, որը տեղի ունեցավ Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, որի ընթացքում

⁶⁹ Վլադիլեն Բայանի հետ ունեցած անձնական զրույցից:

⁷⁰ Դավիթ Ղազարյանի հետ ունեցած անձնական զրույցից:

⁷¹ Ռաֆայել Հակոբյանցի հետ ունեցած անձնական զրույցից:

⁷² Էդվարդ Միրզոյանի հետ ունեցած անձնական զրույցից:

երաժշտական կատարումներով մեծ վարպետին իրենց խոնարհումը բերեցին օպերային թատրոնի առաջատար և դափնեկրի կոչմանն արժանացած երիտասարդ երգիչներ Արշակ Կուզիկյանը և Մերի Մովսիսյանը:

Նշենք, որ կառավարության որոշմամբ ստեղծված «Պավել Լիսիցյան-100» հոբելյանական հանձնաժողովն արդեն կայացրել էր ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստներ, պետական մրցանակի դափնեկիրներ Պավել Լիսիցյանի 100-ամյա և Տաթևիկ Սազանդարյանի 95-ամյա հոբելյաններին նվիրած մեներգիչների հանրապետական մրցույթի (հունիսի 20-ից հուլիսի 5-ը, 2011 թվական) կազմակերպման մասին որոշումը:

Տեղեկացնենք նաև, որ միջոցառման կազմակերպչական աշխատանքներում լուրջ ներդրում է ունեցել հատկապես Լիսիցյանի զարմուհին՝ Կարինա Հախնազարովան: Հուշաքարի տառերի զարդանախշման ու գեղագիտական ոճի ապահովման աշխատանքներն իրականացրել է ճարտարապետ Իզա Չոլախյանը, իսկ քանդակագործն է Ջավեն Փարիկյանը:

1.7. Պ.Լիսիցյանի դիմանկարը հայտնի և անհայտ նկարիչների կտավներում

Պավել Լիսիցյանին իրենց կտավներում անմահացրել են ոչ միայն հանրահայտ նկարիչներն, այլև նրա ուսանողներն ու անհայտ դիմանկարիչներ:

Մարտիրոս Սարյանը 1942-ին վրձնել է Լիսիցյանի դիմանկարը: «1942 թվականի թատերական աշխատանքներից անհամեմատ հետաքրքրական են Ջառա Դոլուխանյանի, Պավել Լիսիցյանի, Մուրեն Քոչարյանի և Ալեքսանդր Սպենդիարյանի դիմանկարները:

Սարյանը ոչ միայն բնությունն է «վերնթերցում», այլև մարդու հոգեկան գաղտնարանները թափանցելու եզակի ընդունակություն ունի: Նվազ հետաքրքրական չէ Պավել Լիսիցյանի գեղանկարչական կերպարը, այն երգչի, որ մեր ազգային թատրոնի պարծանքներից էր, իսկ հիմա էլ Մեծ թատրոնի բեմն է զարդարում: Դիմանկարին նայողը իսկույն կարող է ճանաչել նրա պարզ ու նպատակասլաց բնավորությունը: Միաժամանակ արտիստ է Լիսիցյանը, Օնեգինի, Թաթուլի, Մոսիի դերակատար, իր գործն իմացող, արժանապատիվ անձնավորություն: Դիմանկարի ֆոնը բաց է, միագույն, միայն թե ձախից երևում է նկարչի արվեստանոցում կախված իր լուսանկարներից մեկը: Տպավորությունն այն է, որ կարծես լուսանկարն էլ մյուս կողմից է գնում Լիսիցյանին...

Բնորոշը երկու կողմից առնված է տեսադաշտի մեջ: Չլինի՞ թե մի բան վրիպի⁷³»:

Մինչև կյանքի վերջին ժամանակները Պ.Լիսիցյանը աշխատում էր վոկալի գծով մանկավարժ-խորհրդատու Մոսկովյան պետական ակադեմիական ֆիլիարմոնիայի Մեծ թատրոնում: Չնայած պատկառելի տարիքին, նա Իրինա Արխիպովայի ֆոնդի մանկավարժ-խորհրդատուն էր, ամեն օր պարապում էր երգիչների հետ, սեմինարներ էր դեկավարում, Ռուսաստանում և արտասահմանում բազմաթիվ վոկալ մրցույթներում որպես հանձնաժողովի անդամ էր հանդես գալիս: Եվ ինչպես նշում է Մարկ Պետրոսյանը. «Արդեն մի քանի տարի է ԳԴՀ-ի Վայմար քաղաքում տեղի է ունենում վոկալ արվեստի վարպետների սեմինար: Տասնյակ երկրների ներկայացուցիչների թվում դասախոսություններով հանդես է գալիս և ՄՍՀՄ-ի մշտական ներկայացուցիչ Պ.Լիսիցյանը⁷⁴»:

Հայտնիներին հատուկ է շարժանկարը: Անգամ չլինելով ծաղրանկարիչ՝ փորձում էս սիրելի, նշանավոր և հայտնի մարդուն հիշել կամ անմահացնել նկարի տեսքով:

Այդ է վկայում 1981-ին Գերմանիայի Վայմար քաղաքում Պ.Լիսիցյանի ուսանողներից մեկի ձեռքով արված հետաքրքիր շարժանկարը, որտեղ դրսևորվել է Լիսիցյանի ջերմեռանդությունը իր ժառանգների բարձրարվեստ երգեցողության մեջ:

Այս ակնթարթային, գեղեցիկ ու խորիմաստ պահերը անմահացրած գերմանացի երիտասարդ երգչի շարժանկարը, ում անունն անհայտ մնաց, ինձ տրամադրեց Պ.Լիսիցյանի զարմուհի՝ Կարինա Հախնազարովան, ով ավելի քան երեք տասնամյակ խնամքով պահել և փայփայել էր այն:

Մոսկվայի Մեծ թատրոնի հետ Խորհրդային Միության գեղանկարիչ Պավել Ալեքսանդրովիչ Սկոտարին կապում էր երկարամյա ստեղծագործական բարեկամությունը: Նա կերտել է բազմաթիվ հանրահայտ օպերային արտիստների դիմանկարներ, այդ թվում նաև Պավել Լիսիցյանի դիմանկարը: 1958 թվականին Պ.Լիսիցյանին իր ներկապնակի տաք ու վառ գույներով ներկայացրել է ռուս հանրահայտ նկարիչը, որտեղ աշխարհահռչակ օպերային երգիչը պատկերված է Ժ.Բիզեի «Կարմեն» օպերայի բեմական հագուստներով՝ Էսկամիլիոյի կերպարում:

Պ.Սկոտարի այս գունազարդ նկարում հոգու, կերպարի և ներաշխարհի լուրջ

⁷³ Խալաթյան Լ., Մարյանը և թատրոնը, Երևան, 1960, էջ 82-83:

⁷⁴ Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան, էջ 73:

ներդաշնակություն կա: Պավել Լիսիցյանի հայացքը վերելքի և հոգու թռիչք է մարմնավորում: Գունային գամման չափազանց ազդեցիկ է: Նկարիչը ցայտուն կերպով արտացոլել է Պ.Լիսիցյանի վեհաշունչ կեցվածքը: Ծորացող մեղեդայնություն և հուզականություն կա նրա հայացքում: Ցլամարտիկի կերպարը համահունչ է նվաճողի և հաղթողի բնավորությանը:

1963 թվականին այս նկարը նկարել է Ուզբեկստանում հայտնի նկարիչ Ռ.Լևիցկին: Նկարի անկյունում նշված է ոչ միայն տարեթիվն ու նկարչի ստորագրությունը, այլև մի փոքրիկ երկտող՝ «Խորին հարգանքներով նվիրում եմ փառահեղ արտիստի ու հիանալի մի մարդու՝ Պավել Գերասիմովիչին»:

Դիմանկար, որն իր մեջ ամփոփել է մարդկային մի ողջ նկարագիր ունեցող խտացված կերպար: Որքան էլ նկարիչը փորձել է Պ.Լիսիցյանին խիստ կերպարում ներկայացնել, պարզորոշ նկատելի է Լիսիցյանի դեպի հեռուները ընկղմվելու խորաթափանցությունը, խորիմաստությունը արվեստի ողջ էությունը նվաճողի ներքին խառնվածքը, աչքերից առկայծող ծով բարությունն ու ջերմությունը:

Մոսկվայաբնակ հայ հայտնի ռեալիստ-նկարիչ Դմիտրի Արկադիի Նալբանդյանը 1956 թվականին կտավի վրա նույնպես անմահացրել է Պավել Լիսիցյանի կերպարը⁷⁵:

ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, բնանկարիչ Նիկոլայ Սոկոլովը 1940-ին կերտել է Պ.Լիսիցյանի դիմանկարը Պ.Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում, որտեղ Պ.Լիսիցյանը մարմնավորել է Ելեցկու՝ անսահման քնքուշ զգացմունքներով լեցուն, ջերմ ու անմիջական բնավորության տեր իշխանի կերպարը: Նկարում ակնհայտ է Պ.Լիսիցյանի ազնվագարմ ու իշխանական կերպարը, ինչն էլ այնքան նուրբ, ու բնական իրավիճակ է ստեղծում դերակատարման մեջ, որն էլ համահունչ է Պ.Լիսիցյանի ներքին խառնվածքին և բնավորությանը:

Պավել Լիսիցյանի զարմուհի՝ Կարինա Հախնազարովան պատմում է, որ նա միշտ հիացել է այն գեղեցիկ զարդատուփերով, որոնք գտնվում էին իր քեռի Պավլիկի տանը: Զարդատուփերից մեկի վրա պատկերված է Պ.Լիսիցյանը, որտեղ նա մարմնավորել էր Ջ.Վերդիի «Աիդա» օպերայում Ամոնասրոյի կերպարը, իսկ մյուս զարդատուփի վրա պատկերված է նրա չքնաղ կինը՝ Դագմարա Ալեքսանդրի Լիսիցյանը:

⁷⁵ **Парамонов А.В.** Дмитрий Аркадьевич Налбандян, “Искусство”, Москва, 1976, стр. 192.

1.8. Պ.Լիսիցյանի անվան երիտասարդ բարիտոնների

միջազգային մրցույթ-փառատոնը

Պ.Լիսիցյանն իրոք, իր տաղանդը նվիրաբերեց մարդկությանը, արվեստի բնագավառում՝ սերունդների կրթությանն ու առաջընթացի ապահովմանը: Լուրջ ժառանգություն թողնելով ապագային և հատկապես արվեստասեր հասարակությանը, մեծահամբավ բարիտոնը ըստ արժանվույն էլ սիրվել ու գնահատվել է, մեծարանքի արժանացել ու փառքի բազում դափնիներ նվաճել: Երջանիկ մարդու, բացառիկ անհատի կերպարը տրվել է նրան ի վերուստ, քանզի հոգու և մարդու բարձրագույն տեսակի ներդաշնակությունը նրա պարագայում միշտ քայլել են կողք-կողքի:

Ի դեպ, ինչպես Պ.Լիսիցյանի զավակներն են հավաստում, որ աշխարհահռչակ «թավշյա բարիտոնը» իր կատարումներով հանդես է եկել նաև Կազանի արվեստասեր հասարակության առջև:

Արդեն մի քանի տարի է, որպես ավանդույթի շարունակական տրամաբանություն, Մոսկվայում մեծ հանդիսությամբ տեղի է ունենում Պ.Լիսիցյանի անվան միջազգային մրցույթ-փառատոն, որին մասնակցում են աշխարհի տարբեր երկրների ներկայացուցիչներ:

Տեղեկացնեմ, թե ինչպես ծնվեց Պ.Լիսիցյանի անվան միջազգային մրցույթ-փառատոնը ստեղծելու գաղափարը:

Գաղափարի հովանավորներ են եղել Ռուսաստանի կառավարությունն Երաժշտական գործիչների միջազգային միությունը, Ռուսաստանի Պետական ակադեմիական Մեծ թատրոնը, Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության նախարարությունը:

Իր հարցազրույցներից մեկում Կարինե Լիսիցյանը (Ժյուրիի նախագահի տեղակալ, մրցույթի գեղարվեստական ղեկավար, երգչուհի, մանկավարժ, թատերական արվեստի Ռուսական ակադեմիայի պրոֆեսոր, Ռուսաստանի վաստակավոր արտիստ, Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ, «Պ.Լիսիցյանի անվան բարեգործական ֆոնդի նախագահ») հայտնում է. «Լիսիցյանի անվան մրցույթի անցկացման գաղափարը առաջացել է բազմաթիվ մարդկանց ստեղծագործական համատեղ ձգտումների արդյունքում, և երբ այդ ձգտումները համընկան, դա էլ դրդապատճառ հանդիսացավ, որ մրցույթի գաղափարն իրագործվի: Նախ մենք Պավել

Գերասիմովիչի երեխաներն ենք, մեր մայրը՝ Դագմարա Ալեքսանդրովնա Դոլուխանովան, մտածելով, խորհելով այն մասին, թե ինչպես նշենք հայրիկի ծննդյան հարյուր-ամյակը, որը կլինի 2011 թվականին, եկանք այն մտքին, որ լավ կլինի, եթե մեզ հաջողվի իրեն նվիրված ծավալուն երաժշտական ակցիա իրականացնել, որը կլինի ոչ թե վոկալ, այլ հենց բարիտոնների մրցույթ:

Մեծ թատրոնում Պավել Գերասիմովիչի գործընկերների հետ հանդիպումների ու զրույցների ժամանակ նրանք բազմիցս ինձ ասում էին, որ լավ կլինեք Լիսիցյանի անվան մրցույթ կազմակերպվեր: Այս գաղափարին աջակցեց Իրինա Կոնստանտինովնա Արխիպովան, մեծագույն երգչուհի և մանկավարժ, ով իր համաձայնությունը տվեց, որ դառնա մրցույթի նախագահ: Կարծում եմ ավելորդ է նշել նրա մեծագույն հեղինակության մասին որպես երգչուհի, մանկավարժ և մարդ: Իրինա Կոնստանտինովնայի հանդեպ Պավել Լիսիցյանը յուրահատուկ վերաբերմունք ուներ: Հայրիկը նրան համարում էր կատարյալ վոկալի տիրուհի, հիանում էր նրա բեմական կերպարով, թանկ էր գնահատում նրա ընկերությունը: Նա հաճախ մեզ պատմում էր Մեծ թատրոնի օպերային բեմադրություններում իրենց համատեղ ելույթների բերկրանքի մասին, հատկապես «Կարմեն» և «Աիդա» ներկայացումներում: Երբ ես մեր ակնառու բարիտոն Սերգեյ Պետրովիչ Լեյֆերկուսին պատմում էի մրցույթի գաղափարի մասին, ով ելույթ է ունեցել աշխարհի մեծագույն թատրոնների բեմերում, ապա նա ոչ միայն եռանդուն կերպով համաձայնեց գաղափարի հետ, այլև դրա մասին պատմեց այնպիսի մեծագույն երգիչների, ինչպիսիք են Պլաչիդո Դոմինգոն, Միրելլա Ֆրենին և Նիկոլայ Գեդդան: Նրանք նույնպես կողմ էին այս գաղափարին: Այս ամենն էլ դրդեց նրան, որպեսզի սկսվի մրցույթի կազմակերպման ծավալուն աշխատանքը: Մենք Ս. Պ. Լեյֆերկուսին առաջարկեցինք գլխավորել ժյուրիի կազմը և ուրախ էինք, որ նա դրական պատասխան տվեց մեր առաջարկին: Սերգեյ Պետրովիչը մեզ շատ օգնեց մրցույթի նախապատրաստման հարցերում:

Ինչպե՞ս էր Պ. Գերասիմովիչը վերաբերվում մրցույթներին: Ինչպե՞ս էք դուք գնահատում անցած վոկալային մրցույթի արդյունքներն, որն ըստ ժյուրիի անդամների և մասնակիցների դասվում է բարձրակարգ մրցույթների թվին:

Հայրս, մասնակցելով բազմաթիվ ռուսական և միջազգային մրցույթների աշխատանքներին, միշտ մեծ կարևորություն էր տալիս ստեղծագործական

մրցույթներին, որոնք մրցակցային հասկություններն են բարելավում, ամրացնում են նյարդային համակարգը, ստիպում են հետևել երգեցողական ռեժիմին, և կարևորը, հնարավորություն են տալիս ծայրահեղ կենտրոնացնել իրենց կարողություններն ու հմտությունները կարճ ժամանակահատվածում: Եվ, ինչը շատ կարևոր է, հաջողության դեպքում նպաստում է կատարողի ստեղծագործական և կարիերայի աճին:

Ներկայումս, երբ անցկացվում են բազմաթիվ անվանական մրցույթներ, բազմաթիվ շնորհալի երգիչներ կարող են կենտրոնանալ ստույգ երգացանկի վրա և ժյուրին ստիպված չի լինի գնահատել տարբեր տեսակի ձայները մեկ միավորով: Մենք՝ մեր մայրը, Ռուզաննան, Ռուբենը, Գերասիմը և ես, երջանիկ ենք, որ բարիտոնների առաջին մրցույթը աշխարհում՝ գուցե և միակը, կրում է Լիսիցյանի անունը: Այս մրցույթը հնարավորություն է տալիս ևս մեկ անգամ հիշել ազգային անհատականություններին: Մենք մեծ ուրախություն ապրեցինք՝ Լիսիցյանի անվան մրցույթում բացահայտելով բազմաթիվ տաղանդավոր երգիչների: Վստահ ենք, որ Պավել Գերասիմովիչին էլ կուրախացնեն մրցույթի ստեղծագործական արդյունքները»⁷⁶:

Հայաստանից մրցույթին ակտիվ մասնակցեցին Գևորգ Հակոբյանը և Դավիթ Բաբայանը:

Ինչպես նկատել է երգիչ, մանկավարժ, պրոֆեսոր Ռաֆայել Հակոբյանը՝ «...Պատահական չէ, որ Մեծ երգչի հիշատակը հավերժացնող 2009 թվականի «Երիտասարդ երգիչների 2-րդ միջազգային մրցույթը» տեղի ունեցավ Վլադիկավկազ քաղաքում, որտեղ էլ ծնվել է Պավել Լիսիցյանը⁷⁷: Այս մրցույթի հաղթողներից մեկը 19-ամյա Արսեն Սողոմոնյանն էր, ով այժմ Մոսկվայի Ստանիսլավսկու և Նեմիրովիչ-Դանչենկոյի անվան թատրոնի մենակատարն է: Իսկ 2008 թվականին տեղի ունեցած բարիտոնների առաջին մրցույթի հաղթողներից մեկը եղել է Գևորգ Հակոբյանը, ով ներկայումս Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերային թատրոնի առաջատար երգիչներից մեկն է և ՀՀ վաստակավոր արտիստը:

Արվեստը սահմաններ չի ճանաչում, առավելապես մշակույթը երբեք ազգերի միջև խտրականություն չի դնում: Մեծություններն իրենց հանճարի ուժով ոչ միայն չեզոքացնում են բոլոր կարծրատիպերը, այլև ստիպում ազգություններին բարձր

⁷⁶ ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

⁷⁷ Տե՛ս **Акапянц Р.** “Голос Армении”, Ереван, 2011, 19 ноября, стр. 7

զնահատել կատարյալն ու բացառիկը:

Պատահական չէր, որ Պավել Լիսիցյանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթի շնորհանդեսին աշխարհի տարբեր ղեկավարներ հանդես են եկել մեծարանքի ու շնորհավորանքի ուղերձներով, որի հիմնական առանցքը հենց ինքը՝ «Մեծն բարիտոն» Պավել Լիսիցյանն էր՝ արվեստի իր ողջ հմայքով ու հոգեկերտվածքով:

«Պավել Լիսիցյանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթի
մասնակիցներին և հանդիսատեսին

Ուրախ եմ ողջունել մրցույթի մասնակիցներին և հյուրերին: Ձեր տեսչահանդեսը, որը կրում է մեր հանրահայտ հայրենակից, «ոսկե բարիտոն» Պավել Լիսիցյանի անունը, միավորեց տարբեր երկրների տաղանդավոր կատարողների՝ և՛ փորձառու երգիչների, և՛ նորեկների: Տաղանդավոր երիտասարդության համար այս մրցույթին մասնակցելը ոչ միայն իրենց մասին հայտնելն է, այլև հրաշալի խթան է հետագա մասնագիտական աճի համար:

Վստահ եմ, որ Ձեր ծավալուն ստեղծագործական նախագիծը կկայանա, ձեռք կբերի իր ավանդույթները, կաջակցի քաղաքական միջազգային կապերի ամրապնդմանը և ընկերական շփումների կայացմանը: Եվ, իհարկե, երաժշտասերներին կնվիրի հրաշալիի հետ անմոռանալի հանդիպումներ:

Մրցույթի մասնակիցներին հաջողություն եմ մաղթում, իսկ հանդիսատեսին՝ վառ տպավորություններ:

Վլադիմիր Վլադիմիրովիչ Պուտին

Ռուսաստանի Դաշնության նախագահ:

Պավել Լիսիցյանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթի
կազմակերպիչներին և մասնակիցներին

Սրտանց շնորհավորում եմ Պավել Լիսիցյանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթի կազմակերպիչներին և մասնակիցներին:

XX դարի մեծագույն բարիտոն Պավել Լիսիցյանը մեր երկրի և ողջ հայկական մշակույթի հպարտությունն է:

Իր բեմական գործունեության սկիզբը անբաժան կերպով կապված է եղել Սպենդիարյանի անվան պետական թատրոնի և օպերայի բեմի հետ, որտեղ նա հայկական ազգային օպերայի կերպարների մի ողջ գրադարան է ստեղծել: Նրա

անմոռանալի ձայնը և վառ դերասանական տաղանդը հանդիսատեսի մոտ անկեղծ հիացմունք էր առաջացնում:

Բազում տարիներ նա գլխավորում էր Երևանյան կոնսերվատորիայի վոկալ ամբիոնը, դաստիարակում էր երիտասարդ ազգային երգիչներին: Մենք հպարտ ենք, որ բարիտոնների մրցույթը կհավերժացնի նրա հիշատակը:

Հաջողություն և երկարակեցություն եմ մաղթում մեր մեծարգո հայրենակից Պավել Լիսիցիանի անվան բարիտոնների միջազգային մրցույթին:

Ռոբերտ Քոչարյան

Հայաստանի Հանրապետության նախագահ

Հարգելի ընկերներ,

Մոսկվայի կառավարության և անձամբ իմ անունից ողջունում եմ Պավել Լիսիցիանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթի կազմակերպիչներին, մասնակիցներին և հանդիսատեսին: Կարկառուն երգիչ Պավել Գերասիմի Լիսիցյանի ողջ կյանքն ու ստեղծագործական գործունեությունը կապված է մեր վեհ քաղաքի հետ: Քառորդ դարից ավելի նա եղել է Պետական ակադեմիական Մեծ թատրոնի առաջատար մեներգիչ, ինչը Մոսկվայի և Ռուսաստանի խոշորագույն երաժշտական և թատերական կենտրոնն է, իսկ իր փայլուն կարիերայի ավարտին նա իր հարուստ կատարողական փորձը փոխանցում էր Մեծ թատրոնի և Մոսկովյան պետական ֆիլհարմոնիայի երիտասարդ երգիչներին: Այդ իսկ պատճառով օրինաչափ է, որ Պավել Լիսիցիանի անվան բարիտոնների առաջին միջազգային մրցույթը կկայանա հենց մեր քաղաքում: Չեմ կասկածում, որ մրցույթի երկնակամարի լուսատուն ոչ հեռու ապագայում կփայլի առաջնային մեծության օպերային արվեստի աստղերով և միջազգային օպերային թատրոնը կզարդարի նոր վառ ներկայացումներով, իսկ Մոսկվայում ստացած տպավորություններն ու փորձը նրանք ողջ կյանքում կտանեն իրենց հետ:

Վստահ եմ, որ մրցույթը խոշորագույն իրադարձություն կդառնա Մոսկվայի, Ռուսաստանի և ողջ աշխարհի համար:

Մրցույթի բոլոր մասնակիցներին մաղթում եմ հաջողություններ, հանձնաժողովին՝ արգասաբեր աշխատանք, իսկ հանդիսատեսին՝ վառ, գերող տպավորություններ:

Յուրի Միխայլովիչ Լուժկով

Ես անձամբ ծանոթ էի Պավել Գերասիմի Լիսիցյանի հետ, խորապես գնահատում և հարգում եմ նրա տաղանդը, նրա հիանալի ձայնը:

Վստահ եմ, որ Պավել Լիսիցյանի անվան վոկալ մրցույթը կնպաստի նոր երիտասարդ տաղանդների բացահայտմանը, ում այնքան դժվար է առաջ գնալ և ստեղծագործական կայացում ունենալ առանց աջակցության:

Կարծում եմ, որ երիտասարդներին աջակցելը, հատկապես արվեստում, միշտ լավ է և հարգալից:

Ալիշեր Ուսմանով ⁷⁸

2011թ. Պավել Լիսիցյանի ծննդյան 100 - ամյակին նվիրված տեղի է ունեցել «Ոսկե բարիտոն» Պավել Լիսիցյանի անվան միջազգային մրցույթ-փառատոնը:

2013թ. Պ.Լիսիցյանի անվան միջազգային մրցույթ - փառատոնի առաջին կարգի դափնեկրի կոչմանը արժանացավ Թաթարստանի հանրապետության ներկայացուցիչ՝ Դամիր Ջուսոևը:

Անշուշտ, նման փառատոնները ոչ միայն մի նոր շերտ են ավելացնում ստեղծված անանդույթներին, այլև ճանաչողության, տաղանդավոր երիտասարդների գնահատման և նրանց լուսավոր ապագա ուղղորդելու նորովի խթան են հանդիսանում:

⁷⁸ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

ԳԼՈՒԽ Բ

ՊԱՎԵԼ ԼԻՍԻՑՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Պավել Լիսիցյանը՝ օպերային երգիչ

«Օպերան միշտ եղել է լայն հանդիսատեսի ժանր, այն միշտ գերել է հասարակության տարբեր շերտերին, այդ թվում երիտասարդությանը», - ասել է Թարիվերդիևը⁷⁹:

Պավել Լիսիցյանը երգել է երկրի առաջին բեմում այն ժամանակ, երբ հանդիսատեսը նոր էր մտնում Մեծ թատրոն և բացելով ծրագիրը՝ հուզվում էր, կանխազգալով հանդիպումը մեծագույն կատարողների աստղաբույլի հետ: Եվ հանդիպումը մեծանուն արտիստի հետ միշտ արդարացնում էր սպասումները, այն դերերը, որում էլ որ նա հանդես գար՝ լինել դա Օնեգինը թե Ելեցկին, Վալենտինը թե Ժերմոնը, Ամոնարսոն, Էսկամիլիոն թե Ռիլենը: Քանզի ունկնդրողը ոչ միայն ընկնում էր թավշյա ձայն ունեցող կատարողի կախարդանքի տակ, այլև նրանում տեսնում էր իրական դերասանի, որոնցով այդքան էլ հարուստ չէր օպերային բեմը:

Եվգենի Օնեգին, Ելեցկի, Ժերմոն, Վալենտին, Ամոնասարո, Էսկամիլիո, Յանուշ, Մազեպա, Ռոբերտ, Կազբիչ, Ռիլեն, Նապոլեոն՝ արդյոք հնարավո՞ր է թվել բոլոր դերերը, որոնք ստեղծել է Լիսիցյանը: Դրանք գերազանցում են երեսունը, դերեր, որոնք մարմնավորել են տարբեր ժամանակների և ազգերի հերոսներին: Լինել դա Եթովպիայի թագավոր, ցլամարտիկ թե դեկաբրիստ՝ դրանք եղել են կերպարային, բնական և անկեղծ:

Իր ստեղծագործական կյանքի 35 տարիների ընթացքում Պ. Լիսիցյանը հանդես է եկել մոտ 2000 ներկայացումներում: Նրա դերակատարումները մեծ բավականություն են առաջացրել հանդիսատեսի մոտ:

«Երբ երգում ես Լիսիցյանի հետ, ակամայից տիրապետում ես ձայնային հոսանքի այն բարձր ալիքին, որն այնքան հատկանշական է երգչի արվեստին»⁸⁰,- գրում էր Ն.Չուբենկոն: Լիսիցյանն իրականում տիրապետում էր էմոցիոնալ ազդեցության մեծ ուժի, սակայն նա երբեք չի խաղարկում լարվածությունը, չի հատում բարեկիրթ, անթերի ճաշակի ոճի սահմանները: Տիրապետելով եզակի վոկալ արվեստի, այնուամենայնիվ, նրա համար ընդունելի է համարվել միայն ակադեմիական երգեցողությունը: Լիսիցյանի

⁷⁹Письмо Чайковского Наталье Ф. фон Мекк, N 297, 27 сентября, 1885 год. www.tchaikov.ru/mekk/1885.htm l :

⁸⁰ **Яковлев М.** Мастера Большого театра, народные артисты СССР, Москва, 1976, стр. 388.

արվեստը բաց է լայն հանրության համար: Պատահական չէ, որ նրան անվանում են բել կանտոյի վարպետ, սակայն ինչպես գրված էր գրախոսություններից մեկում՝ «երգչի բարձրագույն արժեքը նրանում է կայանում, որ աշխարհը նրա բեմական հերոսներին ընդունում է գեղեցիկ ձևավորված երաժշտության ներքո»⁸¹:

Լիսիցյանը սովորում էր նրան նախորդող բազմաթիվ երգիչների փորձի հիման վրա, նա ավելի ու ավելի խորն էր թափանցում ժամանակաշրջանի փաստաթղթերում: Վոկալի տեսանկյունից նրա առջև արգելքներ չկային. Պ.Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում Օնեգինի կերպարը լիրիկական բարիտոնի դերերգ էր, որը հատկապես հոգեհարազատ էր նրան: Սակայն կերպարի ողջ խորությունը հասկանալու համար դերասանից երկար տարիներ էր պահանջվում, որպեսզի ըմբռնի այն եզրը, որը թույլ կտար խուսափել ավելորդ չորությունից և չափազանց ռոմանտիկությունից:

Ինքը՝ Պ.Լիսիցյանը, խոստովանում է, «որ իր հերոսի վերաբերմունքի վրա ազդում են նաև բեմական խաղընկերները»⁸²: Նա երգել է այնպիսի հրաշալի կատարողների հետ, ինչպիսիք են Ե.Կրուգլիկովան, Ն.Շպիլլերը, Գ.Ժուկովսկայան. վերջինս, ըստ իր խոսքերի՝ «և այրում էր և ցնցում և միարժամանակ ծայրահեղ իմաստուն դերասանուհի էր»⁸³:

Եվգենի Օնեգինով Լիսիցյանը ճանապարհորդեց ողջ Սովետական Միությունով, նաև երգել է Հոլանդիայում, ԳԴՀ-ում, Լեհաստանում, Ռումինիայում: Իր ողջ բեմական կյանքի ընթացքում նա անդադար հաջողություն ուներ այս դերերգում: Դեպքեր են եղել, որ ներկայացումից հետո երգչին «ստիպել» են կրկին կատարել հատվածներ, իսկ Թբիլիսիում, արդեն փակ վարագույներով, հանդիսատեսի խնդրանքով նա հինգ անգամ շարունակ կատարել է Օնեգինի հանրահայտ «Ավաղ, կասկած չկա...» արիան:

Պ.Չայկովսկու հանդեպ սերը Լիսիցյանի մոտ մշտապես առկա էր: Արտիստին ձգում էր նաև այնպիսի դերերգերը, որոնք պարունակում էին երգեցիկ գեղեցկություն և կերպարների դրամատիկ զարգացում: Օնեգինից բացի, սիրված դերերգերի թվին են պատկանում Մադեպան՝ Պ.Չայկովսկու «Մադեպա» օպերայում և Ջ.Վերդիի «Աիդա» օպերայում Ամոնասարն:

Երգչի երկացանկում առկա են նաև հարուստ մեղեդայնություն ունեցող դերերգեր:

⁸¹ Նույն տեղում, էջ 388:

⁸² Նույն տեղում, էջ 391:

⁸³ Նույն տեղում, էջ 391:

Հատկապես սիրված է նրա կողմից Ռիլենի դերերգը՝ Յու.Շապորինի «Դեկաբրիստներում», որտեղ կոմպոզիտորը, ըստ իր խոսքերի, ձգտում էր առավելագույն երգեցիկության՝ անգամ բարձր դրամատիկ լարվածության պահերին: «Անհնար է առանց հուզմունքի երգել այդ օպերայում, որն ամբողջովին երաժշտական է, որտեղ յուրաքանչյուր կերպար ստեղծված է և որպես մաքուր օպերային, և որպես կենսական»⁸⁴, - ասում էր Պավել Լիսիցյանը:

Պ.Լիսիցյանը Մեծ թատրոնում հաջողությամբ էր կատարում Յու.Շապորինի «Դեկաբրիստներ» օպերայում Ռիլենի դերը: Հայտնի է, որ այդ դերերգը հետաքրքրում էր նաև Լ.Սոբինովին այնքան, որ մեծ երգիչը խնդրում է կոմպոզիտորին՝ դարձնել այն տենորային: Յու.Շապորինը թողեց Ռիլենին բարիտոն, և դերը զարմանալիորեն համապատասխանեցրեց Պ.Լիսիցյանի ձայնին:

Աշխատանքն այս դերի վրա, ինչպես սովորաբար էր լինում Լիսիցյանի մոտ, անցնում էր տարբեր «տեղեկատվության աղբյուրների» վրա աշխատելով, աստիճանաբար մոտեցնելով Ռիլենին Պ.Չայկովսկու սիրելի օպերային հերոսներին: Մտորումները Ա.Պուշկինի, դեկաբրիստների հետ նրա ներքին կապի մասին, ժամանակաշրջանի ընդհանրության վերաբերյալ, որն արտահայտված է ոչ այդքան նման օպերաներում, բերեցին նրան, որ դիմային շպարի առանձին տարրեր հիշեցնում էին լիսիցյանական Օնեգինին: Սակայն միաժամանակ արտիստը կարողացավ նաև հանրահայտ ռիլենյան կերպարը մոտեցնել ներկա ժամանակաշրջանին: Օպերայի ութերորդ հատվածի հուզիչ մենախոսությունը, որը գալիս է Պետրոպավլովյան մռայլ մենախցից, հնչում է քաջ, ուժեղ տղամարդու ձայնով, ով չի կոտրվել, չի վախենում մահից և հավատում է Ռուսաստանի վաղվա օրվան: Պ.Լիսիցյանի մոտ հատկապես լավ է ստացվում այդ հատվածը՝ առանց ավելորդ բեմական իրարանցման, իր երգեցողությունում նա արտահայտում էր այն ամենը, ինչը ցանկանում էր արտահայտել կոմպոզիտորը:

Երգչի հաջողությունների շարքում մեծ դեր ունեն դերերգերը, որոնք ստեղծվել են ժամանակակից սովետական նյութի հիման վրա: Դրանցից է Կոմիսարը Վ.Մուրադելիի «Մեծ բարեկամություն» օպերայում: Օպերայի գործողությունները տեղի են ունենում այն վայրերում, ուր ծնվել և մեծացել է Լիսիցյանը՝ հյուսիսային Կովկասում: Ազգությամբ

⁸⁴ Նույն տեղում, էջ 391:

հայ, ծնված Հյուսիսային Օսեթիայում, ով իր կյանքի ընթացքում հանդես է եկել գրեթե ողջ աշխարհում, ով անթիվ ընկերներ ունի տարբեր ազգություններում:

Լիսիցյանը բախտ է ունեցել համագործակցելու բազմաթիվ դիրիժորների և երգիչների հետ: Սակայն յուրահատուկ ջերմությամբ էր հիշում իր համագործակցությունը Ա.Մելիք-Փաշանի հետ: Մեկ ու կես, երկու ժամ նա կարող էր աշխատել մեկ քառատող դերերգի վրա, լիովին նվիրվել և վարպետությունը զարգացնել: Աշխատանքը այս դիրիժորի հետ Լիսիցյանին սովորեցրել է երբեք չսահմանափակվել սեփական դերերգով, այլ մխրճվել ներկայացման ողջ տարրերի մեջ: «Երգչին անհրաժեշտ է լսել և ներքուստ զգալ ողջ օպերան ամբողջությամբ,- պնդում էր Պ.Լիսիցյանը: - Այլապես անհնար է դերակատարների միասնական հանդես գալը»⁸⁵:

Երգիչը սիրում էր աշխատել թատրոնի այն դերերի վրա, որոնք հարուստ էին ավանդույթներով, որտեղ գերակշռում էր նորարարությունը:

Ժ.Բիզեի Էսկամիլիոյի դերը «Կարմեն» օպերայում մի ողջ սերունդ ասոցացնում էր Պ.Լիսիցյանի հետ: Փայլուն, էլեգանտ, ինքնավստահ ցլամարտիկ Էլույթը բուռն ծափահարություններով էր ընթանում:

Ինչո՞վ էր բացատրվում երգչի հանդես նման զգացողությունը:

«Լիսիցյանը երգում և խաղում էր երես առած հաջողակի, հանրության սիրեցյալի, հաղթողի պես: Էսկամիլիոյին չէր հուզում Կարմենի աշխարհը, նրա ճակատագիրը: Այդպիսով երգիչը նրբորեն արդարացնում էր օպերային համարի ինքնուրույնությունը: Հարկ է նշել, որ Էսկամիլիոյի դերերգը կարծես չի համապատասխանում Պ. Լիսիցյանի ձայնային տվյալներին. սա բաս-բարիտոնի դրամատիկ դերերգ է: Իսկ Լիսիցյանը հիմնականում երգում է լիրիկական դերերգեր: Եվ իրոք, սկսած Էսկամիլիոյի դերերգից, հանդիսատեսը ականատես եղավ Լիսիցյանի նոր հաղթանակներին, ուր բարիտոնը ավելի լայն ձայնածավալ էր ներկայացնում, իսկ դրա հետ ընդլայնվում էին նաև տեմբրային, ոճային և դերերգային նրբերանգները»⁸⁶:

Լիսիցյանի դասական դերերգ կարելի է համարել Ջ.Վերդիի «Տրավիատա» օպերայում Ժերմոնի դերը: Դրանում հատկապես վառ արտահայտվում են երգչի վոկալ կերպարի բոլոր բաղկացուցիչները, նրա ողջ հնարավորությունները՝ ձայնի ճկուն

⁸⁵Նույն տեղում, էջ 393:

⁸⁶Նույն տեղում, էջ 393:

տիրապետումը, որը թույլ է տալիս հասնելու անհրաժեշտ հոգեբանական նրբերանգների, հնչողության լայն դինամիկայի: Իսկ ինչ վերաբերում է Պ.Լիսիցյանի արտասանությանը, ապա Ս.Լեմեշևը ասել է. «Նրա առողջանությունը նույնքան կատարյալ է, որքան երգեցողությունը»⁸⁷:

Պավել Լիսիցյանը հանդես է եկել ՊԱՄԹ-ում ուղիղ քառորդ դար, վերջին անգամ նա այդ բեմում հանդես է եկել 1966 թ. հունվարի 14-ին՝ Ջ.Վերդիի «Աիդա» օպերայում: Այդ ժամանակահատվածում գրեթե ոչ մի պրեմիերա չէր անցել առանց նրա մասնակցության: Գրեթե բոլոր արական ձայներից՝ բարիտոնի համար գրված դերերգերը, իրենց ողջ ձայնածավալով, հիանալի երգվել են նրա կողմից: Նա թատրոնի բեմը թողեց հասուն տարիքում ոչ թե նրա համար, որ խուսափի հանդիսատեսի հետ շփումից, այլ որ փոխի շփման միջոցը: Եվ այդ իսկ պատճառով բնական է, որ նրա կյանքը ընթանում էր նույն արագ ստեղծագործական ուժով, ինչպես և առաջ:

Համաշխարհային բեմարվեստում Պ.Լիսիցյանը հանդես է եկել անգուգական կատարումներով, որոնց մասին երբևէ չի լռել ժամանակը: Ավելին, մասնագետները մշտապես գնահատանքի ու մեծարման դափնիների են արժանացրել նրան: Պրոֆեսիոնալ բեմում անգամ նրա առաջին քայլերը արժանացել են հատուկ ուշադրության և յուրահատուկ գովասանքի:

«Օպերային իր գրեթե բոլոր հիմնական պարտիաները Լիսիցյանը պատրաստում էր երկու վարպետ-դիրիժորների՝ Միքայել Թավրիգյանի և Գևորգ Բուդաղյանի ղեկավարությամբ, պատրաստում ամուր, հիմնովին, ամբողջ կյանքի համար: Նրան հարստացնում էին նաև բարձրակիր զարդ ու երաժիշտ, Արթուր Նիկիշի աշակերտ, Մոսկվայի և Երևանի կոնսերվատորիաների պրոֆեսոր Կոնստանտին Սարաջևի հետ ստեղծագործական շփումները»⁸⁸:

Թաթուլի կերպարում արտիստը մարմնավորել է ազգային հերոսի տիպիկ գծերը, ով ժողովրդին ոգևորում է հայրենիքի թշնամիների դեմ պայքարով: Արտաքնապես Թաթուլ-Լիսիցյանը ծայր աստիճան հանգիստ է, զսպված, հավասարակշռված: Մակայն դրա հետ միաժամանակ երգչի ձայնի հնչողության բնույթում, նրա ինտոնացիաներում զգացվում էր ներքին մեծ ոգևորություն: Արտիստը ստեղծում էր բոցաշունչ

⁸⁷ Նույն տեղում, էջ 394:

⁸⁸ **Յակավենկո Ս.**, Պավել Լիսիցյան, էջ 20:

հայրենասերի կերպար, ում խորապես հուզում էր ժողովրդի ճակատագիրը:

Լիսիցյանի ձայնային հնարավորությունների հարստությունը, նրա վոկալ վարպետությունը և բնածին երաժշտականությունը լայնորեն բացահայտվում էր նրա կողմից ստեղծվող կերպարներում:

Երգչի երկացանկում կենտրոնական տեղը պատկանում է Պ. Չայկովսկուն: Ռուս մեծ կոմպոզիտորի օպերաներում Լիսիցյանը կատարել է բնույթով տարբեր չորս այնպիսի դերերգեր, ինչպես Օնեգինը, Ելեցկին, Ռոբերտը և Մազեպան:

Չնայած այն բանին, որ Օնեգինի դերերգը գիտեր մի շարք հոյակապ կատարողների, Լիսիցյանը կարողացավ իր երանգները մտցնել դերակատարման մեջ: Արտիստը կերպարը կառուցում է առաջին պատկերներում իր հերոսին բնորոշ շինծու անխռովության, անտարբերության հակադրման մեջ, ողջ այն ջերմ զգացումով, որը Օնեգինին համակում է օպերայի եզրափակիչ տեսարանում, երբ նա դեն նետելով «բարձրաշխարհիկ խավի պայմանականությունները», տրվում է առաջին անգամ իրեն գրավող սիրո զգացմունքին:

«Իռլանտա» օպերայում Լիսիցյանը կատարում է Ռոբերտի դերերգը: Այս ոչ մեծ դերում արտիստը գերում է ձայնի հնչողության ազատությամբ, կրքի ուժով, Մաթիլդային խանդավառ և նվիրված սիրահարվածությամբ:

Պ.Չայկովսկու օպերաներում Պ. Լիսիցյանի ամենից մեծ հաջողություններից մեկն էր Մազեպայի կերպարը:

Արտիստի կատարմամբ նա խորամանկ և խելացի երկերեսանի է, ով դավաճանում է իր ժողովրդին, ոչնչի առաջ կանգ չի առնում՝ հանուն իր փառասիրական, արկածախնդրային մտադրություններին հասնելու: Արտիստը ստեղծում է դավաճանի կերպարը, դաժան և քինախնդիր, քանի դեռ նա իշխանություն ունի, վախկոտ և խղճալի՝ երբ պարտություն կրելով, նա կորցնում է իր հզորությունը:

Պ.Լիսիցյանը մեծ հաջողության հասավ 1949 թվականի վերջին Մեծ թատրոնի բեմում բեմադրված Ս.Մոնյուշկոյի «Գալկա» օպերայում Յանուշի դերերգում: Յանուշի դերերգը կատարողի առջև դրված խնդիրը բարդացնում էր նրանով, որ օպերան գնում էր նոր գրական խմբագրման: Բեմադրության վրա աշխատած կոլեկտիվն իր ուշադրությունն առաջին հերթին սևեռել էր գործող անձանց սոցիալական բնութագրի վրա, բացահայտել էր ժողովրդի և պաների (կալվածատիրական վերնախավի

ներկայացուցիչներ) միջև սոցիալական հակասությունները, որոնք պայմանավորել էին «Գալկայի» ողբերգական հանգուցալուծումը:

Առհասարակ, Պան (կալվաձատիրական վերնախավի ներկայացուցիչ) Յանուշի դերը մարմնավորելիս ամենից առաջ ընդգծվում էին ցինիկ եսասիրությունը և միևնույն ժամանակ՝ վախկոտությունը: Հենց այդ տեսանկյունից էլ կերպարը մեկնաբանել էր Լիսիցյանը՝ ստեղծելով կալվաձատիրական վերնախավի ներկայացուցիչներից մեկի ճշմարտացի կերպարը, ով ամեն ինչից բարձր էր դասում իր անձնական ցանկությունները, ով իր բնույթով ստախոս էր և վախկոտ:

«Խորհրդային արվեստ» թերթը այսպես էր գնահատել արտիստի աշխատանքը. «Լիսիցյանի կատարմամբ Յանուշը դաժան է, խորամանկ, սակայն ամենից առաջ՝ վախկոտ: Նա վախենում է Գալկայի նկատմամբ զգացմունքների նոր բռնկումից, վախենում է Յոնտեկի արդարացի գայրույթից, ինչը նրան պատիժ է խոստանում ...»⁸⁹:

Լիսիցյանի վերջին աշխատանքներից հետաքրքիր է 1951 թվականին Մեծ թատրոնում բեմադրված Վերդիի «Աիդա» օպերայում Ամոնասրոյի դերը: Այն վկայում է տաղանդավոր երգչի անկասկած աճի մասին, ով հաջողությամբ հաղթահարել է Վերդիի կողմից ստեղծված սքանչելի օպերային դերերգերից մեկի վոկալ և բեմական դժվարությունները:

Խորհրդային ուկնդիրները Լիսիցյանին լավ գիտեին՝ նրա բազմաթիվ համերգներից: Երգչի երգացանկում են Պ.Չայկովսկու, Ա.Բորոդինի, Ա.Ռուբինշտեյնի, Ժ.Բիզեի ռոմանսներն ու մեներգերը, ռուսական, ուկրաինական, հայկական ժողովրդական երգերը, խորհրդային կոմպոզիտորների երգերը:

Օնեգին- Լիսիցյան: 1941 թվականի գարնանը Մեծ թատրոնի բեմում Պ.Լիսիցյանը հանդես է գալիս Պ. Չայկովսկու «Եվգենի Օնեգին» օպերայում Օնեգինի դերերգով:

Երիտասարդ երգչի այս դերբյուտը արժանացավ մամուլի և հասարակության ջերմ ընդունելությանը, ուստի պատահական չէր արվեստասեր հասարակայնությունը իր տեսլականում ուրվագծեց լուրջ ապագա ձևավորող մի վառ անհատականության, ով պրոֆեսիոնալ բեմարվեստում մեծ խոսք ուներ ասելու:

Մինչ Պ.Լիսիցյանը Օնեգինի դերերգը կատարել էին ռուսական բեմի շատ հայտնի արտիստներ, և վաղուց ձևավորվել էր կերպարի մեկնաբանման որոշակի

⁸⁹ **Анисимов А.** Павел Герасимович Лисициан, Москва, 1953, стр. 2.

ավանդույթներ: Պ.Լիսիցյանը չգնաց տրոբլած ճանապարհով, չընդօրինակեց իր նախորդներից և ոչ մեկին, միաժամանակ ստեղծեց մի նոր ու հետաքրքիր հերոսի, ստեղծագործապես հուզական նոր կերպարի, ունկնդրին պարզևեղով էսթետիկական հաճույք, գերելով ու հմայելով իր հանդիսատեսին:

«Լիսիցյանի Օնեգինը, ոչ մի դեպքում չհակասելով օպերայի բանաստեղծական սկզբնաղբյուրին և Պ.Չայկովսկու մտահղացմանը, ստեղծագործական տեսակետից ավելի ընդլայնեց ռուսական արվեստի յուրահատուկ կողմերից մեկը, երբ լիրիկականը ոչ միայն ընդունում է դրամատիկ երանգներ, այլև ներքին զգացումների ուժից մղված ստանում նոր՝ ողբերգական բովանդակություն:

Բացառիկ վարպետությամբ կերտած Լիսիցյանի Օնեգինը իր ռեալիստական, պարզ ու ճշմարիտ էությանը, դրամատիկ ուժով ու խորաթափանցությամբ դարձավ արտիստի մտքից ու հոգուց ծնված կերպարային պատկերասրահի գլուխգործոցը»⁹⁰:

Լիսիցյան-Մազեպա: 1951թ. փետրվարի 1-ին Պ.Լիսիցյանը հանդես եկավ Պ.Չայկովսկու «Մազեպա» օպերայում Մազեպայի դերերգով: Լիսիցյանի համար բեմական դերակատարումները տարբերակում չունեին, լինի՝ դրական թե բացասական բնույթի: Աշխարհահռչակ բարիտոնը իր տաղանդը ծառայեցնում էր ցանկացած դերը ճշմարտացիորեն մարմնավորելուն, ինչն էլ խոսում էր նրա բացառիկ լինելու մասին:

«Բարդ հոգեբանությամբ մի կերպար, որին անհրաժեշտ է մոտենալ ստեղծագործաբար, քննել տարբեր կողմերից: Երաժշտական դրամատուրգիայի վրա խարսխված այս դերերգը Լիսիցյանը մեկնաբանեց իրեն հատուկ խորաթափանցությամբ, առաջին պլանի վրա մղելով Մազեպայի և Մարիայի սերը, Մազեպայի հոգու խառնարանում վառվող կրակը, որ ցավոք այնպես է չկարողացավ ջերմացնել, երջանկություն պարզևեղ Մարիային:

Չայկովսկու «Մազեպա» օպերայի այս հերոսը անկեղծության պահեր հազվադեպ է ունենում: Հենց այս հազվադեպ պահերն է օգտագործում երգիչը Մազեպայի մարդկային հատկությունները ցուցադրելու համար»⁹¹:

Լիսիցյան-Ժերմոն: 1946թ. հոկտեմբերի 20-ին Ջ.Վերդիի «Տրավիատա» օպերայում Պ.Լիսիցյանը մարմնավորեց Ժերմոնի կերպարը: Հատկանշական է, որ Լիսիցյան-

⁹⁰ Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան, էջ 59:

⁹¹ Նույն տեղում, էջ 42:

Ժերմոն կերպարում մեծահամբավ թավշյա ձայնով օպերային երգիչն իր կատարողական բարձր վարպետության, պրոֆեսիոնալ և ինքնաբուխ մեկնաբանության շնորհիվ առաջնահերթությունը տվել էր մերժելու Ժերմոնի բացասական բնութագրականը, այն թողնելով մշուշի մեջ:

«Հակասական ու բարդ է Ժերմոն կերպարի դրամատուրգիական գիծը: Ժերմոնը դեմ է որդու՝ Ալֆրեդի և Վիոլետայի փոխադարձ սիրուն: Նա գիտակցաբար խանգարում է երկուսի երջանկությանը, «փրկում» իր ընտանիքի պատիվը, որ դարձել է հասարակության ծաղրի առարկան: Ժերմոնը ստոր է, կեղծ բարեպաշտ, բուրժուական բարոյախոսության պաշտպանը:

Կերպարի այսպիսի սխեմատիկ բնութագրումից հրաժարվում է Լիսիցյան-Ժերմոնը: Այս դերում ևս Լիսիցյանը կարողանում է բացել վոկալ պարտիայի սահմանափակ հնարավորությունները, ընտրել դերի մեկնաբանման ճիշտ ելակետ, իր հերոսին դիտել ժամանակակցի աչքերով, ապացուցել, որ երկրորդական դերերը նույնիսկ կարող են ունենալ առաջնային նշանակություն»⁹²:

Լիսիցյան- Ամոնասար: 1951թ. Պ.Լիսիցյանը Ջ.Վերդիի «Աիդա» օպերայում մարմնավորել է Ամոնասարոյի կերպարը: Չնայած Լիսիցյանի կերտած Օնեգինի, Մազեպայի, Ժերմոնի կերպարների ունեցած մեծ հաջողությանը, արվեստասերների լայն բանակը, այնուամենայնիվ գնահատանքի ու մեծարանքի ոչ պակաս փառաբանման արժանացրեց աշխարհահռչակ երգչին՝ կրկին անգամ ապացուցելով, որ Պ.Լիսիցյանը արժանի է մեծահամբավ լինելու կոչմանը:

Թեև Ջ.Վերդին իր «Աիդա» օպերայում Ամոնասարոյի վոկալ պարտիան գրել է դրամատիկական բարիտոնի համար, սակայն Պ.Լիսիցյանն իր լիրիկական բարիտոնով հասավ այդ դերերգի կատարման այնպիսի մակարդակի, որի մասին ամենախիստ քննադատները չեն խնայել գովեստի շոայլ խոսքեր: «Պ.Լիսիցյանի ձայնը կարող է ճայթել ու փայլատակել ամպրոպի նման ու հանկարծ դառնալ նուրբ, քնարական: Լիսիցյանի Ամոնասարոն նույնիսկ ամենախոր դրամատիկական պահերին մեր առջև կանգնում է որպես ջերմագին սիրող հայր, մարդ, որ ունի բանաստեղծական ոգեշունչ ներքին և ամենակարևորը՝ հայրենիքի շահը և պատիվը ամեն ինչից բարձր դասող հերոս»⁹³:

⁹² Նույն տեղում, էջ 45:

⁹³ Նույն տեղում, էջ 46:

Լիսիցյան-Արշակ Երկրորդ: 1937-1939-ին Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան պետական թատրոնում երգիչը մարմնավորել է Թովմասի (Ա.Այվազյան՝ «Ատամնաբույժն արևելյան»), Էսկամիլիոյի (Ժ.Բիզե՝ «Կարմեն»), Լիստնիցկու և Միտկայի (Ի.Ի.Չերժինսկի՝ «Խաղաղ Դոն»), Միլվիոյի և Տոնիոյի (Ռ.Լեոնկավալլո՝ «Պայացներ»), Թաթուլի (Ա.Ա.Սպենդիարյան՝ «Ալմաստ»), Գրիգորի (Հ.Ստեփանյան՝ «Լուսաբացին»), Մոսիի (Ա.Տիգրանյան՝ «Անուշ»), Օնեգինի (Պ.Ի.Չայկովսկի՝ «Եվգենի Օնեգին»), Ռոբերտի (Պ.Ի.Չայկովսկի՝ «Իռլանտա»), Ելեցկու և Տոմսկու (Պ.Ի.Չայկովսկի՝ «Պիկովայա դամա») կերպարները:

Պ.Լիսիցյանն առաջինն էր, ով փայլուն և նրբազգացությամբ մեկնաբանել է «Արշակ Երկրորդ» օպերայում Արշակի կերպարը՝ 1945-ին Երևանի օպերային թատրոնում Տիգրան Չուխաճյանի համանուն օպերայի պրեմիերայի ժամանակ:

Հայտնի է, որ 1868-ին ստեղծված «Արշակ Բ» օպերան կոմպոզիտորի մահից հետո մոռացության է տրվում: Տասնամյակներ անց Չուխաճյանի երաժշտական ժառանգության առաջին լուրջ գիտական ուսումնասիրությունը ստանձնած Գ.Տիբանովը, ծանոթանալով նրա արխիվային նյութերին, 1942-ին հայտնաբերում է օպերայի պարտիտուրը⁹⁴, իսկ Երևանի Ալ.Մյասնիկյանի անվան հանրային թատրանի գիտաշխատակից Ա.Բաբայանը՝ 1871-ին Կ.Պոլսում հրատարակված լիբրետոյի հայերեն տպագիր օրինակը⁹⁵:

Ալ.Սպենդիարյանի անվան օպերային թատրոնում Գ.Տիգրանովը Հայկանուշ Դանիելյանի, Միքայել Թավրիզյանի, Արմեն Գուլակյանի և Մուշեղ Աղայանի ներկայությամբ, դաշնամուրով նվագում է իր հայտնաբերած օպերան⁹⁶:

Ինչպես հետագայում հիշում է Տիգրանովը. «Հայկանուշ Դանիելյանը մեծ ցանկություն հայտնեց երգել օպերայում, և ողջ թատրոնը ուզում էր սկսել աշխատանքը»: Օպերայի պարտիտուրը հանձնվում է Երևանի Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնին, որը, չնայած պատերազմական ժամանակաշրջանի (1942-43)

⁹⁴ Պահվում է ԳԱԹ, Տ.Չուխաճյանի ֆոնդում, №8, ձեռագիր 350 թերթ: Պարտիտուրից բացի այստեղ են գտնվում 1-ին և 4-րդ (մասամբ) գործողությունների կլավիրների ձեռագիր օրինակները նույնպես. № 11, ձեռագիր 34 թերթ, № 12, ձեռագիր 58 թերթ:

⁹⁵ Տե՛ս **Բաբայան Ա.**, Տիգրան Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, «Սովետական գրականություն», 1942, № 8, էջ 69:

⁹⁶ Տե՛ս **Русжан М.** Дважды рожденная (К 100-летию армянской оперы), "Комсомолец", 1971, 13 июня.

դժվարություններին, ձեռնամուխ է լինում բեմադրության աշխատանքներին՝ ունենալով ՀԿԿ Կենտկոմի և Հայաստանի կառավարության աջակցությունն ու օժանդակությունը⁹⁷: Թատրոնը հրաժարվում է Թ.Թերգյանի լիբրետոյի գաղափարական ու դրամատուրգիական կոնցեպցիայից, բեմադրության համար Արմեն Գուլակյանը գրում է նոր լիբրետո՝ ուժեղացնելով սյուժեի հայրենասիրական գիծը⁹⁸:

1945-ի նոյեմբերի 17-18-ին Ալ.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնում տեղի է ունենում մեծ իրադարձություն. վաղուց մոռացված այս հրաշք օպերան բեմական լիարժեք կյանք է սկսում: Երաժշտագետ Ա.Շահվերդյանի խմբագրումից, կոմպոզիտոր Լ.Խոջա-Էյնաթովի գործիքավորումից, ռեժիսոր Ա.Գուլակյանի նորաստեղծ լիբրետոյից վերածնված այս օպերային մեծամասշտաբ կտավը պատմում է Հայաստանի պատմության (4-րդ դար) դժվարին շրջաններից մեկի մասին, կապված Արշակ թագավորի առաջադեմ պետական գործունեության հետ, նրա թագավորությունում տիրող հակասությունների՝ դավադրությունների և դրանց դեմ ուղղված Արշակ Երկրորդի պայքարի մասին: Նվագախմբային ու երգչախմբային հատվածներով, կուռ դրամատուրգիայով, բախվող ու հակադրվող կերպարներով հարուստ այս օպերայում կենտրոնական տեղ է գրավում Արշակ Երկրորդ թագավորի կերպարը⁹⁹:

Ներկայացման մեջ ընդգրկվեցին հայ բեմի առաջատար ուժերը՝ Հայկանուշ Դանիելյան (Օլիմպիա), Տաթևիկ Սազանդարյան (Փառանձեմ), Շարա Տայյան և Պավել Լիսիցյան (Արշակ Երկրորդ):

Ինչպես Շարա Տայյանն է գրում իր «Դեպքեր, դեմքեր, մտքեր» գրքում. «Ես չեմ հիշում մեկ ուրիշ բեմադրություն, որի վրա այնքան մանրակրկիտ աշխատանք տարած լինեին դիրիժորը և ռեժիսորը, ինչպես այդ արեցին Միքայել Թավրիզյանը և Արմեն Գուլակյանը, որը և միաժամանակ լիբրետոյի հեղինակն էր: Ներկայացման ձևավորման, դեկորների և զգեստների վրա շատ լավ աշխատեց նկարիչ Պատվական Անանյանը»¹⁰⁰:

«Արշակ Երկրորդի» բեմադրությունը դարձավ Խորհրդային Միության մշակութային կյանքի առավել վառ ու նշանակալի իրա-դարձություններից մեկը՝

⁹⁷ **Ասատրյան Ա.**, Տիգրան Զուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, 2011, էջ 133:

⁹⁸ «Արշակ Երկրորդ» օպերայի համար Ա.Գուլակյանի գրած լիբրետոն տե՛ս **Ասատրյան Ա.**, «Արշակ Բ». հայոց օպերան, Երևան, 2006, Հավելված 2, էջ 194-266:

⁹⁹ **Պետրոսյան Մ.**, Պավել Լիսիցյան, էջ 32:

¹⁰⁰ **Տայյան Շ.**, Դեպքեր, դեմքեր, մտքեր, Երևան, 1973, էջ 243:

արժանանալով երկրի բարձրագույն պարգևին՝ Ստալինյան մրցանակի: Անդրանիկ բեմադրության օրվանից օպերան մշտական տեղ գտավ թատրոնի խաղացանկում¹⁰¹:

Հայկական օպերային բեմում Պ.Լիսիցյանն իր գեղեցիկ ու հզոր ձայնով, բեմական բարդ հոգեբանական կառուցվածքի ամփոփ նկարագրով ու մեծ վարպետությամբ մարմնավորեց Արշակ թագավորի անջնջելի կերպարը: «Պավել Լիսիցյանը մեծ վարպետությամբ կերտեց Արշակ Երկրորդ արքայի հոգեբանական ամբողջական կերպարը»¹⁰²:

«Պ.Լիսիցյանի կատարումը հսկայական տպավորություն է թողնում»,– կարդում ենք երաժշտագետ Ա.Շահվերդյանի հոդվածում¹⁰³, իսկ «Արշակ Երկրորդ» օպերայի հայտնագործողներից մեկը՝ Գ. Տիգրանովը, նշում է. «Պ.Լիսիցյանի գեղեցիկ և հզոր ձայնը, բեմական վարպետությունը, 1940 թվականից հետո աճել ու զարգացել է աննախընթաց ձևով»¹⁰⁴:

Ցավոք, Լիսիցյանից միայն մեկ տեսագրություն է մնացել, որտեղ Տիգրան Չուխաճյանի «Արշակ Երկրորդ» օպերայում նա կատարում է գլխավոր դերը: Իսկ օպերային ձայնագրություններով ձայնասկավառակները բավականին շատ են: Այսպիսով, նրա վոկալ կատարողականության մասին կարելի է դատել՝ հիմնվելով փաստացի նյութի վրա: Ինչ վերաբերում է արտիստի բեմական գործունեությանը, ապա այստեղ հարկ է վստահել գրախոսների, գործընկերների և նրա իսկ մանկական ու պատանեկան տպավորություններին¹⁰⁵:

Մարկ Պետրոսյանը գրում է. «Այդ բարդ հոգեբանական կերպարը օպերայում երաժշտական ծավալուն արիաներ քիչ ունի: Հիմնականում նա զարգանում է անսամբլային համարների ու երաժշտական կարճ նախադասությունների միջոցով:

Առաջին պատկերում «Օ՛, վեհապանձ իմ ժողովուրդ՝ արիայում Արշակ-Լիսիցյանի ձայնում դրված են ոչ միայն որովանք ու սեր իր ժողովրդի նկատմամբ, այլև խրոխտ շեշտեր, նրա ձեռնարկած անսասանելիությունը ապացուցող որոշակի նպատակալացություն: Արիայի ավարտից հետո նույնիսկ Արշակ-Լիսիցյանի բեմական խաղը՝ արծվային հպարտ հայացքը, ամուր կանգնելաձևը վկայում են արքայի կամքի,

¹⁰¹ **Ասատրյան Ա.**, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, էջ132-133:

¹⁰² Գ.ԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹⁰³ «Կոմունիստ», 18 նոյեմբերի, 1945:

¹⁰⁴ «Կոմունիստ», 16 դեկտեմբերի, 1945:

¹⁰⁵ **Յակովենկո Մ.**, Պավել Լիսիցյան, Դասեր մի կյանքից, էջ 43:

ընդունած որոշման հաստատակամության մասին:

Օպերայի սկզբում ու վերջում կատարվող երկու արիաների, միջանցիկ գործողություններում, զուգերգերի ու երաժշտական կարճ նախադասությունների, դերասանական տրամաբանված խաղի օգնությամբ Լիսիցյանը կարողացավ միաձուլել Արշակի պետական գործունեությունը և մարդկային հատկությունները:

Իր անկրկնելի խաղընկերների՝ Օլիմպիա-Հայկանուշ Դանիելյանի և Փառանձեմ-Տաթևիկ Սազանդարյանի հետ միասին Լիսիցյանը ստեղծեց անսամբլային ճշմարիտ խաղ ու հնչողություն:

Լիսիցյանի Արշակը հայկական ազգային օպերային արվեստում և իր՝ արտիստի ստեղծագործական կյանքում ունեցավ լիցքավորող դեր, ազդեցիկ ու առաջ մղող էտապային նշանակություն»¹⁰⁶:

Լիսիցյան-Արշակը վառ է տպավորված ունկնդիրների հիշողության մեջ, և պատահական չէ, որ Հայաստանի կառավարությունը 1945թ. նոյեմբերին նրան շնորհում է հանրապետության ժողովրդական արտիստի պատվավոր կոչում¹⁰⁷:

Ուրախալի փաստ է, որ այսօր Ե.Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի պահոցներում պահպանվել են մի քանի տասնյակ տարիների վաղեմություն ունեցող ազդագրերի նմուշներ¹⁰⁸: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է 1945-46-ին Ալ.Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում ներկայացված «Արշակ Երկրորդ» օպերայի հորբելյանական ներկայացման պրեմիերայի ազդագրին¹⁰⁹:

2.2. Պավել Լիսիցյանը՝ կամերային երգիչ

Կամերային երաժշտությունն իր ինքնաբավ նշանակությունից և արժեքից բացի, հնուց ի վեր շատերի համար եղել է նաև որպես յուրօրինակ մի փորձադաշտ, որտեղ զարգացում էր ապրում երաժշտական նոր խոսքն իր հատկանիշներով: Մինչև 16-րդ դարի վերջը կամերային երաժշտությունը վերաբերում էր միայն վոկալ ժանրերին, սակայն 17-րդ դարից սկսած՝ նաև գործիքային երաժշտությանը: Հետագայում, կամերային երաժշտության ձևավորմանը նպաստել է նաև սերտ կապը կենցաղային

¹⁰⁶ Պետրոսյան Մ., Պավել Լիսիցյան, էջ 32-33:

¹⁰⁷ Նույն տեղում:

¹⁰⁸ ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹⁰⁹ ԳԱԹ, թատերական բաժին, ազդագիր № 2553

պարային և ժողովրդական երաժշտությունը: Վոկալ և գործիքային կամերային երաժշտության զարգացման ասպարեզում նշանակալից ներդրում ունեն հատկապես ռուս կոմպոզիտորները՝ Մ. Գլինկան, Ա.Դարգումիժսկին, Ա.Բորոդինը, Պ.Չայկովսկին, Մ.Մուսորգոսկին, Ն.Ռիմսկի-Կորսակովը, Ս.Տանենը և Ս.Ռախմանինովը: Կամերային երաժշտությանը բնորոշ է արտահայտչամիջոցների նուրբ մանրամասնումը, այն ենթադրում է քնարական հույզեր, հոգեկան վիճակների նրբին փոփոխություններ հաղորդելու մեծ հնարավորություններ:

XX դարի առաջին տասնամյակում հայ երաժշտությունը համալրվել է բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններով: 1920-ական թվականներից սկսած ի հայտ եկան կամերային երաժշտության բոլոր ժանրերը: Կամերային երաժշտության ձևավորման համար մեծ ավանդ են ներդրել Կոմիտասը, Ա.Սպենդիարյանը, Ն.Տիգրանյանը: Իսկ վոկալ երաժշտության զարգացման մեծապես նպաստել են Ռ.Մելիքյանի, Հ.Ստեփանյանի, Կ.Զաքարյանի ստեղծագործությունները:

Բեմում հանդես գալու հետ զուգահեռ Լիսիցյանն իրագործում է մեծ և արգասաբեր համերգային գործունեություն: Իր համերգային գործունեությունում յուրահատուկ տեղ են գրավում սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունները: Մայակովսկի և Շոստակովիչ, Մուրադելի և Խաչատրյան, Շապորին, Դոլուխանյան և բազմաթիվ այլ հեղինակներ հենց Պավել Լիսիցյանին են վստահել իրենց կամերային ստեղծագործությունների առաջին կատարումը:

Լիսիցյանը մեծ ավանդ ունի արտասահմանում խորհրդային վոկալ մշակույթի քարոզչության հարցում: Ավելի քան 20 երկրներում նա հանդես է եկել համերգներում և օպերային ներկայացումներում: Մամուլը բազմիցս է անդրադարձել նրա անզուգական կատարումներին:

Կամերային երգարվեստի աստղաշարը զարդարող մեծություններից էր նաև Պ.Լիսիցյանը, ով լինելով օպերային արվեստի բացառիկ նվիրյալ՝ կատարելապես տիրապետում էր նաև կամերային կատարողականությանը: Դրա վառ ապացույցը նրա բուն համերգային գործունեությունն էր, որի ժամանակ նա փայլուն կատարում էր հայկական, ռուսական, արևմտաեվրոպական կոմպոզիտորների դասական գործերը և խորհրդային կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները՝

Պ.Լիսիցյանը, լինելով օպերային արվեստի բացառիկ նվիրյալ, կատարելապես

տիրապետում էր նաև կամերային կատարողականությանը: Դրա վառ ապացույցը նրա բուն համերգային գործունեությունն էր, որի ժամանակ նա փայլուն կատարում էր հայկական, ռուսական, արևմտաեվրոպական կոմպոզիտորների դասական գործերը և խորհրդային կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները՝ Ի.Բրամս՝ «Հավատարիմ սեր», «Սիրո երգեր», Է.Գրիգ՝ «Սիրում եմ քեզ», Ֆ.Լիստ՝ «Ուրախություն և դժբախտություն», Մ.Ռավել՝ «Երեք պոեմ ըստ Դոն-Վիխտի», Կ.Սեն-Սանս՝ «Սպասում», Ֆ.Շոպերտ՝ «Ատլանտա», Ռ.Շուման՝ «Գարնանային գիշեր», Ա.Ս.Արենսկի՝ «Կարող է պատահել», Մ.Ա.Բալակիրն՝ «Ուղեկցիր ինձ, գիշեր», ինչպես նաև Ա.Կ.Բորոդինի, Ա.Կ.Գլազունովի, Ս.Վ.Ռախմանինովի, Պ.Ի.Չայկովսկու, Ն.Ա.Ռիմսկի-Կորսակովի, Մ.Ի.Գլինկայի, Ա.Ս.Դարգամիստովի, Մ.Պ.Մուսորգսկու, Ս.Վ.Ռախմանինովի, Ա.Գ.Ռուբինշտեյնի, Ռ.Մ.Ալեքսանդրովի, Ռ.Գլիերի, Դ.Բ.Կաբալևսկու, Վ.Ի.Մուրադելիի, Ն.Յ. Մյասկովսկու, Ա.Ա.Սպենդիարյանի, Ա.Ի.Խաչատրյանի, Տ.Ն.Խրեննիկովի, Դ.Դ.Շոստակովիչի և այլ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունները:

Նրա կատարմամբ ուշագրավ էին հատկապես հայ կոմպոզիտորների երգերն ու ռոմանսների լավագույն նմուշները կյանքի կոչելու, դրանք մեծ հմտությամբ ու կատարելության աստիճանի հնչեցնելու գործը: Այդ թվում՝ Կոմիտաս «Գարուն ա», «Ախ մարալ ջան», «Կոունկ», «Ալագյազ», Ալ.Սպենդիարյան՝ «Երկիր Հայաստան», «Այ վարդ», Ռ.Մելիքյան՝ «Վարդ», «Ես բլբուլ եմ», Ալ.Դուրխանյան՝ «Երագ», Ա. Խաչատրյան՝ «Խնջույքի երգ» ստեղծագործությունները:

Իր ստեղծագործական ողջ կյանքի ընթացքում Պավել Լիսիցյանը հայկական ժողովրդական երգի հանդեպ մշտապես ցուցաբերել է մեծ սեր և ջերմեռանդություն: Նա առանձնահատուկ ոգևորությամբ էր կատարում հայ ժողովրդական երգերը, դառնալով դրանց անգուգական մեկնաբանը: Իրենց ախորժալուր հնչուններով ուղղակի ունկնդիրների սիրտն են լցվում «Ծիծեռնակ», «Կանչե կոունկ», «Հայոց աղջիկներ», «Առ սիրուհիս», «Վարդ սիրեցի», և բազմաթիվ այլ երգեր:

Պ.Լիսիցյանի երգացանկում տեղ են գտել նաև բուլղարական, հունական, իրանական, չեխական ու ճապոնական ժողովրդական երգեր:

Պ.Լիսիցյանը մեծ տեղ տվեց նաև անսամբլային երաժշտությանը՝ երգում էր կամերային զուգերգեր Մեծ թատրոնի գործընկերների հետ, երգում էր նաև կվարտետ-

ներում: Որպես կամերային երգիչ Պ.Լիսիցյանը աշխարհի 200-ից ավելի երկրներում 1950-90թթ. հանդես է եկել ավելի քան հարյուր ստեղծագործական կատարումներով:

«Պավել Գերասիմովիչ Լիսիցյանի վոկալ-կամերային կատարողականությունը՝ երաժշտա-գեղարվեստականին զուգահեռ, հանդիսանում է նաև ազնվաբարո մաքրող գործառույթ: Ունկնդրելով նրա՝ կլավիրները ձեռքերում ավելի քան հարյուր ռումանսների կատարումները, ես համոզվեցի այն բանում, որ երգիչը ոչ միայն սրբորեն հավատարիմ է նոտային բովանդակությանը, այլև հեղինակային երանգավորման ամբողջ համակարգին»¹¹⁰:

«Պավել Լիսիցյանը ոչ միայն հիանալի օպերային երգիչ է, այլև անզուգական կամերային երգեցողության մեկնաբան: Նրա կատարած յուրաքանչյուր ստեղծագործության մեջ միշտ երևում է հսկայական դերասանական տաղանդ, ուրույն ոճի հասկացողություն, տեքստի անթերի իմացություն և հոյակապ առոգանություն»: Ռաֆայել Հակոբյանցի հիշողություններում այսպես է տպավորված կամերային երգարվեստի փայլուն և անկրկնելի երգիչ, աշխարհահռչակ Պավել Լիսիցյանը:

Անշուշտ, շատերն ինձ հետ կհամաձայնեն, որ դեռևս Խորհրդային Միության տարիներին, առավելապես 60-ական թվականներին չափազանց դժվար էր խորհրդային երգչին իր կատարողական արվեստով և իր երաժշտական ունակություններով հանդես գալ Միացյալ Նահանգներում և այն էլ Նյու-Յորքի «Մոտրոպոլիտեն» օպերայում և «Քարնեգի հոլում»:

Պ.Լիսիցյանը այն եզակի երջանիկներից էր, ում բախտ վիճակվեց իր կատարողական բարձր արվեստն ու հնարավորությունները ներկայացնել չափազանց խիստ հանդիսատես և արվեստասեր հասարակություն ունեցող մի երկրում, որտեղ արվեստին տրվող գնահատականները դրվում էին որակական բարձր նշաձողի վրա:

Մինչ աշխարհահռչակ, տաղանդավոր ու անզուգական երգիչը կժամաներ ԱՄՆ, հանրահայտ օպերայի և տարբեր համերգային դահլիճների գովազդային վահանակների գեղեցիկ ու գունազարդ պաստառներին արդեն փակցված էր նրա համերգային շրջագայությունների ծրագիրը հետևյալ վերնագրով՝ **«Պավել Լիսիցյանի Քոնցերտի Թուրը»:**

«Մոսկվայի Պոլշոյ Օփերայի նշանաւոր պարիթոն երգիչ՝ Պավել Լիսիցյան, որ

¹¹⁰ Յակավենկո Ս., Պավել Լիսիցյան, Դասեր մի կյանքից, էջ 77:

Միացեալ Նահանգները պիտի հասնի Փետրուար ամսին, Քոնսերթի Թուռով, ելոյթներ պիտի ունենա հետեւեալ քաղաքներուն մէջ.

Փետր. 17-Աթլենթիք Սիթի, Ն. Ճ. (Փակ քոնսերթ միայն սպրաքայլերներու համար):

Փետր.22- Նիւ Եորք քաղաք, Քառնեկի Հոլ:

Փետր.24- Պլումինկթըն, Ինտիանա, Ինտիանայի Համալսարան:

Փետր.27- Տիթթոյ, Մէյսընիք Օտիթորիում:

Մարտ15- Պոսթոն, Ճորտըն Հոլ:

Մարտ18- Թորոնթո, Քանատա:

Մարտ20- Շիքակո, Օրքեսթրա Հոլ:

Ապրիլ1- Սան Ֆրանսիսքո, Օփերա Հաուզ («Աիտա»ի մէջ):

Պավել Լիսիցյանը հանդես եկավ Ջ.Վերդիի «Աիդա», օպերայում Ամոնասարոյի կերպարում, հանրահայտ երգիչուհիներ Ջուլետտա Սիմիոնատոյի և Անտոնիետտո Ստելլայի հետ:

«Պոլշոյ թատրոնի աշխարհահռչակ պարիթոն, Սովետահայ երգիչ Պաւել Լիսիցեան մեծավայելուչ յաղթանակ մը արձանագրեց Փետր. 22-ին, Երկուշաբթի իրիկուն, Քառնեկի Հոլին մէջ երգելով միջազգային հսկա բազմութեան մը առջեւ որ սրահը ամբողջութեամբ լեցուցած էր, աւելի քան 2600 հոգիով:

Խոշոր թիվ մը կը կազմէին Նիւ Եորքքաքնակ եւ հեռաւոր քաղաքներէն եկող հայերը, որոնք հպարտութեամբ լսելով հռչակաւոր հայ երգիչը, որ որոտընդոստ ծափերու տակ բեմ կանչւեցավ կրկին եւ կրկին իր ձայնին մա՛նիսականութեամբ դիւթելու համար ունկնդիրներուն հոգին եւ անոնց խանդավառութիւնը խելահեղութեան աստիճաններու հասցնելով:

Մոսկվաքնակ մեր սովետահայ հայրենակիցը ինքնաբոլի օվացիաներու արժանացաւ ոչ միայն հայ, այլեւ ռուսերէ, իտալացիներէ եւ բազմաթիւ ուրիշ ազգութիւններէ բաղկացեալ երաժշտասէր բժախնդիր ունկնդիրներու կողմէ եւ ստիպուեցաւ մէկէ ավելի անգամներ անքորներ տալ»: Պ.Լիսիցյան ազգանունը, անշուշտ, ամերիկյան հայ համայնքի յուրաքանչյուրի սրտում կարոտի ու սպասումի մի դուռ բացեց: Անվանի ու ոսկյա բարիտոն Պավել Լիսիցյանը հանդես է գալիս նաև մենահամերգով «Քարնեգի Հոլի» դահլիճում, որտեղ համաշխարհային

կոմպոզիտորների ստեղծագործությունների կողքին պետք է հնչեր նաև Կոմիտասի «Կոունկը», Ա.Դոլուխանյանի «Երազը», որոնք կարոտի թևով պետք է միախառնվեին ու նորոգեին օտար ավերում գտնվող ամեն մի հայի սրտում բույն դրած հայրենիքի կարոտը ու հոգու թրթիռը:

Պ.Լիսիցյանին այս մենահամերգում նվագակցում էր հանրահայտ դաշնակահար Նաում Վալտերը:

Մենահամերգից հետո Պ.Լիսիցյանի պատվին «Կոնգրես Հոթելում» մատուցվեց պաշտոնական ճաշկերույթ-երեկո, Սուրբ Հովհաննես Եկեղեցու հովիվ Առնակ Քահանա Գասպարյանը օրհնեց սեղանները, և բազմաթիվ մեծարանքի ու գնահատանքի խոսքեր հնչեցին Պ.Լիսիցյանի պատվին: Հատկանշական էր Ս.Գասպարյանի նորաթուխ բանաստեղծությունը՝ ձոնված Պավել Լիսիցյանին, որը մարմնավորում էր Լիսիցյան սաղանդին իր ողջ կերպարով:

ՁՕՆ

Միրով՝ հռչակավոր երգիչ Պավել Լիսիցյանին

Հռչակաւոր երգիչ դառել:

Յաւերժական փառք Սովետին

Երգիդ յանգով, հեւք ու կանչով,

Քո սրտայոյզ ուժեղ ձայնով

Գերեցիր մեզ գույնով, բույրով,

Բազմահազար երանգներով:

Եւ բացեցիր հազար ուղի,

Մեր սրտերում լի բերկրաշատ,

Չգտում վսեմ բարձունքների

Չայնովդ ուժեղ ու երգաշատ:

Դու մեզ տւիր հմայք այնքան,

Կենսապարգէւ երգովդ վարար,

Լուսապայծառ ու յուզական,

Մեր սրտի զարկ, սփոփարար...

Որպէս լույսի, խանդաղտանքի,

Չայնդ յորդող ինչպէս հեղեղ,

Լի է բույրով թովջանքով
Ոնց վարդաստան դալարագեղ:
Անմահական ջուրն ես խմել,
Պաղ ու բիրեղ աղբիրների,
Ծաղիկների բույրով սնել,
Շաղ ու շաղոտ արօտների
Սեզ Կազբեկի զով հովերում,
Ջահել կուրծքդ է ուռճացել,
Շէն ու հօր շայրենիքում
Որ ծնել է քեզպեսներին,
Չայնով ամուր, արեւային,
Հազար ողջուն քեզ ու երկրին:

Մարտ 20-60, Շիրակ¹¹¹ :

Այդ օրը քիչ չէին նաև մեծարանքի ու փառաբանման խոսքերը, որոնք կրկին ու կրկին նվիրված էին Պավել Լիսիցյանին:

Իր գեղեցիկ խոսքերով հանդես եկավ «Դուլ Տայ Քըմփընիի» նախագահ Մարտիկյանը. «Իմ սիրելի հայրենակիցներ Տեր եւ Տիկին Լիսիցեաններ, մենք՝ Ամերիկահայերս, հպարտ կը զգանք ինքզինքնիս, երբ ձեզի պես աշխարհահռչակ հայ անունին պատիւ բերող եւ համբաւ վայելող մարդկանց կհանդիպինք: Կը մաղթեմ ձեզ աւելի մեծ բարձունքներ եւ յաղթանակներ»¹¹²:

Ջերմագին և կարոտալի մաղթանքի խոսքերով հանդես եկավ Սուրբ Հավհաննես Եկեղեցու հովիվ Առնակ Քահանա Գասպարյանը.

«Սիրելի Լիսիցեաններ, պատիւ է ինձ համար ձեզի մի քանի խօսքեր ըսելու: Իմացած էինք ձեր համբաւին մասին: Սրտագինս կ'ողջունենք ձեզ: Դուք այս հայ գաղութը գալով մեզ Ամերիկահայերուս հոգին լաւագոյն կերպով շողկապեցիք մեր սիրելի հայրենիքի մէջ ապրող հայ ժողովուրդի սիրտ ու կարօտի հայ հոգիներու հետ եւ մենք վստահ ենք, որ հայ կառավարութիւնը պիտի չի զլանա շարունակելու զանազան գեղարուեստի համբաւ վայելող անձնաւորութիւններ ուղարկելու եւս, որպէսզի աւելի

¹¹¹ «Լրաբեր» թերթ, 7 ապրիլի, 1960, Նյու-Յորք, գրեց՝ Ս.Գասպարեան, էջ 3:

¹¹² «Լրաբեր» թերթ, 5 ապրիլի, 1960, Նյու-Յորք, Ս. Մարոյեան, էջ 4:

սերտորեն կապիւնք միմեանց իմացական կերպով: Կ'ողջունեմ ձեզ ձեր բարձր արւեստին համար»¹¹³:

Բեմում հանդես գալու հետ զուգահեռ Լիսիցյանն իրագործում է մեծ և արգասաբեր համերգային գործունեություն: Իր համերգային գործունեությունում յուրահատուկ տեղ են գրավում խորհրդային կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ն.Մյասկովսկի և Դ.Շոստակովիչ, Վ.Մուրադելի և Ա.Խաչատրյան, Յու. Շապորին, Ալ.Դոլուխանյան և բազմաթիվ այլ հեղինակներ հենց Պ.Լիսիցյանին են վստահել իրենց կամերային ստեղծագործությունների առաջին կատարումը:

Որպես կամերային երգիչ Պ. Լիսիցյանը հանդես է եկել բազմաթիվ երկրներում իր հարուստ երգացանկով, նույնիսկ գտնվելով տվյալ պետությունում, ներկայացրել նրանց ազգային երգերը:

Ա.Ռուբինշտեյնի «Ներոն» օպերայի հանրահայտ էպիտալաման, որը մշտապես հիանալի կերպով կատարում էր Պ.Լիսիցյանը, համարվում էր նրա այցեքարտը:

Լիսիցյանը մեծ ավանդ ունի արտասահմանում խորհրդային վոկալ մշակույթի քարոզչության հարցում: Առավել քան 20 երկրներում, նա հանդես է եկել համերգներում և օպերային ներկայացումներում: Մամուլը բազմիցս է անդրադարձել նրա անզուգական կատարումներին:

«50-60-ական թվականներին արտասահմանյան բեմերուն մեջ Սովետական արվեստի առաջին ծիծեռնակներեն էր Բավել Լիսիցեանը: Իր արվեստի չափանիշով դատած են երկրի ոչ միայն մշակույթի, այլև ուրիշ բնագավառներու մասին»¹¹⁴:

Դեռևս 20-րդ դարի վերջին Պ.Լիսիցյանն իր արդեն իսկ ճանաչում ձեռք բերած «Ընտանեկան կվարտետով» հանդես էին եկել համերգներով բազմաթիվ երկրներում, Լատվիայի սիմֆոնիկ նվագախմբի, պետական ակադեմիական երգչախմբի և հեռուստատեսության և ռադիոյի նվագախմբի հետ, դիրիժոր՝ Արվիդ Յանսոնի գլխավորությամբ անմահացրեցին Մոցարտի Ռեքվիեմը:

«Որպես մի ամբողջ կոլեկտիվ կատարեցին Մոցարտի «Ռեքվիեմի» բոլոր՝ սոպրանոյի, ալտի, տենորի և բասի պարտիաները, նրանց դեբյուտը տեղի ունեցավ 1971

¹¹³ Նույն տեղում:

¹¹³ ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹¹⁴ Բավել Լիսիցյանի Յիշատակին, «Նոր Աշխարհ» թերթ, Աթենք, երկուշաբթի, 2 օգոստոսի, 2004, էջ 6:

թվականին և անմիջապես իր վրա հրավիրեց նրբաճաշակ գնահատողների ուշադրությունը: Հորը՝ Պավել Գերասիմովիչին, երկու դուստրերին՝ Կարինեին ու Ռուզաննային, և որդուն՝ Ռուբենին, երաժշտության մեջ միավորում էր գեղարվեստական սկզբունքների միասնությունը, նուրբ ճաշակը, սերը դեպի դասական մեծ ժառանգությունը: Մոսկվայում, Լենինգրադում և այլ քաղաքներում տրված համերգները հաստատեցին, որ ծնունդ է առել ամենաբարձր կարգի անսամբլ, որն ի վիճակի է մեկնաբանել դժվարագույն ստեղծագործությունները»¹¹⁵:

Ուրախալի է, որ առ այսօր մեր արխիվներում պահպանվում է իրենց «Ընտանեկան կվարտետի» կենդանի ձայնագրությունը, ժամանակակից ձայնասկավառակի տեսքով:

1988 թ. ադետալի երկրաշարժը ցնցեց ողջ աշխարհը. Պ.Լիսիցյանն անմասն չմնաց իր ազգի վշտից ու ցավից: Ադետալի այդ օրերին Ռուսաստանի Մեծ օպերային թատրոնի ողջ անձնակազմը հայությանը սատար կանգնեց ոչ միայն բարոյական և ցավակցական ուղերձներով, այլ ֆինանսական մեծ օժանդակությամբ: «Այդ օրերին, Պավել Լիսիցյանը իր ընտանիքի անդամներով շտապեց լինել ադետի գոտում: Անգամ վիշտը հոգում կրելով՝ Պ.Լիսիցյանը իր երաժշտական ընտանիքով, այնուամենայնիվ, հանդես եկավ բարեգործական համերգով, և պատահական չէ, որ նրանք նախընտրել էին կատարել Մոցարտի «Ռեքվիեմը», որն իր մեջ գերակշռում է վշտալի ողբերգական տրամադրություն, չնայած իր տխուր երաժշտական ելևէջների դրամատիկական մեղեդայնությանը, այն հույսի, լույսի և վերածննդի դրներ է բացում մարդկության առջև»¹¹⁶:

Պավել Լիսիցյանն իր կյանքի գրեթե ողջ տարիների ընթացքում հանդես է եկել աշխարհի տարբեր օպերային և համերգային դահլիճներում:

Ստորև ներկայացնում ենք Պավել Լիսիցյանի հյուրախաղերի տարեթվերը¹¹⁷

- Երևան (1942, 1948, 1960, 1964, 1969, 1971)
- Սվերդլովսկ (1949, 1956, 1962)
- Թբիլիսի (1950, 1976)

¹¹⁵ **Յակովենկո Ս.**, Պավել Լիսիցյան, էջ 85:

¹¹⁶ Հախնազարովա Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհու) հետ ունեցած անձնական զրույցից:

¹¹⁷ Պավել Լիսիցյանի հյուրախաղերի վերաբերյալ տե՛ս ինտերնետային հղում՝ <http://ru.hayazg.info/%D0%9B%D0%B8%D1%81%D0%B8%D1%86%D>

- Լվով (1950)
- Ստալինաբադ (1950)
- Կոպենհագեն (Լեոնկովալոյի «Պայացներ» և Գունոյի «Ֆաուստ» օպերաներում , 1951)
- Բաքու (1953)
- Կալինին (1953)
- Ճապոնիա (1959, 35 օր)
- Իրան, Ավստրիա, Նիդեռլանդներ, Հունգարիա, Ռումինիա, ԳԴՀ, Բուլղարիա, Չեխոսլովակիա, Լեհաստան (1950-1960 թթ.)
- Նովոսիբիրսկ (1960, 1970)
- Պյատիգորսկ (1960)
- Տուլա (1960)
- Դոնի Ռոստով (1960, 1965)
- Նյու-Յորք (1960, «Մետրոպոլիտեն-օպերա », «Աիդա»)
- Օրջոնիկիձե (1961)
- Ուֆա (1962, 1982)
- ԳԴՀ (1962)
- Ֆրունզե (1963, 1968)
- Հունաստան (1963)
- Ուլան-Ուդե (1963, 1970, 1972)
- Վորոնեժ (1963)
- Միլան (1964, Մեծ թատրոնի հյուրախաղերով, Պ. Չայկովսկի՝ «Պիկովայա դամա»)
- Գորկի (1964)
- Տաշքենդ (1964)
- Դուշանբե (1967)
- Չուկոտկա (1967)
- Մազադան (1967, 1972)
- Բլազովեշենսկ (1968)
- Բրյանսկ (1968)

- Աշխարհ (1968)
- Կրասնոդար (1969)
- Սուխում (1969)
- Տոմսկ (1970)
- Վորոնեժ (1970)
- Բառնաուլ (1970)
- Վիլնյուս (1971)
- Յակուտիա (1972)
- Վլադիվոստոկ (1972)
- Բիրոբիջան (1972),
- Սախալին և Խաբարովսկ (1972)
- Լենինգրադ (Լիսիցյանների ընտանեկան համերգ, 1972)
- Չիտա (1976)
- Բելգրադ (1976)

1962թ. փետրվարի 21-ին Սվերդլովսկում Պ.Լիսիցյանի համերգը սպասված էր շատ. «Սվերդլովսկի բնակչությունը յուրահատուկ տրամադրությամբ էին շտապում Օպերային թատրոն: «Այսօր երգում է Լիսիցյանը» - այս արտահայտությունը կարելի է լսել տրամվայում, ավտոբուսում, թատրոնի մուտքի մոտ: Վերդիի «Տրավիատա» օպերայի Ժերմոնի դերերգով սկսվեցին ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պավել Գերասիմի Լիսիցյանի շրջագայությունները մեր քաղաքում:

...Դահլիճում տիրում է լռություն: Ազատ հոսում է արտիստի գեղեցիկ, հնչեղ ձայնը, և հանդիսատեսը հուզմունքով լսում է վաղուց հայտնի մեղեդիները: Այնուհետև երկար թնդում են ծափահարությունները: Որքան հրաշալի է այս հոյակապ երգչի գրավող վարպետությունը»¹¹⁸:

1967թ. ապրիլի Տաջիկստանում անցկացվող ռուսական մշակույթի տասնօրյակի շրջանակներում Պավել Լիսիցյանը համերգային դահլիճներում հանդես է գալիս մեծ, տարատեսակ ծրագրով: «Չորրորդ անգամն է, ինչ ես Դուշանբեում եմ, և միշտ այստեղ հաճույքով եմ գալիս: Միրում և մեծապես գնահատում եմ ձեր երաժշտավարներին, որոնց հետ ես երգել եմ՝ Է.Հայրապետյան, Ի.Աբդուլլահա,

¹¹⁸ Сегодня поет Лисициан, “Вечерний Свердловск”, 22 февраля, 1962.

ներկայացնելով իմ գործընկերներին, հիանալի երգիչներ՝ Խանիֆա Մավլյանովային, Ռաֆայել Տոլմասովին և շատ այլոց: Շատ ուրախ եմ, որ ռուսական մշակույթի տասնօրյակին մասնակցելու հրավեր եմ ստացել: Բացման օրը՝ ապրիլի 7-ին, ես, նվիրելով տասնօրյակին, առաջին անգամ կատարում էի կոմպոզիտոր Ա. Այվազյանի «Россия - русская земля» երգը, եզրափակիչ համերգին՝ ապրիլի 16-ին, ուզում եմ կատարել Մ. Մուրավինի մշակմամբ տաջիկական ազգային երգ «Իշկի-մանը» («Իմ սերը»):

Միրելով Տաջիկստանը, ես շատ կուզեի ձեր արևաշատ երկրի հետ ծանոթացնել իմ երաժշտական ընտանիքին՝ չորս երեխաներիս: Իմ ավագ դուստրը՝ Կարինան, երգչուհի է, մեցցո-սոպրանո, և նա նվագում է կլավեսին: Ռուզաննան և Ռուբենը զույգեր են: Նրանք ծնվել են հաղթանակի օրը՝ 1945 թվականի մայիսի 9-ին, պատերազմից 6 ժամ անց...

Ռուզաննան նույնպես երգում է, նա սոպրանո է, և նվագում է տավիդ: Ռուբենը տենոր է, նա նվագում է երկու գործիք՝ թավջութակ և ֆլեյտա: Կրտսեր որդիս՝ Գարիկը, դրամատիկական թատրոնի դերասան է և նույնպես պետք է մարզի ձայնը: Իսկ ներկայումս նա նոր է ավարտել, նկարահանվել «Արմենֆիլմ» ստուդիայում «Լավարի որսորդը» ֆիլմի գլխավոր դերում: Շուտով այս ֆիլմը դուրս կգա էկրան: Այնպես որ, հնարավոր է, ժպտալով ասաց Պավել Լիսիցյանը, որ իմ հաջորդ այցի ժամանակ պաստառներին լինի ոչ միայն իմ անունը... »¹¹⁹:

Իսկ Տոմսկում 1970-ին տեղի ունեցած համերգի մասին “Красное знамя”-ն գրեց. «Այդ երեկո Պավել Լիսիցյանը երգեց մեծ ու բազմազան ծրագիր, որը ներառում էր ռուսական և արտասահմանյան դասականների, սովետական կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայկական հեղինակների երգեր և սիրերգեր: Սակայն, կատարելով իր ավանդական օպերային երկացանկը՝ Միզգիրի արիան «Ձյունանուշիկից», Ռուբինշտեյնի «Հարսներգը» «Ներոնից», դիմեր ազգային լիրիկային Սպենդիարյանի սիրերգներով, թե բացեր Չայկովսկու և Ռախմանինովի դրամատիկական լիրիկայի էջերը, նա այս ամենը երգում էր բարձր մասնագիտական վարպետությամբ և արտիստիզմով: Սակայն, հնարավոր է, որոշ ունկնդիրներին թվար մի փոքր շինծու հայտնի սիրերգերի «օպերային» դրամատիկականացումը, սակայն հենց

¹¹⁹ **Забиякин Е.** Декада русской культуры в Таджикистане, “Таджикистан”, 14 апреля, 1967.

այս հատկանիշներն էին Պ.Լիսիցյան-վոկալիստին թույլ տալիս հասնել երաժշտափիլիսոփայական ընդհանրացումների Շեքսպիրի սոնետներ կատարելիս (Երաժշտությունը՝ Կաբալևսկու):

Միննույն ժամանակ երգիչն իրեն դրսևորեց որպես նուրբ ակվարելային լիրիկայի վարպետ: Շուբերտի սիրերգ «Դեպի երաժշտությունը», Աբազի հին ռուսական սիրերգ «Մառախլապատ առավոտը», Ռավելի «Դոն-Կիխոտ-Դուլցինեին» վոկալային ցիկլից «Ռոմանտիկ երգը» ջերմորեն ընդունվեցին Տոմսկի երաժշտասերների կողմից:

Համերգի յուրահատուկ եզրափակիչ ակորդ դարձավ հանդիսատեսի պահանջով երգված Ա.Դոլուխանյանի «Իմ հայրենիք» երգը, որը հանդիսանում է սովետական վոկալ գրականությունում բոլորին հարազատ այս թեմայի լավագույն մարմնավորումներից մեկը»¹²⁰:

Պավել Լիսիցյանի հյուրախաղերը Ճապոնիայում: Պավել Լիսիցյանը բազմաթիվ համերգային ծրագրերով և հաջող ելույթներով է հանդես եկել ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Նրա անունը լայնորեն հայտնի է դարձել բազմաթիվ երկրներում՝ որպես մեծ արտիստի, որն արժանապատվությամբ ներկայացնում է Խորհրդային արվեստը: «Իր հոյակապ արվեստով Պ.Լիսիցյանը բարեկամության կամուրջներ է գցել սովետական ու արտասահմանյան շատ ժողովուրդների միջև, նրա հիրավի սահմաններ չճանաչող երգարվեստը, բարձր պահելով սովետական երկրի կուլտուրայի դրոշմը, միլիոնավոր մարդկանց ամենապարզ ու հասկանալի ձևով ցուցադրել է եղբայրության ու խաղաղության վեհ նշանակությունը»¹²¹:

1950-60-ական թվականներին, հատկապես սփյուռքահայ մամուլի էջերում, տպագրվում էին Պավել Լիսիցյանի արտասահմանյան հյուրախաղերին նվիրված բազմաթիվ հոդվածներ ու ծավալուն բրոշյուրներ: «Հնդկաստանի, Իտալիայի, Բուլղարիայի, Ռումինիայի հայ գաղթօջախներում Լիսիցյանի համերգները ուղեկցվում են հայրենասիրական ցույցերով, հայ մարդկանց հայրենաբաղձ հոգիներում վառելով լույսի և հույսի հավատը»¹²²:

¹²⁰ **Бережков Б.** Неувядающий талант, “Красное знамя”, Томск, 8 ноября, 1970.

¹²¹ **Պետրոսյան Մ.**, Պավել Լիսիցյան, 1973, Երևան, էջ 71-72:

¹²² Նույն տեղում, էջ 65:

Գեղեցիկ ու անմիջական հիշողություններով տպավորված Պավել Լիսիցյանը պատմում է իր արտասահմանյան հյուրախաղերի, հատկապես Ճապոնիայի մասին: Այդ են վկայում Երևանի Չարենցի անվան գրանության ես արվեստի թանգարանում իմ հետազոտությունների ժամանակ հայտնաբերված և ռուսերենից ու ճապոներենից հայերեն թարգմանված մի քանի հոդվածներն ու գրություններ:

Ճապոնական բրոշյուրներից մեկի հենց առաջին էջին տպագրված են Պ.Լիսիցյանի հետևյալ խոսքերը. «Երևի թե արտասահմանյան երկրներից ոչ մեկն այնպես չի հիացրել ինձ, չի թողել այսքան վառ և տարատեսակ տպավորություններ, ինչպես Ճապոնիան»¹²³: Նույն բրոշյուրի հաջորդ էջում Պ.Լիսիցյանի անհավանական տաղանդի մասին կարդում ենք. «Ժողովրդական արտիստ Պավել Լիսիցյանի անհավանական տաղանդի արժանացել է մեծ ճանաչման և սիրո Խորհրդային Միությունում և նրա սահմաններից դուրս: Ուրախալի է, որ մեր երկու երկրների միջև եղած հոգևոր հարստությունների փոխըմբռնման շնորհիվ այս հանձարեղ բարիտոնին կարող են գնահատել նաև ճապոնական օպերային արվեստի բազմաթիվ երկրպագուներ»¹²⁴:

«1958 թվականի սեպտեմբերի 21-ին «Էյր-Ֆրանս» ինքնաթիռով ես և դաշնակահար Ն.Վալտերը Վնուկովոյի օդանավակայանից թռանք Ճապոնիա,- հետագայում կհիշի Պ.Լիսիցյանը,- մեր ճամփան անցնում էր Փարիզով, Հռոմով, Թել-Ավիվով, Բանկոկով, Կարաչիով, Սայգոնով, Մանիլայով: Ճապոնիայի մայրաքաղաք Տոկիոյի օդանավակայանում մեզ դիմավորեցին Ճապոնիայի մշակույթի և արվեստի նախարարության ներկայացուցիչները, բազմաթիվ օպերատորներ, լրագրողներ, և ուղղակի երաժշտասերների մի ողջ խումբ: Կինօպերատորները բառացիորեն չէին թողնում անցնել՝ տեսաերիզին ձայնագրելով յուրաքանչյուր քայլը (ինչպես մենք հետո իմացանք, Ճապոնիայում մշակութային իրադարձությունները միշտ նկարահանվում են)¹²⁵:

Հյուրանոցի ընդունարան հասնելուն պես տեղի է ունենում մամուլի ասուլիս, որի ընթացքում ճապոնացի լրագրողները խանդավառությամբ հետաքրքրվում են այն ամենով, ինչը կապ ուներ Մեծ թատրոնի հետ: “Նրանք խիստ զարմացել էին, երբ

¹²³ ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹²⁴ Նույն տեղում:

¹²⁵ Նույն տեղում:

խմացան, որ թատրոնում աշխատում է մոտ երեք հազար մարդ: «Դա մի ամբողջ գյուղ է», - նկատեց լրագրողներից մեկը»¹²⁶: Պ.Լիսիցյանին հարցեր են ուղղում թատրոնի խաղացանկի վերաբերյալ, այն մասին, թե ինչ նոր ներկայացումներ են պատրաստվում, ինչպես է ընթանում բեմադրական աշխատանքը, որքան ժամանակով է դրվում նոր ներկայացումը, ով է երիտասարդներին փոխանցում թատրոնի հրաշալի արվեստը:

«Բոլոր լրագրողները, ովքեր մեզ հարցեր էին շռայլում, հիացմունքով էին արտահայտվում Ճապոնիայում Մեծ թատրոնի բալետային խմբի հյուրախաղերի մասին, ազգանուններով նշում էին իրենց դուր եկած արտիստներին, հարցնում էին, թե ինչ նոր դերակատարումներ ունեն թատրոնի խաղացանկում:

- Պարոն Լիսիցյան,- ասաց լրագրողներից մեկը,- խնդրում ենք ձեզ Մեծ թատրոնի աշխատակազմին հաղորդել Ճապոնացիների ջերմ ցանկությունը՝ մեր երկրում լսել և տեսնել թատրոնի օպերային ներկայացումները: Մենք այնքան ենք լսել Մեծ թատրոնի արտիստների կատարումները ձայներիզների վրա, մենք արդեն տեսել ենք սովետական բալետը, և մենք շատ կցանկանայինք, որ թատերախումբն իր օպերային ներկայացումները բեմադրի նաև Ճապոնիայում: Մենք գիտենք, որ Մեծ թատրոնի կազմում կան բազմաթիվ ժամանակակից ականավոր արտիստներ, որոնց թվին են պատկանում այնպիսի հիանալի երգիչներ, ինչպիսիք են Վ.Ֆիրսովան, Ի.Պետրովը և այլք: Մենք անչափ ուրախ կլինենք լսել նրանց նաև Ճապոնիայում¹²⁷:

Այնուհետև երգչին հարցեր են տալիս մեր արտիստների մասին, հետաքրքրվում, թե ինչ նոր ստեղծագործություններ են գրել սովետական կոմպոզիտորները հենց Մեծ թատրոնի համար, ամեն կերպ արտահայտում էին իրենց գոհունակությունը կապված այն բանի հետ, որ Մեծ թատրոնում բեմադրվի Ս.Պրոկոֆևի «Պատերազմ և խաղաղություն» օպերան:

«Ես դիտավորյալ այսքան մանրամասն պատմեցի առաջին ասուլիսի բովանդակությունը, քանի որ ապրելով և աշխատելով Մոսկվայում մենք՝ Մեծ թատրոնի արտիստներս, անգամ չէինք էլ կասկածում, թե մեր կոլեկտիվով որքան են հետաքրքրվում արտասահմանում, թե որքան մանրամասն գիտեն մեր ստեղծագործական կյանքի մասին: Այս ասուլիսը մեկ անգամ էլ ապացուցեց, թե որքան

¹²⁶Նույն տեղում:

¹²⁷Նույն տեղում:

շատ բան են սպասում արտասահմանում այսպիսի մեծ աշխատակազմից, ինչպիսինն է ԽՍՀՄ Մեծ թատրոնը»¹²⁸:

Առաջին համերգը տեղի է ունենում սեպտեմբերի քսանհինգին, Տոկիոյի խոշորագույն դահլիճներից մեկում: «Պետք է նշեմ, որ Ճապոնիայի ողջ համերգային և թատերական կյանքը սկսվում է վաղ երեկոյան՝ վեցին կամ վեցն անց կես: Կարիք չկա նշելու, թե ինչ դժվարությամբ ես դուրս եկա բեմահարթակ ճապոնացի հանդիսատեսի հետ ծանոթության առաջին երեկոյին: Եվ, թեպետ ինձ զգուշացրել էին, որ այդ համերգային դահլիճի ակուստիկան այդքան էլ լավը չէ, իրականում ես համոզվեցի հակառակում: Դրա լավագույն ապացույցն է հանդիսատեսի վերաբերմունքը, որն իմ դեմքով ողջունում էր ոչ միայն Պավել Լիսիցյանին, այլև սովետական վոկալ արվեստի ներկայացուցիչին: Ճապոնիայում երեսունհինգ օրվա ընթացքում երգվել է տասնհինգ մենահամերգ: Այդ ընթացքում թերթերում և ամսագրերում տպագրվել է հարյուր յոթանասունից ավել հոդվածներ և գրախոսություններ»¹²⁹:

Մինևույն ժամանակ սովետական լրագրությունն այդ հյուրախաղերի մասին, անհասկանալի պատճառներով, ոչինչ չէր ասում: «Այսպիսի դրվածքը ես համարում եմ արմատապես սխալ: Վերջին ժամանակներում հաճախակի դարձած սովետական արտիստների հյուրախաղերը արտասահմանում ցույց են տալիս ոչ միայն սովետական մշակութային նվաճումները, այլև ծառայում են ողջ աշխարհում խաղաղության կայացման գործին, ամրապնդում են ժողովուրդների միջև բարեկամությունը, նպաստում են տարբեր ժողովուրդների, հանրության տարբեր շերտերի ներկայացուցիչների առավել սերտ շփմանը: Ըստ բազմաթիվ նամակների, որոնք ստացել են արտիստները արտասահմանյան հանդիսատեսներից, ես գիտեմ, թե ինչպես են նրանք հետաքրքրվում սովետական մարդկանց կյանքով, հաջողություններով և թե որքան թանկ է նրանց համար բարեկամությունը Սովետական Միության հետ»¹³⁰:

Ճապոնիայում ելույթների ծրագրում Պ.Լիսիցյանը ներառել էր ռուսական և արևմտաեվրոպական դասական ստեղծագործություններ, սովետական կոմպոզիտորներ Դ.Կաբալյովսկու, Յու.Շապորինի, Ա.Խաչատրյանի, Ա.Դոլուխանյանի ստեղծագործությունները, ռուսական, ուկրաինական, հայկական, ինչպես նաև

¹²⁸ Նույն տեղում:

¹²⁹ Նույն տեղում:

¹³⁰ Նույն տեղում:

իտալական և մի քանի ճապոնական ժողովրդական երգեր:

Ճապոնացի հանդիսատեսը մեծ ուշադրությամբ էր լսում սովետական կոմպոզիտորների ստեղծագործությունները, որոնք մեծամասամբ առաջին անգամ էին կատարվում նրանց համար: Հարկ է նշել, որ սովետական երաժշտությունը մեծ հաջողություն էր վայելում ճապոնիայում:

«Տարվելով այս «ծագող արևի երկրի» (այսպես են իրենց երկիրն անվանում ճապոնացիները) մասին տեղեկություններ ունենալու ծարավով, մենք համերգի հաջորդ օրը մեկնեցինք քաղաքն ուսումնասիրելու: Ազգային թանգարանի փոխտնօրեն Սեյցո Տոնուկին սրտանց ողջունեց մեզ և նշեց, որ ուրախ է տեսնել, թե ինչպես են սովետական մարդիկ գալով ճապոնիա միանգամից ծանոթանում երկրի ազգային տեսարժան վայրերի հետ¹³¹: Հյուրերին թանգարանի ցուցանմուշների հետ առավել մանրամասն ծանոթացնելու համար հրավիրվել էին Տոկիոյի համալսարանի պրոֆեսորներ Ցիդզավան և Կուրատոն: Նրանք մանրամասն և շատ հետաքրքիր, սիրով և հպարտությամբ պատմում էին ճապոնիայի հնագույն մշակույթի պատմությունը, ցույց էին տալիս տարբեր ժամանակաշրջանի գեղարվեստական գործերը: “Ճապոնիայի արտահայտչական արվեստում շատ նմանություններ կան չինականի հետ: Ի դեպ, շատ հաճելի էր Տոկիոյի թանգարանում տեսնել ռուսական գեղանկարիչներ Ի.Ռեպինի և Ի.Շիշկինի ստեղծագործությունները: Ողջ կյանքումս տպավորված մնաց հանրահայտ ճապոնական ձենապակու օրինակները, զարմանալի, նրբագույն արվեստով և բարձր գեղարվեստական ճաշակով: Հետաքրքիր և յուրահատուկ է գյուղական սպասքը, պատված լաքով, որը գրեթե չի ենթարկվում ժամանակի քայքայմանը: Որքան արվեստ, աշխատանք և համառություն է ներդրված եղեգից և հնդկեղեգից պատրաստված այդ առարկաներում:

Հատկանշական է, որ թե՛ հյուրանոցում, թե՛ ռեստորաններում, թե՛ թատրոնում, թե՛ փողոցում և տներում, ամենուր, ուր մենք եղել ենք, միշտ ճապոնացիների մոտ սրտառուչ ցանկություն է եղել մեզ՝ սովետական մարդկանց որքան հնարավոր է լավ ծանոթացնելու իրենց երկրի հետ:

Ճապոնացիք հպարտ և աշխատասեր ազգ են: Երևի թե նրանց կղզում չկա չմշակված ոչ մի հողակտոր: Ընդ որում մշակված է այն մանրակրկտորեն, սիրով և

¹³¹Նույն տեղում:

բարեխղճությամբ: Իսկ ինչպես են նրանք հպարտանում իրենց ազգային արժեքներով, իրենց հնագույն մշակույթով, որը մարդկությանը տվել է բազմաթիվ ականավոր ուղեղներ: Ինձ, ցավոք, չհաջողվեց գտնվելու գյուղական տներում: Սակայն ես կարծում եմ, որ այնտեղ էլ, ինչպես քաղաքում, տները պահպանվում են անասելի մաքրությամբ»¹³²:

Երգիչն անդրադառնում է նաև Տոկիայի ճարտարապետությանը: «Տոկիոյում կառույցների մեծամասնության ճարտարապետությունը խառն է՝ համատեղվում են մոդեռն ոճը և ազգային առանձնահատկությունները: Տների ներսում այնպիսի մաքրություն է, որը հատկանշական է հիվանդանոցների վիրահատարաններին: Մենյակներում գույքի նվազագույն քանակություն կա, ընդ որում համարյա ողջ գույքը փայլեցված է: Մեր պատկերացմամբ աթոռներ չկան. կան առանց ոտքերի, հենակով նստարաններ, սեղանները շատ ցածր են, այնպես որ նստում ես գրեթե հատակին: Հատակը լվացված է և փայլեցված, պատված խսիրով: Յուրաքանչյուր տուն մտնելիս դուք պարտադիր պետք է դրսի կոշիկները փոխարինեք տնայիններով:

Ճապոնացիների մոտ տների դասավորվածության և մաքրության պաշտամունք կա: Եվ պետք է ասեմ, որ նրանք դա անում են լավ ճաշակով: Տոկիոյում, ինչպես և կապտալիստական բոլոր քաղաքներում, մենք բազմաթիվ հակադրություններ ենք տեսել՝ շքեղ հյուրանոցներ, թանկարժեք մեքենաներ, բազմաթիվ փայլուն խանութներ՝ հազեցած տեխնիկայի վերջին ճիչերով, իսկ կողքին՝ աղքատ մարդ, ով քնած է արկղի մեջ, նիհար և տանջված երաժիշտ, ով կոպեկների դիմաց նվազում է անցորդների համար...

Երկրում մեծ հաջողություն էր վայելում սպորտը, հատկապես՝ տարատեսակ ըմբշամարտերը: Պետք է նշեմ, որ մեր վրա ըմբշամարտը, օրինակ՝ «սամբոն», «կարատեն» և «ջուձեն» երկակի տպավորություն գործեցին: Մենք չէինք կարող չնկատել ճապոնական սպորտսմենների մեծ տոկունությունն ու համառությունը, և մեզ զարմացրեց որոշ պահերի ինքնատիպությունը: Օրինակ՝ ինչու՞ մն է կայանում այնպիսի սպորտաձևի իմաստը, որում ոտքով կամ ձեռքով երկու մասին են կոտրում, երկու սանտիմետր հաստությամբ փայտերն ու տախտակները: Անշունչ առարկայի հետ պայքարում հսկայական ուժ գործադրելով, սպորտսմենը կարող է մրցակցել միայն

¹³²Նույն տեղում:

նրանց հետ, ովքեր տիրապետում են «կարատեի», «ջուձեի» մարտարվեստի հնարքներին:

Ինչպես մենք հետո իմացանք, այստեղ, ինչպես և ճապոնացիների կյանքի այլ հարցերում, որոշիչ դեր է խաղում գումարը: «Քամահրելի մետաղը» այս երկրում ամենագոր զենք է, դրա օգնությամբ շատ բանի կարող ես հասնել: Փողի իշխանության վառ օրինակ էր ճապոնիայում մեր գտնվելու ընթացքում աղմկահարույց դեպքը, երբ խոշորագույն ավստրալիական գործարարը, յոթանասունամյա միլիոնատերը եկել էր ճապոնիա երիտասարդ ճապոնուհու հետ ամուսնանալու համար: Նա իր ցանկությունը բացատրեց նրանով, որ ճապոնացի աղջիկները, շատերի կարծիքով, ամենալավն են... աշխարհում ամենացանկալիները: Թերթերն ու ամսագրերը լայնածավալ գովազդում էին այս իրադարձությունը, և միլիոնատիրոջ հայտարարությանը կարճ ժամանակահատվածում երեք հարյուրից ավել արձագանք եղավ: Ավստրիալացին ամուսնացավ երեսունչորսամյա թեկնածուի հետ՝ նրան կտակելով իր ունեցվածքի կեսը: Փողոցում, խանութներում, ռեստորաններում, լայնածավալ քննարկում էին այդ ամուսնությունը, և մենք դեմքերից տեսնում էինք, որ ճապոնացիք բավականին դրական էին գնահատում այդ ամուսնությունը: Մենք, անկեղծասած, ապշած էինք մնացել: Սակայն ոչ բոլոր ճապոնացիք են ապրում և աշխատում գումարի իշխանության տակ»¹³³:

Պ.Լիսիցյանն այցելում է Հիրոսիմա. «այս բազմաչարչար քաղաքում մեր աչքերով տեսանք աշխատող մարդկանց նորակառույց քաղաքը, տների պատերի պաստառները, որոնցով կոչ էին անում դադարեցնել միջուկային զենքի փորձարկումները, տեսանք քաղաքի մահացած քաղաքացիների հիշատակին նվիրված հուշարձաններ, հասկացանք, որ ճապոնիայի ազգային զանգվածները թույլ չեն տա, որպեսզի նոր համաշխարհային պատերազմ լինի: Քաղաքի բնակիչները երբեք չեն մոռանա 1945 թվականի օգոստոսի 6-ը, երբ խաղաղ բնակչության վրա գցվեց առաջին ամերիկյան ատոմային ռումբը, չեն մոռանա, թե ինչպես պայթյունից մեկուկես րոպե անց թունավոր կարմիր մեզը պատեց քաղաքի վաթսուն տոկոսը և ուժգին քամին տարածեց բոցը, ծխի սյունը բարձրացավ երկրից վեց հազար մետր բարձրության վրա, բոլոր տներն ավերվել էին և երկու հարյուր հազարից ավել մարդ է մահացել, ինչպես

¹³³Նույն տեղում:

նան կար հարյուր հազարից ավելի վիրավոր: Նագասակիում մարդկային կորուստները կազմում էին հարյուր յոթանասուն հազարից ավելի:

Հիրոսիմայի թանգարանում մենք տեսանք քաղաքի մոդելը՝ պայթյունից առաջ և հետո: Այս տեսարանն անհնար է մոռանալ: Քաղաքում մնացած միակ տունը ահեղ նախագուշացում է հանդիսանում նոր պատերազմ սկսել ցանկացողների համար»¹³⁴:

Թեև Պ.Լիսիցյանին բախտ չի վիճակվում գտնվել ճապոնական երաժշտական թատրոնների ներկայացումներին, սակայն դիտում է երկրում հանրահայտ Կաբուկի թատրոնի ներկայացումները:

«Սա շատ ինքնատիպ արվեստ է: Բեմադրվում է հանդեսային և բալետային մնջախաղեր, երաժշտական և դրամատիկական ներկայացումներ: Խաղառճր բավականին պայմանական է. ըստ էության, Կաբուկի թատրոնում արտիստի դերը բերվում է խամաճիկի դերի: Դերասանները մի շարք հնարքներ ունեն, որոնք արդեն կանոնավոր են դարձել. շարժումները, ձայնի մոդուլյացիաները, շպարը, որոնք համարյա միշտ սիմվոլիկ են: Թատրոնի խաղացանկում ոչ միայն պատմական պիեսներ են, այլ նաև ժամանակակից, ինչն, ըստ էության, նպաստում է հանրաճանաչ լինելուն: Ըստ ավանդության, Կաբուկի թատրոնը ծնվել է փողոցում, այն ստեղծել է XVII դարի հայտնի փողոցային պարուհի Օ-Կուինը: Սկզբում թատրոնում բոլոր դերերը կատարում էին միայն աղջիկները, այնուհետև թատերախումբը համալրվեց պատանիներով և տղամարդկանցով, ովքեր մինչև հիմա էլ թատրոնի ներկայացումներում խաղում են կանացի դերեր»¹³⁵:

Պ.Լիսիցյանին իր տանը հյուրընկալում է ճապոնացի հանրահայտ արտիստներից մեկը՝ Կաբուկի թատրոնի արտիստ Իտիկիվա Էննոսկեն: Նա պատմում է այն մեծ տպավորության մասին, որն իր վրա թողել էր իր այցը Սովետական Միություն, արտիստների իրական խաղը և ստեղծագործական աճի այն ահռելի հնարավորությունները, որոնք տրամադրում են ԽՍՀՄ երիտասարդ արտիստներին: Իտիկիվա Էննոսկեն տեղեկացնում է, որ 1959 թվականի ապրիլին Կաբուկի թատրոնը պատրաստվում է գալ ԽՍՀՄ: Այժմ թատերախումբը հատուկ այդ հյուրախաղերի համար նոր ծրագիր է նախապատրաստում:

¹³⁴ Նույն տեղում:

¹³⁵ Նույն տեղում:

Ճապոնական հյուրախաղերի ընթացքում Պ.Լիսիցյանը Տոկիոյից բացի Էլույթ ունեցավ այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպիսին է Օսական, Նագոյան, Կոբեն, Հերոսիման, Սապպորոն, Սորիոկան, Սենդայը, Խակատան, Յախատան:

Մեկնելուց առաջ համերգների անտրեպրենյոր Խայասին խնդրում է, որ ԽՍՀՄ մշակույթի նախարարությանը և մեր թատրոնի տնօրինությանը փոխանցեն 1960 թվականի ապրիլին Ճապոնիայում Մեծ թատրոնի հնարավոր հյուրախաղերի մասին: Ե՛վ այս հրավերում, և՛ ցուցաբերած հատուկ ուշադրության համատեքստում զգացվում էր ճապոնացիների Սովետական Միության հետ մշակութային կապերը ավելի ու ավելի ընդլայնելու ակտիվ ցանկությունը»¹³⁶:

Պ.Լիսիցյանի հյուրախաղերը ԳԴՀ-ում: Այս շրջագայությունը ներկայացնելու համար ստորև թարգմանաբար ներկայացնում ենք դաշնակահար Վ.Շպիսսի տպավորությունները: «Վերջերս ինձ բախտ վիճակվեց գտնվելու Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունում: Կցանկանայի իմ տպավորություններով կիսվել մեր թերթը ընթերցողների հետ:

Պավել Գերասիմի Լիսիցյանի չորս բարդագույն համերգին, որոնց ես մասնակցում էի որպես նվագակցող, ինձ մեծ ստեղծագործական ուրախություն պատճառեցին, իսկ հաճելի անհանգստությունը, որը նախորդում էր այդ համերգներին, ընդամիշտ կմնա իմ հիշողություններում:

Մենք հանդիպեցինք Բեռլինում, որտեղ Պավել Գերասիմովիչը ժամանել էր Ռումինիայի Ժողովրդական Հանրապետությունից: Ես մեկ օր շուտ էի եկել և այդ օրը նվիրել էի քաղաքը դիտելուն:

Ունտեր դեն լիդենում գտնվող Օպերայի պետական թատրոնը, Բրանդենբուրգյան դարպասները, Հումբոլդի անվան համալսարանը – այս ամենը մեծ տպավորություն է գործում: Կյանքն ընթանում է ամբողջ թափով: Ամենուր շինարարական կռունկներ են: Բազմաթիվ նոր տներ: Պատերազմի հետքերն աստիճանաբար նվազում են: Իմ վրա մեծ տպավորություն թողեց հսկայական, մի քանի կիլոմետրանոց նոր փողոցը՝ Ֆրանկֆուրտ ծառուղին: Հիանալի էր հատկապես երեկոյան, ամանորյա տոնավաճառը, որն ի դեպ բացվել էր ամանորից մեկ ամիս շուտ: Ադմուկ, ճիչեր, Ձմեռ պապեր, տարատեսակ «սարսափելի» զվարճահարմարանքներ,

¹³⁶ “Советский артист” газета, 1958, Москва, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

Ձմեռ պապերը բարձրախոսները ձեռքին խոստանում են վիճակահանության մասնակիցներին խոշոր շահումներ: Բոլոր ապրանքները՝ փոքրից մինչև մեծ, ցուցադրված են հենց այստեղ, բոլորը կարելի է շահել 25 պֆեննիգով: Ես կարողացա շահել կոնֆետ և հասարակ մատիտ, որով էլ ես գրում եմ այս տողերը: Շուրջբոլորդ զվարթ դեմքեր են: Համալսարանից վերադարձող երիտասարդություն, աշխատավորներ: Այստեղ կարելի է գնել ամանորյա նվերներ, խմել ավանդական գարեջուր:

Հաջորդող օրերը նվիրվեցին համերգին նախապատրաստվելուն: Համերգի ծրագիրն առաջին մասում ներառում էր արիաներ ռուսական և սովետական օպերաներից, սիրերգեր և հայկական ժողովրդական երգեր, իսկ երկրորդ մասում՝ արևմտյան դասական Գ.Հենդելի, Ռ.Շումանի, Ֆ.Շուբերտի, Մ.Ռավելի ստեղծագործությունները: Բոլոր ստեղծագործությունները կատարվում էին կոմպոզիտորների ազգային լեզուներով»¹³⁷:

Գերմանական և սովետական սպաների համար առաջին համերգը կայացավ Պոտսդամ քաղաքում: Գերմանական ստեղծագործությունների կատարումը գերմանական հանդիսատեսի առջև շատ էր հուզում երգչի: Համերգը մեծ հաջողությամբ անցավ, և մամուլում նշվեց կատարվող ստեղծագործությունների խիստ վերձանումն ու մաքուր արտասանությունը:

Հարմարավետ թատրոն «Ունտեր դեն լիդեն»-ում «Տրավիատայում» Պ.Լիսիցյանը հանդես է գալիս Ժերմոնի դերերգով: Աստիճանաբար աճող հաջողությունը հպարտության զգացում է առաջացնում սովետական արվեստի, Մեծ թատրոնի հանդեպ: Թեպետ ծափահարություններն այս թատրոնում ընդունված չեն, սակայն Ժերմոնի արիայի կատարումից հետո այս ավանդույթը խախտվեց: Բուռն ծափահարությունները, որոնցով պարզևատրվեց հյուրը, ինչպես հետո պարզվեց իրավունք էին տալիս կրկնել արիան, և դիրիժորը նշանի էր սպասում կատարողից, սակայն... դա մեր մոտ ընդունված չէ:

Գերմանական պատմության թանգարանի շենքում կայացած երկրորդ համերգն անցավ ոչ պակաս հաջողությամբ: Լուրջ ակադեմիական և սկզբում սառը հանդիսատեսն արագ ջերմացավ և շուտով կայացավ հանդիսատեսի հետ լիարժեք

¹³⁷ Гастроли в ГДР, “Советский артист”, Москва, 1962, стр. 3, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

շփում: Հանդիսատեսը հատկապես ջերմ ընդունեց Մ.Ռավելի «Դոն-Կիխոտ» ցիկլը և հայկական ժողովրդական երգը՝ «Կռունկը»:

Լավ, նրբագագ հանդիսատեսի հանդիպեց Պ.Լիսիցյանը փոքրիկ քաղաքներում՝ Շվեբինում և Պարհիմում, կայացած համերգների ժամանակ:

Երգչի վրա մեծ տպավորություն գործեց նոր Լայպցիգյան թատրոնը: Մշակված փայտով և պղնձով, հսկայական խատուտիկների տեսքով ջահերով, այն անմոռանալի տպավորություն է թողնում: Ճեմասրահում անտրակտներից առաջ սովորական զանգերի փոխարեն հանկարծ հնչում է որևէ էլեկտրական գործիքի կախարդական ձայներ՝ աստիճանաբար գոյացնելով զվարճալի նոնակկորո (ֆա-լյա-դո-մի-սոլ):

Այս թատրոնում Պ.Լիսիցյանին հաջողվեց լսել Գ.Հենդելի «Ռադամիստո» օպերան: Երգիչները մաքուր վարպետությամբ կատարում էին բարդագույն արիաները, որոնցով հարուստ է այս օպերան:

Հաջորդ օրը թատրոնում ընթանում էր «Եվգենի Օնեգին» օպերան՝ Պ.Լիսիցյանի մասնակցությամբ: Ներկայացումն ընթացավ մեծ հաջողությամբ: Արտիստներին բազմիցս բեմ էին կանչում:

Կենտրոնական թերթերը տպագրեցին մեծ, մանրակրկիտ և ջերմ տպավորություններով հազեցած հոդվածներ:

«Կցանկանայի կիսվել «Թատերական խոհանոցի», ներկայացմանը նախորդող աշխատանքների վերաբերյալ իմ տպավորություններով: «Տրավիատայի» տեսարանային փորձի ժամանակ խաղընկերներ գրեթե չկային: Ռեժիսորը, անվերջ կերպափոխվելով, խաղում էր բոլոր բացակայող խաղընկերների փոխարեն (ներկա էր միայն Վիոլետի դերակատարուհին), իսկ կոնցերտմայստերը... երգում էր բոլոր ձայներով:

Ինչ վերաբերում է Լայպցիգյան թատրոնում «Եվգենի Օնեգին» ներկայացմանը, ապա այստեղ ուրախացրեց գլխավոր դիրիժորի աշխատանքի հանդեպ յուրահատուկ մանրակրկիտությունն ու բարեխղճությունը: Սակայն տխրեցրեց այլ բան՝ բազմաթիվ կրճատումները: Այսպես, առաջին դրվագում համերգը սկսվում է հենց երկրորդ քառյակից, մի քանի մասում կրճատումներ են կատարվել դաստիարակի դերերգից, ինչպես նաև բաց են թողնված որոշ այլ «ոչ էական», սակայն մեզ համար թանկարժեք մանրուքներ: Մեծ կրճատում է կատարված եզրափակիչ տեսարանում: Մեր հարցին, թե ինչով է դա պայմանավորված, նա պատասխանեց, որ այդ երաժշտությունն արդեն եղել

է: Մեզ մնում էր միայն թոթովել ուսերը: Բացի այդ, թատրոնում տեղերի շարքը, ավելի ճիշտ մի շարք տեսարանների լուծումը, չէր կարող մեզ մոտ ժպիտ չառաջացնել:

Պ.Լիսիցյանի հետ ԳԴՀ կատարած հյուրախաղերն իմ մոտ հաճելի տպավորություններ թողեցին: Գերմանացիները բարեհամբյուր և աշխատասեր մարդիկ են, նրանք գնահատում, հասկանում և սիրում են արվեստը, սրտանց և ջերմորեն ընդունում են մեզ՝ սովետական արտիստներին:

Վ. Շպիսս թատրոնի կոնցերտմայստեր (համերգային նվագակցող)¹³⁸:

Գրախոսություններում, որոնք զետեղված են Լայպցիգի և Բեռլինի թերթերում, շատ բարձր գնահատական է տրված Պ.Լիսիցյանի կատարմանը: Այնպիսի խոսքերը, ինչպիսին են «հոյակապ երգիչ», «խորը հոգեբանորեն մխրճվում է կատարվող ստեղծագործությունների բովանդակության մեջ», գրեթե չեն դադարում երևալ գրախոսություններում: Մեկ այլ թերթում ասվում է, որ երգչի ձայնն ասոցացվում է ջերմ, փափուկ թավշի հետ, նշվում է կատարման նուրբ և բազմակողմանի նրբագագությունը:

Լրագրության և հանդիսատեսների բարձր գնահատականին արժանացավ նաև թատրոնի կոնցերտմայստեր Վ.Շպիսսը: Նրա նվագակցությունը անվանում էին բարձր մասնագիտական և խանդավառ: Նշվում էր նաև դաշնակահարի, երգչին ճիշտ նվագակցելու ունակությունը:

Պավել Լիսիցյանը վավերագրական ֆիլմերում: Քառյակ, 1974թ., հեռուստ./ֆիլմ «Երևան» ստուդիա, 27րոպե. (760մ.), գունավոր: Սցենարի հեղ. և ռեժ.՝ Ռ. Սարգսյան, օպերատոր՝ Օ.Բաղդասարյան: [Ֆիլմ-համերգ հանրահայտ հայ երգչի մասնակցությամբ, ով երկար տարիներ եղել է Մեծ թատրոնի մենակատարը]:

Պավել Լիսիցյան. 1974թ., հեռուստ./ֆիլմ «Երևան» ստուդիա 54 րոպե: (1500մ), գունավոր: Սցենարի հեղ. և ռեժ.՝ Ռ. Սարգսյան, օպերատոր՝ Լ. Պողոսյան [Ֆիլմ-համերգ Լիսիցյանների ընտանիքի մասնակցությամբ]:

Լիսիցյանների ֆիլհարմոնիան: 1985 թ.: «Հայֆիլմ» 20 րոպե. (541մ), բ / կ: Սցենարի հեղինակ՝ Ա. Գասպարյան, ռեժ. Պ. Մալայան, օպերատոր, ձայնային օպերատոր Լ. Կարապետյան, ռեժ. Աբրահամյանը, դիրիժոր՝ Ա. Աբրահամյան [ԽՍՀՄ ժողովրդական

¹³⁸ Նույն տեղում:

արտիստ՝ Պավել Լիսիցյանի և նրա երաժշտական ընտանիքի մասին¹³⁹]:

Ստեղծագործությունները: Պ.Լիսիցյանը Ա.Երոխինի հետ համատեղ մշակել են երաժշտության հավաքածու. XIX դարի իտալական կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունները: Ջ.Ռոսինի, Գ.Դոնիցետտի, Վ.Բելինի: Բարձր ձայնի և դաշնամուրի համար: / Ա.Երոխին և Պ. Լիսիցյան, Մոսկվա, Երաժշտություն, 1971թ.

Պավել Լիսիցյանի հեռուստատեսային ձայնագրությունները նրա ստեղծագործական ուղու մասին՝

Պավել Լիսիցյան արիաներ՝ («Ներոն» Ա.Ռուբինշտեյն, «Ջյունանուշիկ»), ռոմանսներ՝ (Չայկովսկի, Ռախմանինով), երգեր (Ա.Դոլուխանյան, Ս.Կարդիլո), աշխարհի ժողովուրդների ժողովրդական երգեր /Նիկոլայ Կարավկով (դաշնամուր), նվագախումբ / ԽՍՀՄ Հեռուստատեսություն 1952 - 1961 թթ.

Պավել Լիսիցյան, արիաներ և զուգերգեր, Շ.Գունոյի «Ֆաուստ», Պ.Չայկովսկու «Մազեպա», Ռուբինշտեյնի «Ներոն», Ջ.Վերդի «Տրավիատան» և «Աիդա» (երգում է Ն.Սոկոլովան, նկարահանվել է Ռուզաննա Լիսիցյանը), «Պայացներ «Ռ. Լեոնկավալո / ԽՍՀՄ Հեռուստատեսություն 1974 թ.

Իրինա Մալեննիկովա. Սերգեյ Լեմեշև, Պավել Լիսիցյան - Videonasledie 1953-1969 (հեռուստատեսային և համերգային տեսանյութեր):

Ռուսական օպերան Մեծ թատրոնում (Vintage տարի). Արիաներ և տեսարաններ Մ.Գլինկայի «Իվան Սուսանին» օպերայից (Ն.Գուսելնիկովա, Մ. Միխայլովի, Մ.Ռեյզեն), Մ.Գլինկայի «Ռուսլան և Լյուդմիլա» (Ա. Կրիվչենյա), Ա.Դարգոմիստով «Ջրահարսը», (Ա. Կրիվչենյա), Ն. Ռիմսկի-Կորսակովի «Մադկո», (Ֆ.Շալյապին), Մ.Սուսորգսկու «Բորիս Գոդունով» (Ա.Պիրոգով, Ի.Պետրով, Ա.Օգնիվցև, Ի.Կոզլովսկի, Ա.Սոկոլով, Ե.Օբրազցովա) և «Խովանշինա», (Ի.Արխիպովա, Վ.Պյավկո), Պ.Չայկովսկու «Հոդաթափեր» (Գ.Բոլշակով), «Մազեպա» (Լիսիցյան), «Եվգենի Օնեգին», (Ս.Լեմեշև, Ի.Կոզլովսկի, Պ.Նորցով, Մ.Ռեյզեն), «Պիկովայա դամա» (Գալինա Վիշնևսկայա, Լ.Մալեննիկով, Ս.Պրեոբրաժենսկայա, Ֆ.Պետրով, Ս.Լեմեշև, Գ.Բոլշակով) / Vai DVD 4257 The Great Singers of Russia Volume 1: From Chaliapin to Reizen/:

Պ.Լիսիցյանի ձայնը գեղարվեստական ֆիլմերում: «1963-ին, Պ.Ի.Չայկովսկու

¹³⁹ Պ. Լիսիցյանի վավերագրական ֆիլմերի վերաբերյալ տ՛ես ինտերնետային հղում՝ http://ru.hayazg.info/%D0%9B%D0%B8%D1%81%D0%B8%D1%86%D0%B8%D0%B0%D0%BD_

«Իռլանտա» օպերայի հիման վրա նկարահանվել է գեղարվեստական ֆիլմ-օպերա: Ֆիլմը նկարահանվել է Ռիգայում, ռեժիսոր և սցենարիստ Վլ.Գորիկերի կողմից: Արքայազն Ռոբերտի դերակատար Ալ.Բեյլասկու ձայնի փոխարեն հնչում է Պ.Լիսիցյանի հիանալի կատարումը, ԽՍՀՄ Մեծ թատրոնի նվագախմբի և երգչախմբի ուղեկցությամբ, դիրիժոր՝ Բ. Խայկին»¹⁴⁰:

Պավել Լիսիցյանի կամերային երգեցողության երգացանկը

Ա.Ալեքսանդրով՝ «Люблю тебя», «Три красавицы».

Ա.Արենսկի՝ «Послушай, быть может».

Մ.Բալակիրև՝ «Введи меня, о ночь, тайком», «Приди ко мне».

Ա.Բորոդին՝ ռոմանսներ. «Для берегов отчины дальней», «Песня темного леса», «Фальшивая нота».

Ա.Գլազունով՝ ռոմանսներ. «Вакхическая песня» (խոսք՝ Պուշկինի), «Восточный романс» (խոսք՝ Պուշկինի).

Մ.Գլինկա՝ «В крови горит огонь желанья» (խոսք՝ Պուշկինի), «Мери» (խոսք՝ Պուշկինի), «Ночной зефир струит эфир» (խոսք՝ Պուշկինի), «Ночной смотр» (խոսք՝ Ժուկովսկու), «Сомнение» (խոսք՝ Շուկոլնիկի), «Не искушай меня без нужды» (խոսք՝ Բարատինսկու):

Ռ.Գլիեր՝ «Восточная песня»

Գ.Գոթ՝ «В Венеции» (սերենադ)

Ա.Դարզումիժսկի՝ «Влюблен я дева-красота», «В крови горит огонь желанья» (խոսք՝ Պուշկինի), «Мне грустно» (խոսք՝ Լերմոնտովի), «Чаруй меня, чаруй».

Ա.Դոլուխանյան՝ «Жив я доколе», «И мы в то время будем жить».

Ա.Ժիվոտով՝ «Моя милая, моя душечка», «Не пробуждай», «О, Пошади», «Я Вас люблю».

Ն.Լոդիժենսկի՝ «Пронеслись мимолетные грезы».

Դ.Շարալևսկի՝ «Бог Купидон дремал в тиши лесной», «Когда на суд без молвных, тайных дум», «Ты музыка».

¹⁴⁰Պ. Լիսիցյանի գեղարվեստական ֆիլմերի վերաբերյալ տե՛ս ինտերնետային հղում <http://www.kino-teatr.ru/kino/movie/sov/2728/annot/>

Բ.Վելլ՝ Սերենա՞ «Слеза мой взор туманит».

Ն.Սակարովա՝ «Огонек», «Другу».

Ա.Սալով՝ «Моя девушка».

Մ.Միլման՝ «Где тот парень», «Прощание», «Жена и клинок».

Ն.Սյակովսկի՝ ռուսներ. «Русский ветер», «Эльбрус и самолет», «Взглянув на карточку».

Մ.Մուսրգուկի՝ ռուսներ. «Забытый», «Козел», տրեպակը «Песни и пляски смерти» շարքից:

Դ.Շոստակովիչ՝ ռուսներ. «День встречи», «День признания», «День обид», «День радости», «День воспоминаний», «Наша песня».

Պ.Չայկովսկի՝ ռուսներ. «Благословляю вас, леса», «Зачем?», «Как над горячею золой», «Корольки», «Мы сидели с тобой», «Нет, только тот, кто знал», «Ни слова, о друг мой», «Ночи безумные», «Ночь» («Меркнет слабый свет свечи»), «Ночь» («Отчего я люблю тебя»), «О, если б ты могла», «О, если б знали вы», «Подвиг», «Пойми хоть раз», «Примиренье», «Пускай зима», «Растворил я окно», «Серенада» («О дитя, под окошком твоим»), «Серенада Дон Жуана», «Слеза дрожит», «Смерть», «Снова, как прежде, один», «Средь мрачных дней», «Средь шумного бала», «Страшная минута», «Уж гасли в комнатах огни», «Хотел бы в единое слово»¹⁴¹:

Ն.Ռիմսկի-Կորսակով՝ «Гонец», «Дробится и плещет, и брезжет волна» “У моря” փոխ շարքից, «На холмах Грузии», «Не ветер, вся с высоты», «О чем в тиши ночной», «Октава».

Ա.Ռուբինշտեյն՝ ռուսներ. «С кинь чадру», «Клубится волною ...», «Над морем солнце блещет», «Как увижу твои ножки я», «Как солнце небесам», «Тому кто хочет жить легко», «Нац по одной дороге», «Не распутившийся цветок», «Не будь сурова».

Վ.Վլասով՝ «Фонтану Бахчисарайского дворца»

Մ.Ռախմանինով՝ «Апрель! Вешний праздничный день», «В моей душе», «В молчаньи ночи тайной», «Весенние воды», «Всё отнял у меня», «Вчера мы встретились», «Дитя! Как цветок ты прекрасна», «Есть много звуков», «Здесь хорошо», «Как мне больно»,

¹⁴¹ Երգացանկի տեղեկությունները վերցված է Մշակույթի և խաղաղության նախարարության Հանրապետական Երաժշտագիտական Գրադարանից (հասցե՝ Տիգրան Մեծ 53):

«Какое счастье», «На смерть чижики», «Ночь», «Ночь печальна», «Ночью в саду у меня», «О нет, молю, не уходи», «Она, как полдень, хороша», «Они отвечали», «Отрывок из А. Мюссе» [Что так усиленно сердце], «Проходит всё», «Сирень», «Сон», «У врат обители святой», «У моего окна», «Христос воскрес», «Эти летние ночи», «Я был у ней», «Я жду тебя», «Я не пророк», «Я опять одинок».

2.3. «Պավել Լիսիցյանը՝ մանկավարժ»

Առհասարակ, յուրաքանչյուր պետականության կայացման և զարգացման հիմքը կրթվածությունն է: Հզոր են այն պետությունները, որոնք ունեն աշխարհին հայտնի և ճանաչելի կրթօջախներ: Հետևաբար, սերունդներ կրթելու և դաստիարակելու մեծագույն պատվին, գուր չէ, որ արժանանում են մանկավարժները:

Մանկավարժի յուրօրինակ և բացառիկ էությունն իր առանձնահատուկ խառնվածքով դրված էր Պավել Լիսիցյան անհատականության մեջ:

Հաճախ մարդու վարքագիծը, վառ անհատականությունն օգտակար և ուսանելի են դառնում սերունդների համար: Խորհրդային Միության վոկալ - կատարողական արվեստի պատմության մեջ յուրօրինակ էջ բացած Պ.Լիսիցյանի մասին նրա սերնդակիցները, աշխարհահռչակ երաժիշտներն ու գործընկերները մի առանձնահատուկ հարգանքի ու գնահատանքի խոսքերով են իրենց հիացմունքն արտահայտել գրքերի, ամսագրերի և պարբերականների էջերում: Շատերն են ցանկացել երաժշտական արվեստի ականավոր գործիչների մասին գրքեր ստեղծել, և ահա Պ.Լիսիցյանի լավագույն բարեկամ և սան Սերգեյ Յակովենկոն պարտքի մեծ զգացումով իրականություն դարձրեց Պավել Լիսիցյանի մասին գրելու մտահղացումը: Խոսելով Լիսիցյանի կուտակած ներքին հարստության մասին, նա ասել է. «Ինչպիսի օբյեկտիվ փաստեր են հաստատում նրա սեփական վոկալ դպրոցի արժանիքները, իրական պրոֆեսիոնալիզմը, ուսուցանելու իրավունքը: Մասնավորապես, ժողովրդական արտիստներ ժամանակին, Ջուրաբ Անջափարիձեն, հետագայում՝ Ալեքսանդր Վորոշիլոն, ձգտում են տրամադրվել, ներկայացումից առաջ տարվել երգավարժությամբ, իսկ այնուհետև վերլուծել և բաց թողած սխալներն ուղղել միայն Պավել Լիսիցյանի

ղեկավարությամբ»¹⁴²: Ինչպես նկատում է Յակովենկոն. «Դա արդեն վկայում է նրա՝ իբրև երգչի և մանկավարժի իսկապես բարձր բանիմացության մասին»¹⁴³:

Յակովենկոն իր գրքում հիշատակում է նաև նրա մանկավարժական հմտությունների և ունեցած հայացքների մասին. «Տիրապետելով մասնագիտական ուժեղ դպրոցի և ունենալով իր ընկերներին ու գործընկերներին որակյալ վոկալ օգնություն ցույց տալու բազմամյա բարեհաջող փորձ, Լիսիցյանը, այնուամենայնիվ, որոշում կայացնելով՝ թողնել օպերային բեմը, երագում էր լրացնել մանկավարժական իր գիտելիքների պահուստը և համակարգել դրանք: Այդ նպատակով նա, անմիջապես բեկանտոյի հայրենիքում, չորս ամիս ուսումնասիրում էր իտալացի գործընկերների փորձը: Ու թե՛ այդ ժամանակվանից արդեն քսանհինգ տարի էր անցել, սակայն այդ երկրում ոչ ուսուցման մեթոդիկայում, ոչ գնահատականների չափանիշներում, ոչ երգիչների դաստիարակության կազմակերպական կառուցվածքում սկզբունքային փոփոխություններ տեղի չէին ունեցել»¹⁴⁴:

Չորս ամիսների ընթացքում Լիսիցյանը ներկա գտնվեց ավելի քան 60 մանկավարժների պարապմունքներին: Նրա վրա մեծ տպավորություն է թողել Միլանի կոնսերվատորիայի պրոֆեսոր, նախկինում հրաշալի երգչուհի, 23 թատերաշրջան «Լա Սկալա» բեմում երգած Մարիա Կարբոնեի դասարանը:

«Իտալիայում անցկացրած չորս ամիսների ընդացքում հնարավորություն ունեցա անձամբ ու մոտիկից ծանոթանալու երիտասարդ երգիչների պատրաստման մեթոդներին, ներկա եղա Վենետիկի, Հռոմի, Նեապոլի և Միլանի կոնսերվատորիաների պարապմունքներին: Իտալական վոկալի դասավանդման փորձը շատ ուսանելի էր, իսկ նման այցելությունները ամրապնդում են մեր երկրների կուլտուրական կապերը, նպաստում են մեր ժողովուրդների փոխըմբռնմանն ու բարեկամական կապերի մերձեցմանը»¹⁴⁵:

«Ոգեշնչված իտալական դարբնոցի առանձնահատուկ մեթոդիկայի հմտություններով, Պավել Գերասիմովիչն առանձնացնում էր այն կարևոր հանգամանքը, որ ուսանողը երգի ազատ, գեղեցիկ, կլոր, թռչող հնչյունով առանց՝ դեմքի, ստոծանու,

¹⁴² Յակովենկո Ս., Պավել Լիսիցյան, էջ 115:

¹⁴³ Նույն տեղում, էջ 115:

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 119:

¹⁴⁵ Գասպարյան Ա., Քառորդ դար Մեծ թատրոնում, «Մովետական Հայաստան», 15 հունվարի, 1966:

ամբողջ մարմնի լարվածության, ճիշտ ձևավորելով մոտիկ և վառ հնչողությանն օժանդակող ձայնավոր ու բաղաձայն հնչյունները: Յուրաքանչյուր մանկավարժ բոլոր երգիչներից պահանջում է արտահայտչականություն, կանտիլենայի (մեղեդայնության) և ձայնի վարպետ տիրապետում՝ սկսած կոլորատուրային սոպրանոյից մինչև բաս»¹⁴⁶:

Էական գնահատական տալով Լիսիցյանի մասնագիտական փորձառությանը, Յակովենկոն մանտնանշել է նրա մանկավարժական փնտրտուքների ուղղվածությունը, նրա պահանջների էությունը և վոկալ-կատարողական գաղափարները: «Վարպետի յուրաքանչյուր դասի ժամանակ ի հայտ էին գալիս ինչպես նրա բարձր երաժշտական էրուդիցիան, գեղարվեստական նուրբ ճաշակը, այնպես էլ վոկալի բնույթի մանրամասն գիտելիքները, երգչական գործունեության առանձնահատկությունները:

Բնական է, որ ստեղծագործության վրա աշխատելու պրոցեսում հիմնական ուշադրությունը դարձվում էր ժանրի, ոճի, դրամատուրգիայի, երաժշտության զգացմունքային հազեցվածության հարցերի վրա, և տեխնիկական «բանալին»՝ տեմբրի բնույթը, վոկալ գույներն ընտրվում էին երաժշտական խնդիրներին խիստ համապատասխան»¹⁴⁷:

Բացառիկ գիտելիքներով հարուստ, հիանալի ուսուցիչ, նվիրյալ մանկավարժ-խորհրդատու և յուրահատուկ կարողությունների տեր մի անձնավորություն: Ահա այսպիսին է եղել Պավել Լիսիցյանը հանճարեղ արտիստների և ընկերների հուշերում:

«Նա ուներ նաև մեծ մանկավարժական ձիրք: Բազում տարիներ նա աշխատել է Բեռլինի կոնսերվատորիայում որպես պրոֆեսոր, որտեղ մինչև հիմա էլ պահում են նրա բարի համբավը: Այստեղ նա դաստիարակել է բազմաթիվ հանրահայտ երգիչների, ովքեր հաճախ միջազգային մրցանակաբաշխությունների դափնեկիրներ էին դառնում: Երկրով բազմաթիվ շրջագայությունների ժամանակ Պավել Գերասիմովիչը գտնում էր լավ ձայն ունեցող տաղանդավոր երիտասարդների, բերում էր նրանց Մոսկվա և դասավորում ուսումնարաններում կամ կոնսերվատորիաներում: Նա սիրում էր հետևել նրանց աճին, աջակցել, որպեսզի ոտքի կանգնեն: Նա անձամբ պարապում էր նրանց հետ, ամեն կերպ աջակցում, երբեմն անգամ ժամանակավորապես բնակեցնում իր մոտ, մինչև հանրակացարանի հետ կապված հարցերը լուծվեին: Անցնում էին տարիներ, և թերի

¹⁴⁶ Յակովենկո Մ., Պավել Լիսիցյան, էջ 121:

¹⁴⁷ Նույն տեղում, էջ 122-123:

կրթված պատանին վերածվում էր երիտասարդ հեռանկարային երգչի»¹⁴⁸:

Միլանում Մեծ թատրոնի շրջագայություններից հետո, ժամանակակից վոկալ մանկավարժությանը ծանոթանալու նպատակով 1965 թվականին Դ.Մայդանսկին գործուղվում է Իտալիա: Խմբում էին Վ.Միրաքյանը՝ Երևանից, Մ.Մագոմանը՝ Բաքվից, Վ.Ասլանտովը՝ Լենինգրադից, Է.Կրումը՝ Տալլինից: «Հոռում, Միլանում, Նեապոլում, Վենետիկում ես լսեցի վոկալի առավել քան 60 մանկավարժների կամ ինչպես այնտեղ են նրանց անվանում՝ երգեցողության «մաեստրոների»: Այս ճանապարհորդությունը բավական օգտակար և հետաքրքիր նշանակություն ուներ:

Թատերական արվեստի ու երաժշտության հանդեպ ունեցած մեծ սերը Պ.Գ.Լիսիցյանը կարողացավ փոխանցել նաև իր երեխաներին»¹⁴⁹:

Լիսիցյանը միշտ շրջապատված էր աշակերտներով: Բորիս Շտոկոլովը կարծում է, որ շնորհիվ վարպետի կոնսուլտացիաների, նա ձեռք բերեց վոկալային ազատություն և պրոֆեսիոնալիզմ: «Պավել Գերասիմովիչի երեխաները՝ երկու աղջիկներն ու երկու տղաները, նույնպես հանդես էին գալիս բեմում: Նրանց կարծիքով իրենց հոր դերը՝ դաստիարակման և մասնագիտական հարցում հսկայական է եղել»¹⁵⁰:

Պ.Լիսիցյանը բազմաթիվ աշակերտներ է ունեցել, քանի որ մինչև վերջին օրը նա աշխատում էր և՛ ճապոնացիների և՛ կորեացիների հետ... իսկ երբ Վայմարում էր, դասավանդում էր անգամ գերմանացիների:

Ստորև ներկայացնում ենք հարցազրույցը Կարինա Հախնազարովայի հետ: «Դե, իհարկե, նշանավոր մարդկանցից ես կուզենայի առանձնացնել Սարգիս Գույումջյանին, ով վաղաժամ մահացավ, հրաշալի տենոր Խաչատուր Պիլիկյանին, այնուհետև Բորիս Շտոկոլովին, Ստեֆան Սպիվակին, Ռաֆայել Հակոբյանցին, Վահան Միրաքյանին, Դմիտրի Խվոռոստովսկուն և իհարկե, Սերգեյ Յակովենկոյին, ով մինչև վերջ մնաց նրա աշակերտը:

Ի՞նչ ձայնի ռեժիմ էր պահպանում

Ինձ թվում է դա շատ մասնագիտական հարց է: Ես դժվարանում եմ պատասխանել... Համենայն դեպս նրա համար վերջին տարիներին ամենակարևորը՝

¹⁴⁸ **Карпетян А.**, Онегин, играющий в нарды, “Ноев Ковчег” газета, Ереван, 2006, стр. 6.

¹⁴⁹ **Майданский Д.** “Кавказская здравница”, Кисловодск, 1970, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹⁵⁰ **Яковенко С.** Парадоксы Мастера, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

քնելն էր: Իսկ նրա կինը՝ Դագմարա Ալեքսանդրովնան խիստ հետևում էր, որպեսզի Պավել Լիսիցյանը գերհոգնածություն չունենա:

Ինչու՞ մեծ վարպետը չդասավանդեց իր աղջիկներին

Ինձ թվում է, բայց սա իմ խիստ սուբյեկտիվ կարծիքն է, ինչպես ցանկացած մանկավարժ, նա ևս կարծում էր, որ նրանք իրենց կրթությունը պետք է ստանան ինքնուրույն, որ նրանց պետք է դասավանդեն իրենց անձնական մանկավարժները: Եվ միայն դրանից հետո, որոշակի ժամանակ անց, նա իր խորհուրդներն էր տալիս: Ահա վերջերս նրանք հարցազրույց էին տալիս Սաթի Սպիվակովային և՛ Ռուզիկը, և՛ Կարինան ասել են, որ ոչ Պավել Լիսիցյանը, ոչ Ջառա Դոլուխանյանը, երբեք չեն ձևափոխել այն, ինչ նրանց տվել են մանկավարժները: Աղջիկներն էլ ինձ միշտ ասում էին, որ իրենց հայրը երբեք չէր խառնվում իրենց գործերին»¹⁵¹:

Պ.Լիսիցյանը մերձավորին գնահատող, հարգող և սիրող անձնավորություն էր, որի վառ ապացույցն էլ հանդիսանում է այն, որ նա անգամ իր ուսանողներին հյուրընկալել է իր հարկի տակ և ֆինանսապես օժանդակել: Անշուշտ այս ամենը վկայում է Պ.Լիսիցյան նվիրյալ մանկավարժի, մեծ հոգու տեր մարդասիրական կերպարի մասին:

Ի դեպ, որպես վկայություն այս ամենն ընդգրկված էր Պավել Լիսիցյանի զարմուհու՝ Կարինե Հախնազարովայի մոտ գտնված նամակում, որը նա մասունքի պես երկար տարիներ ի վեր պահել ու պահպանել է: Ջորջինակ՝ «Իմ սիրելի, թանկագին քույրիկ, վաղուց քեզ նամակներ չէի գրում և սահմանափակվում էի զանգերով: Սպրիլի 10-ին իմ աշակերտներից երկուսը՝ Հայկը և Տիգրանը, գալիս են Երևան և ես նրանց խնդրել եմ քեզ փոքրիկ կապոց բերեն՝ 1000 ռուբլի անձնական ծախսերի համար: Այս երկու եղբայրները հրաշալի ձայն ունեն և նրանք Հայաստանից ստանում են իմ անվան կրթաթոշակ՝ 200 ռուբլի: Նրանք սովորում են Մոսկվայում, պրոֆեսոր Արթուր Էյզենի դասարանում, իսկ ես հետևում եմ նրանց զարգացմանը: Սա հոյակապ ընտանիք է, և ես շատ ուրախ եմ, որ կարող եմ նրանց օգնել»¹⁵²:

¹⁵¹ Հախնազարովա Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհու) հետ ունեցած անձնական գրույցից:

¹⁵² Հախնազարովա Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհու՝ Կարինա Հախնազարովայի), անձնական արխիվից, անտիպ:

Երախտագիտության իրական զգացումը հասու է միայն տաղանդներին, Ռեյներ Գոլդբերգը չէր կարող անմասն մնալ մեծ վարպետի հանդեպ ունեցած մեծագույն հարգանքից ու գնահատանքից.

Ավարտելով իր փայլուն արտիստական կարիերան Պետական ակադեմիական Մեծ թատրոնում, Պ.Լիսիցյանն ավելի քան 30 տարի օպերային և համերգային կատարումների իր փորձը հաղորդում էր երիտասարդությանը՝ հանդիսանալով Մոսկովյան պետական ակադեմիական ֆիլհարմոնիայի, Մեծ թատրոնի վոկալ խորհրդատու, վարպետության դասեր էր տալիս աշխարհի տարբեր երկրներում: Քառորդ դարից ավելի պրոֆեսոր Պ.Լիսիցյանը խորհրդատու է եղել Վայմարի ամառային վարպետության դասընթացներում: Մշտապես խորհրդատվություն էր տալիս Դրեզդենի և այլ օպերային թատրոններում:

Ստեֆան Սպիվակը հետագայում կգրի. «Մաեստրոյի ղեկավարությամբ ես ազատվեցի վոկալ բազում արատներից և կարծես թևեր ձեռք բերեցի: Նա ինձ նախապատրաստեց Չայկովսկու անվան միջազգային մրցույթին, և ես դարձա երկրի առաջին դափնեկիր: Մոսկվայի պրոֆեսորը բարին կամեցող մարդ է, երբ նա իմացավ, որ սեմինարներից մեկի ժամանակ մասնակցություն կունենա Մարիո Դել Մոնակոն, ինձ խորհուրդ տվեց փորձառություն առնել իր մոտ: Երբ ես ընկա Մոնակոյի մոտ, պարզվեց որ իր դասարանը գերհագեցած է: Սակայն միևնույնն է՝ ես նրան փոխանցեցի կարծիք հայտնող նամակս, որը ինձ տվել էր Լիսիցյանը: Տեսնելով ստորագրությունը, հանրահայտ իտալական երգիչը հուզվեց և բղավեց՝ «Իհարկե, ես ժամանակ կգտնեմ պարապմունքների համար, չէ որ ձեզ խորհուրդ է տվել իմ ընկեր Պավելը, Մոսկվայի մեծագույն մաեստրոն»: Այնուհետև ես կրկին ամեն տարի գալիս էի Լիսիցյանի մոտ խորհրդատվության: Մի անգամ հարցազրույցի ժամանակ լրագրողը հարցրեց, թե արդյոք ինձ չի վնասում այն, որ մասնակցում եմ ոչ այնքան հայտնի՝ նորեկ երգիչների հետ նույն պարապմունքներին: Ես պատասխանեցի, որ երբ խոսքը նման վարպետի մոտ կատարելագործվելու մասին է՝ մենք բոլորս հավասար ենք, և մեր դափնիներն ու կոչումները, այս պարագայում, ոչ մի դեր չեն խաղում»¹⁵³:

Մաեստրոյի մասին, հատկապես իր գնահատականներում, առավել անկեղծ ու ջերմ տպավորություններով է կիսվում նաև Ե.Ռոխլինա – Սկիզինան: «Շնորհիվ

¹⁵³ Նույն տեղում:

Պ.Լիսիցյանի մանկավարժական տաղանդի, եւ լուծեցի շնչառական խնդիրները և հստակ տիրապետեցի բարձր ռեգիստրին: Երեք շաբաթ եւ պրոֆեսորի հետ փորձում և պարապում էի դերերգեր Բեթհովենի «Ֆիդելիո» և Վագների «Տանհոյզեր» օպերաներից և պարապմունքների վերջում այնպիսի ազատություն և հզորություն զգացի վերին նոտաներում, որոնց մասին անգամ չէի կարող երագել: Այդ պարապմունքների արդյունքում բացահայտվեցին իմ ձայնի նոր, հնում անհայտ հնարավորությունները, և եւ սկսեցի խոշորագույն թատրոններից հրավերներ ստանալ՝ Բայրեյտսկի, Մետրոպոլիտեն, Կովենտ-Գարդեն, երկար տարիներ համագործակցել եմ նաև Կարայանի հետ... Ինձ պրոֆեսոր Պավելն այնքան բան է տվել կյանքում, որ նրա մի դասի համար եւ կփոխանակեի լավագույն բեմում ամենահարգի ներկայացումը»¹⁵⁴:

Պրոֆեսիոնալների քառերգ II Ջելլիշես Տազեսբլատտ (26-27 հուլիսի 1980թ.)

«Վայմարյան սեմինարներում Լիսիցյանի պարապմունքներին խանդավառությամբ գնում են տարբեր օպերային թատրոնների փորձառու երգիչներ, ովքեր գիտեն թատերական աշխատանքի տարբեր դժվարություններ: Առաջին հայացքից, պարապմունքները կարող են թվալ միապաղաղ՝ վարժություններ, վարժություններ և կրկին վարժություններ: Սակայն վարպետի ստեղծագործական մեթոդը կարելի է հասկանալ, հետևելով, թե ինչպես է երիտասարդ երգիչների մոտ օր-օրի ընդարձակվում ձայնածավալը, ինչպես է հարթվում և ամրապնդվում ձայնը»¹⁵⁵:

«Մարդկային պարզ և մեծ հոգու տեր, մեծ տաղանդի տեր, մեծ ընկեր, մեծ մանկավարժ, մեծ քաղաքացի, մեծ հայ, մեր ազգի պարծանք՝ Պավել Լիսիցյան»¹⁵⁶: Վլադիլեն Բալյանի հիշողություններում այսպես է տպավորված օպերային երգարվեստում փառքի բազում դափնիներ նվաճած, աշխարհահռչակ և սիրված բարիտոն՝ Պավել Լիսիցյանը:

Եվ պատահական չէ, որ մեծ վարպետից իրենց ուսանողական մկրտությունն են ստացել, ճանաչված և մեծ ճանապարհ անցած օպերային երգարվեստի այնպիսի երախտավորներ ինչպիսիք են Սարգիս Գույումջյանը, Խաչատուր Պիլիկյանը, Ռաֆայել Հակոբյանը, Վահան Միրաքյանը, Սերգեյ Յակավենկոն և այլք:

Պավել Լիսիցյանի ընկերներն ու մտերիմները խոր ակնածանքով ու հիացմունքով

¹⁵⁴ ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹⁵⁵ Նույն տեղում:

¹⁵⁶ Վլադիլեն Բալյանի հետ ունեցած անձնական զրույցից:

են արտահայտվել իրենց սիրելի ընկերոջ մասին, մշտապես նուրբ գնահատականներ, մեծարանքի խոսքեր, որոնք էլ հասցեագրված են եղել մեծ վարպետին.

«Հիշում եմ,- պատմում է Վլադիլեն Բալյանը, Պավել Լիսիցյանի հերթական վոկալ դասընթացներից մեկի ժամանակ ներկա էր նաև ռուս հանրաճանաչ երգչուհիներից մեկը, ով դասի ավարտից հետո չթաքցնելով իր զգացմունքներն ու զարմանքը, ինձ խոստովանեց իր հիացմունքի մասին բացականչելով՝ «Ձեր Լիսիցյանը հանճար է, առավելապես մեծ մանկավարժ»¹⁵⁷:

Մինչև կյանքի վերջին ժամանակները Պ.Գ.Լիսիցյանը աշխատում էր վոկալի գծով մանկավարժ-խորհրդատու Մոսկովյան պետական ակադեմիական ֆիլիարմոնիայի Մեծ թատրոնում: Չնայած պատկառելի տարիքին, նա Իրինա Արխիպովայի ֆոնդի մանկավարժ-խորհրդատուն էր, ամեն օր պարապում էր երգիչների հետ, սեմինարներ էր դեկավարում, Ռուսաստանում և արտասահմանում բազմաթիվ վոկալային մրցույթներում որպես հանձնաժողովի անդամ էր հանդես գալիս:

Արտիստը բազմիցս է արժանացել տարբեր պարգևների՝ Աշխատանքային երկու շքանշան, «Ժողովուրդների բարեկամության» շքանշան և ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչում: Նա նաև արժանացել է «Կոստա դիվա» մրցանակին և ստացել «Օպերայի ասպետ» կոչմանը, իսկ Երաժշտության Ամերիկյան Ակադեմիան Պ.Լիսիցյանին անվանել է «XX դարի լավագույն բարիտոն»:

«Երգիչը պետք է երգի, սա է հանրությանը նրա նվիրումը: Չի կարելի տարվել միայն բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելությամբ, չի կարելի երկար ժամանակ պոկվել արվեստի հետաքրքրություններից, ծանրաբեռնվել անչափ հասարակական աշխատանքով, ինչպես երբեմն երիտասարդությունն է կատարում՝ ընկնելով ճանաչման ետևից: Տաղանդը լարված աշխատանք է պահանջում, միայն այդժամ այն կարող է արվեստ դառնալ»¹⁵⁸:

2.4. Պավել Լիսիցյանը՝ հասարակական գործիչ

«Հիանալի արվեստագետը կարող է լինել և հիանալի մարդ»¹⁵⁹:

Չափազանց հետաքրքիր է նշել, որ ստեղծագործական աշխատանքների հետ

¹⁵⁷ Վլադիլեն Բալյանի հետ ունեցած անձնական զրույցից:

¹⁵⁸ **Леонова К.** Неувядающее мастерство, “Советский артист” газета, 1981, Москва, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹⁵⁹ **Արագոն Լ.**, Աֆորիզմներ, իմաստուն մտքեր», Երևան, 2007, էջ 120:

միաժամանակ, Պ.Լիսիցյանը միշտ կարողացել է ակտիվորեն և ինքնանվիրումով զբաղվել նաև հասարակական գործունեությամբ, բազմիցս գրավելով ընտրական բարձր դիրքեր: Հասարակական ջիղը, ակտիվ եռանդը նրա երկրորդ բնավորությունն է: Իր հարուստ արտիստական փորձը նա հաջողությամբ հաղորդում էր երիտասարդ սերնդին, որովհետև մանկավարժական հմտությունների, վոկալ արվեստի զարգացման գործունեությանը նույնպես վերաբերվում էր գեղարվեստական բարձր պահանջկոտության դիրքերից:

Ելույթներ ռադիոյով, երկար և միաժամանակ հոգնեցուցիչ, բայց պատասխանատու ժամեր ձայնագրման ստուդիաներում, վոկալ բազմաթիվ մրցույթների՝ այդ թվում նաև միջազգային ժյուրիների անդամ, անվերջ հանդիպում - ելույթներ Խորհրդային բանակի մարտիկների, երիտասարդության, դպրոցականների առջև:

«Ուզում եմ նշել,- գրում է Կ.Լեոնովան, որ Պավել Գերասիմովիչը երբեք չէր սահմանափակում իր կյանքը նեղ մասնագիտական հետաքրքրություններով: Նա միշտ գտնվում էր մշակութային և հանրային կյանքի անցուղարձում: Մեծ թատրոնի աշխատակազմում նա մեծ հարգանք էր վայելում: Բազմաթիվ անգամներ ընտրվել է թատրոնի կուսկոմի անդամ, աշխատել է «Սովետական արտիստ» թերթի խմբագրությունում: Շատ մեծ ուշադրություն էր դարձնում Խորհրդային միության զինվորական ղեկավարների հետ մշտական հանդիպման աշխատանքներին: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Պավել Գերասիմի Լիսիցյանը ճակատային խմբերի անդամ էր և հանդես էր եկել առավել քան հինգ հարյուր համերգներով»¹⁶⁰:

«Կոմունիստ Պ. Ն. Լիսիցիանը հրաշալի ու հետաքրքիր կյանք ունի, հազեցած ստեղծագործական կատարելագործումներով, մեծ հասարակական գործունեությամբ: Նման մարդու կյանքով կարելի է հպարտանալ»¹⁶¹:

Աշխարհում գրեթե ամեն վայրկյան գնահատականներ են տրվում կատարված քայլերի կամ ձեռքբերումների համար: Սակայն անկեղծ ու մնայուն են միայն այն խոսքերը, որոնք արդարացված են և ծանրակշիռ դեր ունեն նաև ապագայի համար:

«Ներկայումս ռադիոյի ողջ կայաններով լսվում են ընդամենը ձայներ, որոնք

¹⁶⁰ **Леонова К.** Выдающийся мастер вокального искусства, “Советский артист”, Москва, 1981, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

¹⁶¹ **Орфенов А.** Павел Герасимович Лисициан, 18 ноябрь, 1981, Москва, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

ման են պայթյունի կամ առանց ձայնային տվյալների և երաժշտական լսողության հնչում են «նվնվան» կատարումներ, և այդ ամենից հետո հանկարծ լսում ես Պավել Լիսիցյանի ձայնը, դա նույնն է, ինչ անապատում գտնես ոչ միայն մաքուր, այլ Մուրբ ջրով աղբյուր: Եվ քանի դեռ Լիսիցյանը հնչում է ռադիոյով, նշանակում է, որ անհրաժեշտ է ապրել, նշանակում է, որ կարելի է ինչ-որ բանի հույս ունենալ այս ոչ պարզ կյանքում»¹⁶²:

Պավել Լիսիցյանի աճյունը հանգչում է Մոսկվայի հայկական գերեզմանատանը:

Պավել Լիսիցյանի կյանքը հնարավոր չէր պատկերացնել առանց այն գեղեցիկ, համեստ, միշտ համբերատար շնորհալի, կենսասեր ու ըմբոստ կնոջ, որը ինչ-որ ժամանակ գրավեց նշանավոր բարիտոնի սիրտը:

Յուրօրինակ անհատականություն և մտերիմների համար անվիճելի հեղինակություն Դագմարա Լիսիցյանը (Մակարյան) բոլոր հիմքերն ունի հպարտանալու իր երեխաների և ամուսնու ստեղծագործական հաջողություններով. «Ամուսնուս շնորհիվ ես երբեք ինձ չեմ զգացել միայն տանտիրուհի»¹⁶³, - խոստովանում է ինքը՝ տիկին Դագմարան: Եվ Պավելը, և երեխաները միշտ ինձ հետ քննարկել են իրենց մասնագիտական, ստեղծագործական պրոբլեմները: Իսկ ես նրանց առաջին ունկնդիրն ու քննադատն էի: Դե, ինչ խոսք, ես ամեն կերպ իմ արտիստներին նեցուկ էի կանգնում, ապահովում նրանց համար հոգեկան հավասարակշռություն և աշխատանքային նախատրամադրվածություն:

-Մայրիկը միշտ մեր ամենախիստ և ամենաազնիվ դատավորն է եղել,- պատմում է Կարինեն: Նույնիսկ հայրիկը, որը կատարյալ էր երգարվեստում, անպայման ամեն ինչում նրա հետ խորհրդակցում էր և սրտի դողով սպասում նրա գնահատականին: Մայրիկը մեզ կարող էր ասել. «Աղջիկներս, ձեզ մոտ այս սիրերգը չի ստացվում, պետք չէ այն երգել»: Ի դեպ, նրա գնահատականները վերաբերվում էին ոչ միայն վոկալին: Ռուզաննան սովորում էր տավիղ նվագել, մենք երկուսս՝ դաշնամուր, Ռուբիկը՝ թավջութակ: Տանը մայրիկի հետ պարապունքներից ավելի էինք վախենում, քան՝ ուսուցիչների հետ: Մեզ ընդհանրապես դաստիարակել են սիրո, բայց և խիստ

¹⁶² Черников О. “Большой театр”, газета, № 8, декабрь, 2001.

¹⁶³ «Կանայք հայոց» ամսագիր, 2002, №1, Երևան, էջ 48:

պայմաններում»¹⁶⁴:

Հետաքրքիր է, երբ մեծությունները դրսևորում են իրենց արտասովոր այնպիսի երևույթների մեջ, որոնք ընդգծում են նրանց ներքին խառնվածքն ու էությունը: Աշխարհահռչակ երգիչ Պ.Լիսիցյանի համար օրինաչափություն էր դարձել ամեն անգամ, երբ լինում էր ամառանոցում, ապա պարտադիր կերպով տուն վերադառնալիս բերում էր մի փունջ դաշտային, անուշաբույր ծաղիկներ, որը շատ էր սիրում իր տիկինը: Ի տարբերություն շատերի, ովքեր իրենց ավտոմեքենայում ունենում կամ փակցնում են խաչեր, աչքահուլունք, Տիրամոր պատկերով կախազարդեր՝ Պ.Լիսիցյանը նույնպես ուներ նախասիրություն: Սակայն այս ամենի փոխարեն իր մեքենայի դիմապակու հայելուն փակցրել էր փոքրիկ ճենապակյա ծաղկաման, ի դեպ՝ ջրով լի, որտեղ դրվում էին տիկնոջ՝ Դագմարա Ալեքսանդրովնայի համար հավաքած ծաղիկները»¹⁶⁵:

Ամսագրում կան մի քանի վրիպումներ տարեթվերի հետ կապված, գրված է,- «Դագմարա Ալեքսանդրի Լիսիցյանը» ծնվել է 1961թ.-ի մարտի 24-ին»¹⁶⁶: Այն ինչ պետք է լինի, «Դագմարա Ալեքսանդրի Լիսիցյանը ծնվել է 1916թ. մարտի 24-ին:

Տարիների անգնահատելի իր ձեռքբերումներն, որպես հարստություն, Պ.Լիսիցյանը կուտակել է բազմաթիվ պարգևների և կոչումների տեսքով:

Պավել Լիսիցյանի պարգևները և կոչումները՝ ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1939թ.), ԽՍՀՄ ժողովրդական արտիստ (1956թ.), Ստալինյան մրցանակի դափնեկիր (1945թ.), «Արիության համար» շքանշան (1941թ.), «Հանուն Կովկասի պաշտպանության» շքանշան (1941թ.), «Աշխատանքային Կարմիր Դրոշի» շքանշան (2), (1939 և 1951թթ.), «Արիության համար» շքանշան (1941թ.), Ժողովուրդների բարեկամության շքանշան (1976թ.), Հայերի և Ռուսաստանի միության I աստիճանի ոսկե խաչ (2002թ.), Շումանի անվան մրցանակի դափնեկիր (Յիվիկաու քաղաք, 1977թ.), Ռոբերտ Շումանի անվան դափնեկիր (1985թ.), Իրինա Արխիպովայի ֆոնդի ոսկե մեդալ (2002թ.):

¹⁶⁴ Նույն տեղում, էջ 48- 49:

¹⁶⁵ Հախնազարովա Կ. (Պ. Լիսիցյանի զարմուհու) հետ ունեցած անձնական զրույցից:

¹⁶⁶ «Կանայք հայոց» ամսագիր, 2002, №1, Երևան, էջ 49:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

➤ Գերազանց վոկալիստ, բարձրակարգ պրոֆեսիոնալ Պ.Լիսիցյանի ձայնը ճանշելի էր իր տեմբրի հազվագյուտ գեղեցկության, վոկալ կատարյալ տեխնիկայի, մաքուր ինտոնացիայի, հստակ ուղիղի, հյութեղ ու հազեցած հնչողության, հիանալի շնչառության, կատարողական կուլտուրայի շնորհիվ:

➤ Օժտված լինելով բնատուր փափուկ լիրիկական բարիտոնով, Լիսիցյանն իր ձայնը զարգացրեց մինչ կատարելության մակարդակի: Չայնի լայն դիապազոնը նրան հնարավորություն էր ընձեռում հաջողությամբ կատարել ինչպես բարձր բարիտոնային (Ռոբերտը՝ «Իոլանտայում», Վեդենեցյան հյուրը՝ «Սադկոյում» են), այնպես էլ ցածր բարիտոնային (Ամոնասարոն՝ «Աիդայում», Էսկամիլիոն՝ «Կարմենում», Մազեպան՝ «Մազեպայում» են) դերերգեր: Պ.Լիսիցյանը կատարում էր դրամատիկական բարիտոնի դերերգեր, ընդ որում այդ դերերգերը հնչում էին ձայնի լիրիկականության առանց որոշակի զիջումներով:

➤ Նրա կատարմամբ Ժերմոնը, Վալենտինն ու Ելեցկին դարձան վոկալ վարպետության էտալոններ:

➤ Պ.Լիսիցյանը bel canto-ի վարպետ էր: Նա հրաշալի երգեցողությամբ էր արտահայտում մարդկային զգացմունքները, կրքերը, էությունը: Դա էր նրա, որպես երգչի, բարձրագույն արժանիքը: Պ.Լիսիցյանն իր մարմնավորած հերոսների զգացմունքների անկեղծ և նուրբ արտահայտիչ էր: Նրա մոտ հատկապես լավ էին ստացվում անկեղծ, ազնվազարմ, բարուն հավատացող և անարդարության դեմ պայքարող կերպարների դերերգերը:

➤ Մեծ թատրոնում աշխատելու տարիներին Պ.Լիսիցյանը իր ձայնային մեծ դիսկոգրաֆի, հազվագյուտ թավջառ տեմբրի և բացառիկ արտիստիկալի շնորհիվ ստեղծեց իրարից տարբեր, բազմազան կերպարներ: Նա անգերազանցելի Ժերմոն էր՝ այդ դերում մրցակիցներ չունեցող, նրա կերտած կերպարն ապշեցնում էր իր զարգացման դինամիկայով:

➤ Կատարյալ էր Պ.Լիսիցյանի Էսկամիլիոն ինչպես վոկալ, այնպես էլ դերասանական տեսակետից:

➤ Լիսիցյանը կերտեց նոր Ամոնասարո. նա ընդգծեց իր հերոսի դատապարտվածությունը, ողբերգականությունը, պատվի և արժանապատվության բարձր զգացումը: Հանուն հայրենիքի, հանուն դստեր նա մարտնչում է հզոր Եգիպտոսի դեմ և գիտե, որ դատապարտված է, որ չի հաղթի, բայց՝ չի հանձնվում: Լիսիցյանի Ամոնասարոն և՛ ողբերգական է, և՛ զարմանալիորեն քնարական, միևնույն ժամանակ՝ վառ ու համոզիչ: Եվ դա այն դեպքում, որ օպերայում բարիտոնն արիաներ չունի, զբաղված է ընդամենը երկու պատկերում, ունի մի քանի արիոգային ֆրագներ և մեկ ծավալուն անսամբլ: Լիսիցյանը դարձավ Մեծ թատրոնի ամենանշանավոր Ամոնասարոն և այդ դերերգով ձեռք բերեց միջազգային ճանաչում (1960-ին Նյու-Յորքի «Մետրոպոլիտեն օպերայում» ներկայացումից հետո մեքենան, որի մեջ գտնվում էր Լիսիցյանը, երկրպագուները ձեռքերի վրա տարան մինչև հյուրանոց):

➤ Փայլուն օպերային երգիչը միաժամանակ կամերային երաժշտության նուրբ, խոհուն մեկնաբանը էր:

➤ Թեև յուրաքանչյուր արտիստի ստեղծագործական կյանքում լինում են վերելքներ և անկումներ, պակաս հաջողված ներկայացումներ և ելույթներ, սակայն Պ.Լիսիցյանի դեպքում չկան խամրած, թույլ, անհաջող կերպարներ:

➤ Պ.Լիսիցյանի հաջողության «գաղտնիքը» նրա նկատմամբ հանդիսատեսի մեծ սերն էր, որի «պատճառը» ոչ միայն նրա ձայնի անկրկնելի գեղեցկությունն էր, այլև այն հանգամանքը, որ Պ.Լիսիցյանը, լինելով Մեծ թատրոնի արտիստ, իր ողջ կյանքում ծառայեց թատրոնին՝ իր գործի հանդեպ միշտ ցուցաբերելով մեծ նվիրում, սեր և պատասխանատվության բարձր զգացում:

➤ Արտիստական փայլուն կարիերան Մեծ թատրոնում ավարտելուց հետո, Պ.Լիսիցյանը 30 տարի իր հարուստ փորձն է փոխանցել երիտասարդներին: Իր

«դպրոցում» նա չէր տարանջատում վոկալ պրոցեսի տեխնոլոգիական կողմը և ժանրային, ոճական ու գեղարվեստական հարցերը: Սա էր նրա գլխավոր գեղագիտական սկզբունքը, որով ղեկավարվելով 45 տարի՝ հանդես եկավ որպես երգիչ: Ուսանողի հետ քրտնաջան աշխատելով ամեն մի հնչյունի ու ֆրազի վրա և ձգտելով, որ դրանք երգվեն ազատ, գեղեցիկ ու հավասար, նա հասնում էր օպերային կամ կամերային ստեղծագործության ճկուն և թեթև կատարման՝ առավելագույնս բացահայտելով դրա երաժշտական էությունն ու ժանրային ուղղվածությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ասատրյան Ա.**, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ – 50, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2010, 395 էջ + 32 էջ նկար:
2. **Ասատրյան Ա.**, Տիգրան Չուխաճյանի երաժշտական թատրոնը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2011, 480 էջ:
3. **Ասատրյան Ա.**, «Արշակ Բ». հայոց օպերան, Երևան, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի հրատարակչություն, 2006, 268 էջ:
4. **Արագոն Լ.**, Աֆորիզմներ, իմաստուն մտքեր, Երևան, «Նոր Տպագրիչ» ՍՊԸ, 2007, 264 էջ:
5. Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկարային ծրագիր, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի արխիվ:
6. **Բաբայան Ա.**, Տիգրան Չուխաճյանը և նրա «Արշակ Երկրորդ» օպերան, Երևան, «Սովետական գրականություն», 1942, № 8, էջ 69:
7. Բավել Լիսիցյանի Յիշատակին, «Նոր Աշխարհ» թերթ, Աթենք, երկուշաբթի, 2 օգոստոսի, 2004, էջ 6:
8. ԳԱԹ, Թատերական բաժին, Ազդագիր №2553:
9. **ԳԱԹ**, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
10. **ԳԱԹ**, Տ.Չուխաճյանի ֆոնդ, №8, ձեռագիր 350 թերթ:
11. ԳԱԹ, Տ.Չուխաճյանի ֆոնդ № 11, ձեռագիր 34 թերթ, № 12, ձեռագիր 58 թերթ:

12. **Գասպարյան Ալ.**, Քառորդ դար Մեծ թատրոնում, «Սովետական Հայաստան», 15 հունվարի, 1966:
13. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Մեներգեցողության ֆակուլտետի Պետական քննական հանձնաժողովի արձանագրությունը, ԵՊԿ, Պավել Լիսիցյանի անձնական գործերի դիվան № 376 (անտիպ):
14. Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի քննական առարկաների և գնահատականների թերթիկը, ԵՊԿ, Պավել Լիսիցյանի անձնական գործերի դիվան № 376 (անտիպ):
15. **Էվոյան Վ.**, Փաստաթղթեր Լևոն Լիսիցյանի մասին, ԲՀԱ, 1972, թիվ 1, էջ 183-196:
16. Լիլիա Ստեփանյանի անձնական արխիվ:
17. **Լիսիցյան Ն.**, Նվիրված Պ.Լիսիցյանի հիշատակին, Լիլիա Ստեփանյանի անձնական արխիվ, անտիպ
18. «Լրաբեր» թերթ, 7 ապրիլի, 1960, Նյու-Յորք, էջ 3:
19. «Լրաբեր» թերթ, 5 ապրիլի, 1960, Նյու-Յորք, էջ 4:
20. **Խալաթյան Լ.**, Սարյանը և թատրոնը, Երևան, ՀԹԸ հրատ., 1960, 156 էջ, 10թ. նկ. :
21. **Խաչատրյան Հ.**, Մի հին գերդաստան // «Հայրենիքի ձայն», 5 փետրվարի, 1967:
22. «Կանայք հայոց» ամսագիր, 2002, №1, Երևան, էջ 48:
23. Կարինա Հախնազարովայի անձնական արխիվ:
24. «Կոմունիստ», 18 նոյեմբերի, 1945:
25. «Կոմունիստ», 16 դեկտեմբերի, 1945:
26. Մի ամբողջ օր Լիսիցյանի հետ, «Ավանգարդ», Երևան, 28 հոկտեմբերի, 2011, էջ 3:
27. **Յակովենկո Ս.**, Պավել Լիսիցյան, դասեր մի կյանքից, Երևան, «Ամրոց գրուպ», 2012, 152 էջ + 0,5 մամուլ ներդիր:
28. Պաել Լիսիցեանի խօսքը իր Ամերիկահայ Հայրենակիցներուն, «Լրաբեր», Նյու-Յորք, 1960, N 3, էջ 3:
29. Պ.Լիսիցյանի դիմումը Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան ավարտելու համար, ԵՊԿ, Պավել Լիսիցյանի անձնական գործերի դիվան № 376 (անտիպ):
30. **Պետրոսյան Մ.**, Պավել Լիսիցյան, Երևան, ՀԹԸ հրատ., 1973, 77 էջ:

31. **Պետրոսյան Մ.**, Պավել Լիսիցյան. Նվիրում՝ ծննդյան 100-ամյակին, Երևան, «Նուշիկյան» ասոցիացիա, 2011, 40 էջ:
32. **Վարդանյան Լ.**, Աստեղային փաստաթուղթ (Պ. Լիսիցյանի զարմուհի՝ Լիլիա Վարդանյանի անձնական արխիվից, անտիպ):
33. **Տայան Շ.**, Դեպքեր, դեմքեր, մտքեր, Երևան, «Հայաստան», 1973, 255 էջ:
34. **Տեր-Մինոնյան Մ.**, Պավել Լիսիցյան, Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 4, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1978, էջ 624:
35. **Акапянц Р.** “Голос Армении”, Ереван, 2011, 19 ноября, стр. 7.
36. **Анисимов А.** Павел Герасимович Лисициан, Москва, буклет, 1953, стр. 1.
37. **Бережков Б.** Неувядающий талант, “Красное знамя”, Томск, 8 ноября, 1970.
38. “Большой театр” газета, №8, Москва, 2001, стр. 4, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ), անտիպ:
39. Гастроли в ГДР, “Советский артист”, Москва, 1962, стр. 3, ԳԱԹ, Պավել Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
40. **Грошева Е.** Большой театр Союза СССР, Москва, “Музыка”, 1978, 396 стр.
41. **Забиякин Е.** Декада русской культуры в Таджикистане. “Таджикистан”, 14 апреля, 1967, стр. 3.
42. **Зарубин В.** Лисициан Павел Герасимович, Музыкальная энциклопедия, том 3, Москва, “Советская энциклопедия”, 1976, стр. 283-284:
43. **Карпетян А.**, Онегин, играющий в нарды, “Ноев Ковчег газета”, Ереван, 2006, стр. 6.
44. **Леонова К.** Выдающийся мастер вокального искусства, “Советский артист”, Москва, 1981, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
45. **Леонова К.** Неувядающее мастерство, “Советский артист” газета, 1981, Москва, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
46. **Либсон В., Кузнецова А.** Большой театр СССР, Москва, “Стройиздат”, 1982, 148 стр.
47. **Лисициан Г.**, Чужая роль, Три стихотворения папе, Москва, 2005, 63 стр.
48. **Лисициан Р.**, Воспоминание, из архива Степанян Л., անտիպ:
49. **Майданский Д.** “Кавказская здравница”, Кисловодск, 1970, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):

50. **Орфенов А.** Павел Герасимович Лисициан, 18 ноябрь, 1981, Москва, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
51. Павел Лисициан, Москва, Благотворительный фонд имени Павла Лисициана, 2008, 52 стр.
52. **Парамонов А.В.** Дмитрий Аркадьевич Налбандян, Москва, “Искусство”, 1976, 206 с. с ил.
53. **Письмо Чайковского Наталье Ф.** фон Мекк, N 297, 27 сентября, 1885 год. www.tchaikov.ru/mekk 1885.html
54. **Ружьян М.**, Дважды рожденная (К 100-летию армянской оперы), “Комсомолец”, 1971, 13 июня.
55. **Сатир Т.** Концерт семьи певцов, “Вечерний Ленинград”, 16 февраля, 1972, стр. 3.
56. Сегодня поет Лисициан, “Вечерний Свердловск”, 22 февраля, 1962.
57. **Соколов Ю.** “Известия” газета, Москва, 1998, ԳԱԹ, Պալելի Լիսիցյանի ֆոնդ (անմշակ), անտիպ:
58. “Советский артист” газета, 1958, Москва, ԳԱԹ, Պալելի Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
59. “Труд” газета, Москва, 2001, ст. 1, ԳԱԹ, Պալելի Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
60. **Черников О.** “Большой театр”, газета, № 8, декабрь, 2001.
61. **Яковенко С.Б.** Павел Герасимович Лисициан. Уроки одной жизни, Москва, “Музыка”, 1989, 143 стр.
62. **Яковенко С.Б.** Павел Герасимович Лисициан в искусстве и жизни. Факты, диалоги, размышления, Москва, Союз армян России, «Реалии», 2001, 144 стр. + 8 стр. илл.
63. **Яковлев М.** Мастера Большого театра, народные артисты СССР, Москва, « Советский композитор», 1976, 695 стр.
64. **Яковенко С.** Парадоксы Мастера, ԳԱԹ, Պ.Լիսիցյանի ֆոնդ (անմշակ):
65. http://ru.hayazg.info/Лисициан_Карина_Павловна
66. <http://www.kino-teatr.ru/kino/acter/m/sov/21180/bio/>
67. http://ru.hayazg.info/Лисициан_Рубен_Павлович
68. <http://ru.hayazg.info/Лисициан>
69. <http://www.noev-kovcheg.ru/mag/2013-10/3859.html>
70. <http://ru.hayazg.info/%D0%9B%D0%B8%D1%81%D0%B8%D1%86%D>

71. <http://ru.hayazg.info/%D0%9B%D0%B8%D1%81%D0%B8%D1%86%D0%B8%D0%B0%D0%BD>
72. <http://www.kino-teatr.ru/kino/movie/sov/2728/annot>

ՀԱՎԵԼՎԱԾ

Նկար 1 Պ. Լիսիցյանի դիմումը, Երևանի Կոմիտասի անվան պետ. կոնսերվատորիան ավարտելու համար, ԵՊԿԿ, «Պավել Լիսիցյանի անձնական գործերի» դիվան № 376 (անտիպ):

В Комитет высшего и среднего специального
образования при Совете Министров Ари ССР
Заместителю председателю товарищу
Манасеряну Левону Петровичу
от Народного артиста Союза ССР
Солиста Большого театра СССР
Алисузиана Гюгоса Карачетовича

Заявление

Ввиду того, что после первой декады Армянского
искусства в Москве (1939г) я включился в интенсивную
творческую-исполнительскую и музыкально-общес-
твенную деятельность, мне не удалось поступить
в консерваторию и получить высшее музыкаль-
ное образование. Высшей музыкальной школой
для меня оказалась долгие годы (30 летняя)
практика оперной и камерного пения.

Прошу разрешить мне сдать экзамены
экстерном за полный курс факультета
Сольного пения Ереванской консерватории
имени Комитаса для получения диплома
о высшем музыкальном образовании.

28. XI 60г.

Алисузиан

1. Ազար 2 Երևանի Կոմիտասի անվան պետ. կոնսերվատորիայի քննական թերթը,
ԵՊԿԿ, «Պավել Լիսիցյանի անձնական գործերի» դիվան № 376 (անտիպ):

Экстерн

Կոմիտասի անվան երեւանի Պետ. Կոնսերվատորիա
Ереванская Государственная Консерватория им. Комитаса

ԲՆՆՈՒՄՆԵՐԹ

Экзаменационный лист

Ֆակուլտետ Վոկալ երգչի Կուրս 5
 Դասիցի Ասույան Լուսինա Դասիչ Սարգսյան Լուսինա
 Դիսցիպլինա Վոկալ Մանկավարժ Սարգսյան Լուսինա
 Հանձնաժողովի անդամ Կարապետյան
 Комиссия

Ամսաթիվ
Дата 196 թ.

№	Ազգանուն, անուն Фамилия и имя	Ծրագրի կատարում կամ հարցեր Исполнение программы или вопросы	Քանակա- կան Оценка	Քննողի ստորագրությունը Имя [экзаменатора]
1.	Մսր. ԿՐԵՍ		Օտար	Արմ.
2.	Սարգսյան Լուսինա		Օտար	Ս. Երզ.
3.	Զառմա		Օտար	Ա. Սարգսյան
4.	Մսր. Մսր.		Օտար	Ա. Սարգսյան
5.	Զառմա		Օտար	Ա. Սարգսյան
6.	Վարդանյան		Օտար	Կ. Արմ.
7.	Սարգսյան		Օտար	Կ. Արմ.
8.	Կարապետյան Սարգսյան		Օտար	Կ. Արմ.
9.	Մսր. Վարդ. Մսր.		Օտար	Ա. Արմ.
10.	Մսր. Վարդ. Մսր. և Մսր. Մսր.		Օտար	Կ. Արմ.
11.	Մսր. Սարգ. Մսր.		Օտար	Ա. Արմ.
12.	Մսր. Արմ. Մսր.		Օտար	Ա. Արմ.
13.	Մսր. Վարդ. Մսր.		Օտար	Կ. Արմ.
14.	Օբյե. Գ-Մ.		Օտար	Կ. Արմ.

Հանձնաժողովի անդամներ
 Члены комиссии:
 Զյու. Գյու.
 Կ. Ե. Մ. Վրտանյան
 580

Նկար 3 Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Մեներգեցողության ֆակուլտետի Պետական քննական հանձնաժողովի արձանագրությունը, ԵՊԿԿ, «Պավել Լիսիցյանի անձնական գործերի» դիվան N° 376 (անտիպ):

ПРОТОКОЛ №

Заседания Государственной экзаменационной комиссии факультета
Сольского пения. Ереванской Государственной консерватории
 имени Комитаса в составе Председателя профессора А.Г.ТЕР-ГЕВОНДЯНА и
 членов: *Л. М. Саряна, К. В. Мелик-Вртаняна, П.
 К. Шахназарян, А. А. Карамян и Н. М. Ованесяна.*

СЛУШАЛИ: Гос. экзамен по специальности *сольское пение*.
 Экстернат *Л. И. Сициана. Тогося
 . Каранејовича* . . . /программы
 и билеты прилагаются/

ПОСТАНОВИЛИ:

1. Аттестовать.

Комиссия Экстернат	Проф. А. Г. ТЕР- ГЕВОНДЯН	Ст. пр. Л. М. Сарян	Ст. пр. К. В. Мелик- Вртанян	И. о. проф. П. К. Шахна- зарян	Ст. пр. А. А. Карамян	Ст. пр. Н. М. Ованесян	Общая оцен.
1. <i>Лисицян Тогося Каранејович</i>		5	5	5	5	5	Отлично
<i>Подпись:</i>	<i>А. Г. Тер-Гевондян</i>	<i>Л. М. Сарян</i>	<i>К. В. Мелик-Вртанян</i>	<i>П. К. Шахназарян</i>	<i>А. А. Карамян</i>	<i>Н. М. Ованесян</i>	<i>Л. И. Сициана</i>

2. Присвоить квалификацию.

1. . . . *Первый пеленг*

2. _____

" 6 " декабря 1960 г.

ПРЕДСЕДАТЕЛЬ ГЭК: *А. Г. Тер-Гевондян* /ПРОФ. ТЕР-ГЕВОНД

Նկար 4 Պավել Լիսիցյանի նամակը իր քույրիկ Ռուզաննային, 1981թ.,
 Պ. Լիսիցյանի զարմուհի Ռուզաննա Հախնազարովայի անձնական արխիվ, (անտիպ):

афишага мое Тоти любил.
Как это будет организовано
трудно сказать, для этого
необходимо режиссерское, ин-
тересное решение. В Тбилиси
видимо будет сразу после Эревана.
Много работаю в Большом театре
и в Люксовской филармонии.
Губернатор себя вполне приятно.
Иногда пишу братику. Привет от всех
наших. Крепко целую твои братиш.

Дорогая моя сестричка!
Посылаю тебе статью в газете
Большого театра "Советский артист".
У тебя ведь архив, который пока
пополняется и надеюсь будет
пополняться. Дома все хорошо,
все здорово, дети часто разлетаются
по разным городам Союза.
Сядь по велию с 10 по 5-6 марта
будем в Эреване где будем

Նկար 5 Պավել Լիսիցյանի «Աստեղային փաստաթուղթը», Պ. Լիսիցյանի գարնուկի Վարդանյան Լիլիայի անձնական արխիվից, (անտիպ):

Star Deed

EcoPlanet - Star Deed
P.O. Box 1491
Glendora, CA 91740

PAVEL G. LISSITSIAN

December 28, 2001

Dear Jubilee:

Hereby we certify that the newly opened star residing within the boundaries of the constellation of **Lyra** was named in your honor, **Pavel Lissitsian**. The official record is listed in The Millennium Chronicle, internationally acknowledged star registry, and verified by the Smithsonian Astrophysical Observatory in Cambridge, Massachusetts.


The star has been registered at the bequest of those who care about you very much. They wanted to show how special you are with a distinctive celestial gift. This unique and thoughtful present is an eternal flame that will shine in the heavens. May the warmth of its light fill your kind heart for many, many years to come!

Дорогой наш Учитель!

*Будьте всегда с нами, и пусть свет
Вашей Звезды, как и Ваш Голос,
открывает людям путь к счастью!*

*С любовью, восхищением и
преклонением от учеников*

28 декабря 2001 года



Millennium Chronicle Registrar

Եղբորս և Բաբույի ընդհանուր արքունիքի համար, որը, որը մեր զեյթունն է!!!

Նկար 6 [1] Պավել Լիսիցյանի նամակը իր քույրիկ՝ Ռուզաննային, 9.IV.1973թ.,
Պ. Լիսիցյանի գարնուհի Ռուզաննա Հախնազարովայի անձնական արխիվ, (անտիպ)

Дорогая моя любимая сестричка! 9.IV
Давно не писал тебе писем и ознакоми-
тев тебя разговорами по телефону
Юанпей и моих подопечных зятя
ка Тайк и Мингана ваят в деревен
и в попроси их привести тебе
маленькую посылку с тешисом.
Так же посыл тебе 1.000 рублей на
расходы. Я знаю как трудно вам
жить в деревне. Эти два брата
обладают огромными возможностями и
они получают от Армении сотни
тысячи моего имени по долгу.
Братцы мои в Москве в институте
и мои знакомых в классе зятя
друзья Артура Эйзеня, а я
сестры резервно за их расходы.
Это замечательная семья и я
очень рад, что могу им помочь.
Сестра моя Мария чувствует
себя лучше, но страдает давай
о себе знать, особенно утрака.
Я соображаю в школе поехать в Швей
цария. Необходимо в деревне уехать
было бы вклад в Рижско-Швейцарском
банк на наше имя. Все в порядке

Նկար 7 [2] Պավել Լիսիցյանի նամակը իր քույրիկ՝ Ռուզաննային, 9.IV.1973թ.,
Պ. Լիսիցյանի գարնուհի Ռուզաննա Հախնազարովայի անձնական արխիվ, (անտիպ):

Там Аггар и Тродат, кагарыли более
волеу и всеи возможно с помощью
помощи найти банк, который был
во Владикавказе в период с 1912 по
1918 год. Если возможно будешь мне
найти с помощью туристов эти
вклады, то мой поездка будет
не зря. Есть в Москве мои друзья
пытались навести справки по
поводу этих вкладов но без резуль-
тата и мне придется ехать в Железку
где живут мои кузены. Теперь
немного о моей семье. Мой дорогой
Тарек очень доволен, что уехал.
Он работает в мастерской у
художника по дизайну, а также
пишет статьи в русскую газету.
Посылаю тебе карикатуры с газете.
Рубин жрет документы на вояду в
Германию. Рузанда и Карена едут
в Астрахань на концерты. Вчера
Тоарек была в гостях у Рубинка.
Всем, всем приветы и поцелуи.
Марочка целует тебя крепко.
Обнимаю, целую твой братик.

Նկար 8 Նազելի Լիսիցյան, Նվիրված Պ. Լիսիցյանի հիշատակին, Պ. Լիսիցյանի զարմուհի՝ Լիլիա Ստեփանյանի անձնական արխիվ, (անտիպ)

ПАМЯТИ ПАВЛА ЛИСИЦИАНА

О Павле Герасимовиче ЛИСИЦИАНЕ, о его таланте, как артиста, его замечательном голосе много было сказано и еще не раз будет говориться.

Но я хочу сегодня от имени его родных и близких сказать несколько слов о нем, как о Человеке. Ему было свойственно исключительное качество – очень большое дружелюбное и внимательное отношение к людям. В некрологе, в газете «Известия» сказано, что тот, хоть один раз слышал его пение, тот никогда не забудет его замечательного голоса. К этому надо прибавить и то, что тот, кто хоть один раз встречался с ним, никогда не забудет его доброй улыбки и исключительного внимания к собеседнику.

Он был замечательным сыном, мужем, отцом и дедом. В его большой семье, где росли 4 его детей, всегда царила счастливая, мирная, заботливая атмосфера. Этому, конечно, во многом способствовала его жена – Догмара Александровна, которую он безмерно любил.

В чарующем голосе Павла Лисициана проявились, сказались эти его исключительные, личные качества.


Последнее время, когда он был уже очень слаб и не выходил из дому, он иногда по телефону пел мне – своей кузине – почти 100-летней Назели Степановне Лисициан – какую-нибудь армянскую народную песню.

Добрая память о кузине и дяде Павлике навсегда сохранится в наших сердцах – его родных и близких.

СПИ СПОКОЙНО, ДОРОГОЙ ДЯДЯ ПАВЛИК!!!

Н.С. Лисициан

Նկար 9 **S. Չոխաճյան, «Արշակ Երկրորդ» ազդագիր,**
ԳԱԹ, Թատերական բաժին, Ազդագիր №2553, (անտիպ):



Նկար 10 գրչանակար, անանուն հեղինակ,
Պ. Լիսիցյանի զարմուխի՝ Կարինա Հախնազարովայի անձնական արխիվ




Նկար 11 Պ. Լիսիցյանի դիմանակարը, Մ. Սարյան



Նկար 12 Պ. Լիսիցյանի դիմանկարը,

Պ. Լիսիցյանի զարմուռի՝ Կարինա Հախնազարովայի անձնական արխիվ:





*Благородный князь Елецкий.
Рис. Н. Соколова*